ԱՆՆԱ ԿԼԴԻԱՇՎԻԼԻ
ՆԻՆՈ ՂԱՂԱՆԻՁԵ

# ԱՐՎԵՍՏ

# 5

## Ուսուցչի գիրք



**Ընդհանուր կրթության ազգային նպատակները**

Վրաստանում ընդհանուր կրթության համակարգի նպատակը ազգային և համամարդկային արժեքներով օժտված, ազատ անձի ձևավորմանը նպաստող պայմանների ստեղծումն է: Միաժամանակ, կրթության համակարգը զարգացնում է երիտասարդի մտավոր և ֆիզիկական ունակությունները, տալիս է անհրաժեշտ գիտելիքներ, ամրապնդում առողջ կյանքի կարգը, ձևավորում աշակերտի լիբերալ և ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքացիական գիտակցությունն ու օգնում գիտակցել սեփական իրավունք-պարտականությունները ընտանիքի, հանրության ու պետության հանդեպ:

Վրաստանի ընդհանուր կրթության համակարգի շրջանակներում ձեռք բերած փորձը պետք է դեռահասին հնարավորություն տա.

ա) իմաստավորել երկրի շահերի, ավանդույթների և արժեքների հանդեպ սեփական պատասխանատվությունը,

բ) պահպանել ու պաշտպանել բնական միջավայրի պայմանները,

գ) արդյունավետ օգտագործել տեխնոլոգիական կամ ինտելեկտուալ այլ նվաճումներ, գտնել, մշակել ու վերլուծել ինֆորմացիան,

դ) ինքնուրույն ապրել և որոշումներ կայացնել,

ե) լինել ստեղծագործող, անձամբ ստեղծել արժեքներ՝ չբավարարվելով միայն գոյություն ունեցածով,

զ) անվերջ զարգացնել սեփական հնարավորությունները և հետաքրքրությունները և ողջ կյանքի ընթացքում կիրառել դրանք ինչպես երկրի ներսում, այնպես էլ սահմաններից դուրս,

է) հաղորդակցվել անհատների և խմբերի հետ,

ը) լինել օրինապահ, հանդուրժող քաղաքացի:

**Աննա Կլդիաշվիլի**
**Նինո Ղաղանիձե**

# ԱՐՎԵՍՏ

## V դասարան

Ուսուցչի գիրք

Երաշխավորված է Վրաստանի կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2018 թվականին

«Կլիո» հրատարակչություն

**Աննա Կլդիաշվիլի, Նինո Ղաղանիձե**

## Արվեստ

*V դասարան, Ուսուցչի գիրք*

**Խմբագիր՝** Նանա Կուպրաշվիլի
Թբիլիսիի գեղարվեստի պետական ակադեմիայի
պրոֆեսոր,
արվեստագիտության դոկտոր

**Նկարիչ՝** Թամար Ջաղելի

**Համակարգչային ձևավորումը՝**
Իրմա Լիպարտելիանի

**Թարգմանիչ՝** Մարինա Թորոսյան

**Հայերեն տեքստի խմբագիր՝**
Գայանե Բոստանջյան

© «Կլիո» հրատարակչություն, 2018
© Աննա Կլդիաշվիլի, Նինո Ղաղանիձե, 2018

Բոլոր իրավունքները պաշտպանված են
ISBN 978-9941-415-29-6

**ՍՊԸ «Կլիո հրատարակչություն»**
Աղմաշենեբելիի պողոտա, 181-2,
Թբիլիսի, 0112
Հեռ.՝ (+995 32) 234 04 30
E-mail: book@klio.ge
www.klio.ge

# Բովանդակություն

1. Դասագրքերի մատենաշարային հայեցակարգ ............................ 6
2. Ընդհանուր տեղեկություններ V դասարանի աշակերտի դասագրքի վերաբերյալ .................................................. 7
3. Կերպարվեստ և կիրառական արվեստ առարկայի V դասարանի չափորոշիչը .......................................... 18
4. Չափորոշչի արդյունքներին հասնելու և բովանդակության փոխկապակցման մատրիցա........................... 22
5. Ուսուցչի գրքի տեսություն ............................................................ 30
6. Առարկայի ուսուցման գործընթացում դեպի աշակերտը կողմնորոշված (կենտրոնացած) մոտեցումների, թիրախային տարիքի առանձնահատկությունները ...................... 31
7. Կրթական հատուկ կարիքներով աշակերտներ ............................ 36
8. Յուրահատուկ, առարկայական և ընդհանուր համապիտանի ունակություններ.................................................... 37
9. Դեպի աշակերտը կողմնորոշված ուսուցման հիմնական ռազմավարությունները, որոնց վրա հիմնվում է դասագիրքը .......................................................... 39
10. Կրթական ռեսուրսներ...................................................................... 46
11. Աշակերտի գնահատման սկզբունքները ...................................... 47
12. Ակտիվությունների անցկացման ընդհանուր հանձնարարականներ ...................................................................... 58
13. Աշակերտի գրքի գործնական մասը................................................. 57
14. Ուսուցչի գրքի եզրափակիչ մասը .................................................. 59
15. Ուսուցչի գրքի հետ կապված ցուցումներ...................................... 59
16. Դասերի հնարավոր սցենարներ..................................................... 60

# 1. Դասագրքերի մատենաշարային հայեցակարգ

«Կերպարվեստ և կիրառական արվեստ» դասագրքերի նախորդ մատենաշարն ընդգրկում է դպրոցի բազային աստիճանի I-VI դասարանների դասագրքերը: Այս մատենաշարը կոչված է աշակերտին ուղղորդել դեպի արվեստի աշխարհ, որի շնորհիվ նպաստել նրա՝ որպես ներդաշնակ մարդու և անհատականության ձևավորմանը:

Մատենաշարը հիմնված է երեք հիմնական սկզբունքի վրա.

1. Աշակերտին փոխանցել որոշակի տեսական գիտելիք արվեստի մասին:
2. Արթնացնել/զարգացնել աշակերտի ստեղծագործական ակտիվության ցանկությունը:
3. Մշակել աշակերտի գործնական ունակությունները:

Մատենաշարի հիմնական բնութագրիչը՝ «շարժումն» է պարզից դեպի բարդ, ըստ աշակերտի տարիքային առանձնահատկության: Այս հանգամանքով պայմանավորված, մատենաշարն այնպես է կազմված, որ I-VI դասարաններում հիմնական շեշտը դրված է գործնական-ստեղծագործական գործունեության մեջ աշակերտի ներգրավման վրա: Առարկայի ուսուցման այս փուլում, դասագրքերի գործնական հատվածը ենթադրում է տեխնիկական միջոցների լայն կիրառում և շարժունակության զարգացում ու կատարելագործում: Անշուշտ, ոչ պակաս կարևորություն է տրվում տեսական գիտելիքներին, կերպարվեստի և կիրառական արվեստի առանձին տարրերի և սկզբունքների ճանաչմանը ու արվեստի նմուշի հետ առնչվելու ցանկության խթանմանը, այն քննարկելու ունակությունների մշակմանը:

I-VI դասարանների դասագրքերում տեսական գիտելիքների բաժինն ընդլայնված է: Աշակերտները հնարավորություն ունեն ծանոթանալ տարբեր դարաշրջանների կամ երկրների արվեստի, գեղարվեստական հոսանքի կամ առանձին նկարիչների աշխատանքների, համաշխարհային արվեստի բազմաթիվ ուշագրավ աշխատանքների, հայտնի թանգարանների և դրանց գանձերի հետ: Դա ընդլայնում է նրանց մտահորիզոնը և նպաստում ինքնուրույն մտածելակերպի և տրամաբանական վերլուծության ձևավորմանը: Այս փուլում դեռ շարունակվում է գործնական ստեղծագործական հմտությունների զարգացումը՝ աշակերտի կողմից կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր նկարչական տեխնիկաների ու միջոցների յուրացման բնական և արհեստական տարաբնույթ ռեսուրսների ստեղծագործական կիրառման և այլ տեսանկյունից:

I-VI դասարանների մատենաշարը նպատակ ունի բացատրել աշակերտին, որ արվեստը աշխարհը ճանաչելու ճանապարհներից մեկն է, միաժամանակ, ինքնահաստատման և ինքնադրսևորման հիանալի հարթակ: Նաև այն, որ արվեստի միջոցով հնարավոր է փոխանցել դարերի ընթացքում մարդկության ձևավորած արժեքները, լայն պատկերացումներ կազմել աշխարհի վերաբերյալ՝ զարգացնելով աշխարհընկալումը:

# 2. Ընդհանուր տեղեկություններ V դասարանի աշակերտի դասագրքի վերաբերյալ

**(նպատակներ, կառուցվածք, բովանդակություն, մեթոդաբանություն, համալրում)**

### Նպատակներ

Առաջարկվող դասագիրքը նախատեսված է տարրական դպրոցի V դասարանի համար: Այն պատկերացում է տալիս տարբեր դարաշրջանների արվեստի մասին, սովորեցնում այս կամ այն գեղարվեստական հոսանքների յուրահատկությունները, փոխանցում կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր նկարչական տեխնիկաներն ու միջոցները, զարգացնում ստեղծագործության մեջ բնական և արհեստական տարաբնույթ ռեսուրսների կիրառման հմտությունները: Տարիքային առանձնահատկությամբ սահմանված տեսական և գործնական նյութերը նպաստում են աշակերտի բնատուր կարողությունների ստեղծագործական զարգացմանն ու արագ առաջընթացին:

### Ձեռնարկի կառուցվածքն ու բնութագիրը

Ձեռնարկը կազմված է Աշակերտի և Ուսուցչի գրքերից: Աշակերտի գիրքն ընդգրկում է 62 դաս, որոնք բաժանված են թեմատիկ 5 գլուխների: Առաջին գլխում 12 դաս է, երկրորդում՝ 13, երրորդում՝ 12, չորրորդում՝ 11, հինգերորդում՝ 13: Յուրաքանչյուր գլխի ավարտ եզրափակվում է Ուսուցչի գրքում առկա 5 ամփոփիչ դասով: Աշակերտի գիրքը սկսվում է բովանդակությամբ և դասի համակարգով՝ «Ինչպե՞ս օգտվենք գրքից» խորագրով, որտեղ մանրամասն բացատրվում է դասագրքում օգտագործված և կրկնվող կառուցվածքային տարրերի նշանակությունը: Գրքի վերջում կցված է «Դպրոցի բակ» նախագիծն ու բառարան:

Դասերից յուրաքանչյուրը սկսվում է համառոտ տեքստով, որտեղ աշակերտին մատչելի լեզվով շարադրվում է դասի թեման: Տեքստի կառուցվածքը միտված է նպաստել աշակերտի շարժունակությանն ու թեմայի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը: Փաստացիորեն, տեքստն ինքնին նոր հարց է առաջ քաշում, որի պատասխանը հնարավոր է գտնել հաջորդ դասում:

Այս կերպ, աշակերտն աստիճանաբար պատրաստվում է հասկացողության, իրադարձության կամ փաստի ճանաչմանը: Նոր նյութը նրան փուլ առ փուլ է ներկայացվում և դասի ընթացքում հնարավորություն ընձեռում ինքնուրույն եզրակացություններ անել, ուսումնասիրել ու հայտնաբերել օրինաչափությունը, օգտագործել առաջարկված միջոցները/տեխնիկան և գնահատել ստացած արդյունքը: Հաճախ նոր նյութն առնչվում է արդեն ծանոթ թեմաների, ինչը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ ստուգել, թե որքանով է յուրացրել աշակերտը անցած նյութը: Միաժամանակ տեսանելի է դառնում, թե ինչպես են փոխկապակցված արվեստի նմուշի բոլոր տարրերը (օրինակ՝ կոմպոզիցիան, գունային գրադացիան (աստիճանավորում), ֆակտուրան (մակատեսք) և այլն):

Դասագրքի կառուցվածքային տարրերից մեկը կարմիր գծավոր շրջանակն է (անկյունում հարցականի նշանով), որտեղ տրված են համապատասխան թեմայի և պատկերազարդումների հետ կապված կոնկրետ և ամենաարդիական հարցեր:

Ինտերակտիվ (համագործակցող) հարցերն ի տարբերություն նախորդ դասարանների դասագրքերի, տեղադրված են ոչ թե դասի վերջում, այլ հենց ընթացքում: Ուսուցչի գրքում տրված են բոլոր հարցերի պատասխաններն՝ առանց բացառության:

Դասի ընթացքում ուսուցչի կողմից ինտերակտիվ մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս ներգրավել յուրաքանչյուր աշակերտի, որն իր հերթին տեսական և թե գործնական նյութը պատշաճ յուրացնելու նախապայմանն է:

Ինտերակտիվ հարցերը աշակերտին սեփական կարծիքն արտահայտելու և քննարկելու հնարավորություն են տալիս: Օգնում են, որպեսզի աշակերտն առավել իմաստավորի դասագրքում և աշխատանքային տետրում ներկայացված նկարները, կարողանա փոխանցել դիտարկելու արդյունքում ստեղծված իր տրամադրությունը՝ սեփական եզրահանգումներով:

Տարրերից մյուսը՝ կապույտ շրջանակն (անկյունում գրքի պատկերով) է, որ մատնանշում է բառարան և, որտեղ տրված են նոր տերմինների բացատրությունները: Այս նշանը միայն այնտեղ է հանդիպում, ուր նոր տերմին է ներկայացվում:

Դասարանում կատարվելիք առաջադրանքը ներկայացվում է տեքստով, ինչպես նաև որոշիչ այն հարցերը, որոնք օգնում են աշակերտին համադրել նկարներն ու դասի թեման:

Տեքստերի ծավալը համապատասխանում է V դասարանի աշակերտի տարիքին, դրանք մատչելի և դյուրընկալելի են:

Տեքստերի և նկարների հարաբերակցումը տեսանելի է յուրաքանչյուր դասում: Յուրաքանչյուր թեման ունի համապատասխան իր պատկերազարդումը, որ հատուկ է ընտրված և կոնկրետ նպատակի է ծառայում:

Դասագրքի պատկերազարդ նյութերն ընտրված են մի քանի չափանիշի համաձայն.

1. Նմուշի առավելագույն տիպականությունը քննարկվող թեմայի հետ:
2. Նյութի բազմերանգություն (կիրառված են ինչպես գունային վերարտադրություններ, այնպես էլ նույն տարիքի աշակերտների աշխատանքներ):

V դասարանի դասագրքում ավելացել է արվեստի դասական նմուշների մասը, որպեսզի աշակերտը ծանոթանա արվեստի իսկական (կատարյալ) նմուշներին, դրանք ընկալի և քննարկի տարիքին համապատասխան:

V դասարանի աշակերտի համար դասագիրքը մատչելի ու հստակ կառուցվածք ունի: Հատկանշական է, որ հնարները պարբերական են, այսինքն կրկնվում են յուրաքանչյուր դասի կառուցվածքում՝ ներկայացվելով նույն տեղում, որպեսզի տարիքային այդ կարգի աշակերտը հեշտությամբ, առանց ուսուցչի օգնության կարողանա կողմնորոշվել գրքում:

Գործնական առաջադրանքը հստակ շարադրված է դեղին շրջանակի մեջ՝ մատնանշված հատուկ նշաններով: Առաջադրանքի տեքստը հակիրճ և հնարավորինս դյուրըմբռնելի է: Առաջադրանքները տարբեր են, ըստ բարդության աստիճանի: Ձևաչափի ընտրությունը հնարավորութուն է տալիս, որպեսզի աշակերտը մշակի տարբեր ռազմավարություններ՝ միանձնյա, զույգային կամ խմբային աշխատանքի ունակությունները հղկելու համար: Տիպային դասերի նմուշային սցենարներում տրված են օրինակներ, թե ինչպես են կատարվում նման առաջադրանքները, դասի կոնկրետ ո՞ր հատվածում է նպատակահարմար կատարել առաջադրանքը և որքա՞ն ժամանակ է տրվում դրան: Իսկ նախքան ինքնուրույն աշխատանքին անցնելը, մանրամասն տրված են ինչպես ստեղծագործական գործընթացի (օրինակ՝ կոնկրետ նկարչական տեխնիկայի կամ ընթացակարգի), այնպես էլ աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոնների պահպանման հետ կապված խորհուրդներ:

Պայմանականորեն առաջադրանքները կարող ենք բաժանել մի քանի խմբերի.

1. Առաջադրանք, որը ենթադրում է հիմնական թեմայի գործնական կիրառում և ամրապնդում է աշակերտի տեսական գիտելիքը:
2. Առաջադրանք, որն իրականացնելու համար աշակերտը կիրառում է ոչ միայն նոր, այլև արդեն անցած նյութը (տեխնիկա, միջոցներ, տարրեր և այլն):
3. Առաջադրանք, որն իրականացնելու համար աշակերտը տեղեկությունների հայթայթման տարբեր ճանապարհներ է փնտրում (աշակերտի աշխատանքային տետրում որոնվող նյութի պարտադիր նվազագույնը ներկայացված է նկարների տեսքով, իսկ ուսուցչի գրքում գրառված են բոլորին հասանելի կայքէջերը): Այդ թվում են՝ դպրոցի կամ տան գրադարանում ձեռք բերված հրապարակումներն ու նկարազարդ նյութերը, համացանցից ներբեռնած տեղեկությունները և այլն:
4. Առաջադրանք, որը ենթադրում է ձեռք բերված նյութի տեսակավորում և ցուցադրում (օրինակ՝ պահանջված թեմայով տեղեկատվական ստենդ): Նման առաջադրանքն իրականացնելու համար տեղեկությունների և նյութերի ձեռքբերման հմտությանը զուգահեռ

(օրինակ. կոնկրետ արվեստագետի կենսագրությունն ու նրա աշխատանքները, հուշարձանի պատմությունն ու լուսանկարները) զարգանում են նաև աշակերտի աշխատանքային հասարակ հմտությունները (ստենդի ստեղծում):

5. Առաջադրանք, որը ենթադրում է ստեղծված աշխատանքի կամ ձեռք բերված տեղեկության/նյութի շնորհանդես: Այս պարագայում, զարգանում է աշակերտի կողմից արվեստի գործերը գնահատելու և մեկնաբանելու, նաև սեփական աշխատանքը ներկայացնելու, սեփական մտքերը փաստարկելու կարողությունը:

Առաջադրանքի մի մասը կատարվում է տանը, կամ սկսվում դասի ընթացքում և շարունակվում տանը: Նման դեպքերում ուսուցիչն ինքն է ծրագրում, թե կատարած առաջադրանքը ե՞րբ է ներկայացվելու դասարանում, որին տրամադրում է ազատ աշխատանքին հատկացվող ժամանակը:

Աշակերտի դասագրքի յուրաքանչյուր դասի տեքստ, պարկերազարդ նյութ, ինտերակտիվ հարց և առաջադրանք նպատակ է հետանդում հնարավորության սահմաններում դյուրացնել աշակերտի տեսական և գործնական անծանոթ նյութի ընկալումը: Դասի ընթացքը ենթադրում է նյութի յուրացման մի քանի փուլ, մասնավորապես, հասանելիություն, վարժանք, տիրապետում: Դասը ծրագրվում է հենց այս փուլերի հերթափոխով:

Աշակերտի ակտիվության արդյունքում ստեղծված աշխատանքները, տեղեկատվական ցուցատախտակը և դեկորատիվ պանոները, անշուշտ կկիրառվեն դասասենյակը, դպրոցը, բակը կամ սեփական բնակարանը զարդարելու նպատակով նաև: Ուստարվա ընթացքում սերտած հնարքի, տեխնիկայի կամ սկզբունքի կիրառումը կօգնի նրանց իրական կյանքում հանդիպող տարբեր խնդիրներ լուծման մեջ:

Յուրաքանչյուր գլխի ավարտին հանդիպող ամփոփիչ դասերի գերակշիռ մասը վարժություններ են, որոնք պարունակում են աշակերտի կողմից տեսական գիտելիքի ստուգման թեստային աշխատանքներ և տերմինների յուրացումը ստուգելու ամփոփիչ թեստեր: Այս վարժությունները զետեղված են Ուսուցչի գրքի վերջում: Սա ուսուցչին հնարավորություն է տալիս ստուգել, թե ինչպե՞ս է յուրացրել աշակերտն անցած նյութը, որքանո՞վ է հասկացել դասագրքի տվյալ հատվածում ներառած տերմինների կամ հասկացության բովանդակությունը: Ուսուցիչն անձամբ կարող է նման բնույթի թեստեր կազմել՝ հավելելով գրքում առկա մյուսներին: Բացի այդ, ամփոփիչ դասն ընդգրկում  է նաև գործնական առաջադրանքներ, որոնք կատարելու համար աշակերտը ստիպված է կիրառել բոլոր այն նյութերը, տեխնիկական միջոցները կամ մեթոդները, որոնք դասագրքի տվյալ հատվածում է սովորել: Այսկերպ ուսուցիչը հնարավորություն է ստանում ստուգել, թե որքանո՞վ են մշակվել աշակերտի այն ունակությունները, որոնց մշակումը ենթադրում էր դասագրքի տվյալ հատվածը:

Ուսուցչի գրքում առկա է նաև ինքնագնահատման հարցաթերթիկ («Գիտելիքների սնդուկ»), որն աշակերտները պարբերաբար լրացնում են ուսուցչի ցուցմունքով և, որը սեփական գիտելիքներն ինքնուրույն գնահատելու և ինքնագնահատման ունակությունը հղկելու հնարավորություն է տալիս:

Դասագրքի թեմաների մեծ մասը հնարավոր է սպառել մեկ դասի ընթացքում, մյուսը՝ բաժանել երկու մասի: Ուսուցիչն իրավասու է անձամբ սահմանել թեմայի բաժանումը:

### Բովանդակություն

Բովանդակությունը համապատասխանում է չափորոշչին և պարունակում բոլոր այն թեմաները, կերպարվեստի և կիրառական արվեստի տարրերն ու սկզբունքները, որոնք նախատեսված են տարիքային տվյալ խմբի համար:

Առաջին գլուխը կոմպոզիցիայի բովանդակության, դրա տեսակների, նկարի հարթության վրա պատկերների բաշխման և միջոցների մասին է: Այսինքն տվյալ գլխում աշակերտները կստանան տեսական գիտելիքներ նկարի կոմպոզիցիա ստեղծելու սկզբունքների մասին, նաև կմշակեն գործնական հմտություններ, որոնք լիովին համապատասխանում են չափորոշչի առաջին և երկրորդ

կետերին: Առաջին գլխում խոսվում է նաև տարածության փոխանցման և տարբեր ֆակտուրաներ ստանալու հնարքների ու դրանց գործնական կիրառման մասին, ինչը նույնպես սահմանված է չափորոշիչով:

Երկրորդ գլխում արծարծվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատանքի նշանակությունը, պատկերներն ու շրջակա միջավայրը (բազմապատկեր կոմպոզիցիա ստեղծելու միջոցներ), գրական ստեղծագործության առասպելական սյուժեն նկարի վերածելը և այլն: Ինչպես նաև, բազմաթիվ գործնական առաջադրանքներ, որոնք նպաստելու են աշակերտների մոտ կառուցվածքներ ստեղծելու, տարբեր նյութերով նկարելու և ապլիկացիա ստանալու հմտությունների զարգացմանը:

Երրորդ գլխում տրված են չափորոշիչով նախատեսված այնպիսի հարցեր, ինչպիսիք են դինամիկան և ռիթմը, գծանկարչությունը և արվեստի նմուշի քննարկումը համատեքստում (երկիր, դարաշրջան): Այս գլխում աշակերտները կծանոթանան նաև գեղանկարչական դիմանկարների ստեղծման յուրահատկությանը, կմշակեն ամանորյա տոն կազմակերպելու ավանդույթը և այլն:

Չորրորդ գլուխը նվիրված է տարբեր առարկաների համամասնական փոխկախվածության ուսումնասիրությանը: Աշակերտի մոտ կմշակվի մանրամասները դիտարկելու, նատյուրմորտի ստեղծման ընթացքում համամասնական հարաբերակցության պահպանման հմտություն: Աշակերտները կծանոթանան նաև մարտական ժանրին և կմշակեն աշխատանքից ստացած տպավորություններով կիսվելու կարողություն: Հինգերորդ գլխում աշակերտները կծանոթանան գունային գրադացիային (աստիճանավորում) և այն կիրառելով կսովորեն փոխանցել առարկայի ծավալը սեփական աշխատանքներում: Կաշխատեն տարբեր նյութերով՝ կավ, գործվածք, ջրաներկ:

Յուրաքանչյուր գլխում ընդգրկված է «Ամենն իմ հայրենիքն է» խորագրով դասը, որտեղ քննարկված են Վրաստանի տարբեր անկյունների ճարտարապետական հուշարձանները կամ այլ տեսարժան վայրերը:

Գրքի վերջում կցված է «Դպրոցի բակը» նախագիծը, որը ենթադրում է աշակերտների կողմից ստեղծել դպրոցի բակի ձևավորման հայեցակարգ ու իրականացնել այն սեփական ձեռքով:

Ամենավերջում գրքի բառարանն է:

Որոշ դասերի ընթացքը անհատական առաջադրանքներ է ենթադրում, մյուսները՝ խմբային: Սա զարգացնում է աշակերտի համագործակցելու կարողությունը, որը լիովին համապատասխանում է չափարոշչի երրորդ կետին:

Դասերի մեծամասնությունը պարունակում է դասի թեմային առնչվող անվանի նկարչի աշխատանքներ, որոնց վերլուծությունը առավել ըմբռնելի է դարձնում աշակերտի կողմից արվեստի ընկալումը (չափորոշչի հինգերորդ կետ):

Գրեթե բոլոր դասերին աշակերտները սեփական աշխատանքների շնորհանդես են կազմակերպում կամ մեկնաբանում դասընկերների աշխատանքները, ինչը շնորհանդեսի անցկացման ունակություններ է ձևավորում՝ համաձայն չափորոշչի երրորդ կետի:

### Մեթոդաբանություն

Կերպարվեստ և կիրառական արվեստ առարկայի յուրահատկությունից ելնելով, դասագիրքը պարունակում է ուսում-ուսուցման մեթոդների ամբողջություն, մասնավորապես նախնական գիտելիքի հատկորոշման, պարզաբանում-բացատրության, մտավոր գրոհի և վերլուծության, քննարկման, դեբատների և խմբային աշխատանքի, ցուցադրման և համեմատության մեթոդներ:

Բոլոր դասերում տրված է մի քանի ինտերակտիվ հարց, որոնք աշակերտին սեփական մտքերն արտահայտելու, իսկ ուսուցչին՝ բանավեճի կամ աշակերտի կողմից քննարկում ծավալելու ուղղությունը մատնանշելու հնարավորություն են տալիս:

Ստորև առաջարկում ենք ուսում/ուսուցման մի քանի հայտնի մեթոդ, որոնց կիրառումը հնարավոր է բոլոր դասերի ընթացքում, նախատեսելով դասարանի աշակերտների թիվն ու պահանջները:

## Կերպարվեստի և կիրառական արվեստի դասին կիրառելի մեթոդաբանություն

### «Դիագրամ»

Այս մեթոդը աշակերտին հնարավորություն է տալիս միմյանց հակադրել և տեսակավորել քննարկվող հարցերն ու ինֆորմացիան: Օրինակ՝ դրական և բացասական: Մեծ ձևաչափի թղթի/գրատախտակի վրա գծվում է դիագրամ, դեռ լրացվում է սխեմայի ձախ կողմը, այնուհետև աջ կողմում գրվում են հակառակ կարծիքները:

### «Խճանկար»

Ուսուցիչը մեծ թեման բաժանում է խմբերի միջև: Աշակերտները պատրաստում են թեման, խմբերն առանձին-առանձին ներկայացնում են այն: Այնուհետև ամբողջացնում և քննարկում են թեման բազմաթիվ տեսանկյուններից: Օրինակ՝ Հին Եգիպտոսի արվեստը քննարկելիս ուսուցիչը մի խմբին հանձնարարում է ուսումնասիրել (քննարկել) եգիպտական ճարտարապետությունը, երկրորդ խումբը պետք է քննարկի եգիպտական քանդակագործությունը, երրորդ խումբը՝ որմնանկարչությունը: Խմբերը ներկայացնում են Հին Եգիպտոսի արվեստի տարբեր հատվածներ, բայց ամբողջը գումարելով ստեղծվում է հին եգիպտական արվեստի համայնապատկերը:

### «Շրջանակ»

Մեծածավալ թղթի վրա տարբեր նյութերի և տեխնիկայի կիրառմամբ աշակերտը ստեղծում է ֆոներ, օգտագործում տարբեր ֆակտուրաներ (հնարավոր է լինեն տարբեր տեսակի գծեր, երկրաչափական մարմիններ), թաց ներկի վրա կիրառում վրձնի կոթը, ատամի խոզանակի կիրառմամբ ցփնում ներկը, էֆեկտ ստեղծելու նպատակով կիրառում ներկի մեջ թաթախված սպունգը: Այս աշխատանքի համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո (ժամանակը վերահսկում է ուսուցիչը) յուրաքանչյուր աշակերտ մեծածավալ թուղթը փոխանցում է իրենից ձախ գտնվող համադասարանցուն, ով նույնպես աշխատում է վրան (կարող են ստեղծել որևէ կոնկրետ պատկեր, աշակերտներն իրենք են ընտրում պատկերները): Սահմանված ժամանակի ավարտին, թուղթը կրկին փոխանցվում է ձախ կողմում գտնվող մյուս համադասարանցուն: Այս ակտիվությունը շարունակվում է այնքան, մինչև աշխատանքը չի վերադառնում առաջին հեղինակին: (Ցանկալի է, որ սկսելուց առաջ աշակերտը մեծածավալ ձևաչափի անկյունում գրի իր անունը): Աշակերտին վերադառնում է աշխատանքը, որի վրա աշխատել են նաև այլ աշակերտներ և ավելացրել գույներ, պատկերներ: Աշակերտը շարունակում է աշխատել սեփական աշխատանքի վրա: Հնարավոր է նաև գործընթացն այլ կերպ կազմակերպել. աշակերտները միայն ֆոն ստեղծեն և ոչ պատկերներ և, երբ մեծ չափի թուղթը առաջին հեղինակին վերադառնա, նա պատրաստի ֆոնի վրա ստեղծի պատկեր (բնանկար, նատյուրմորտ և այլն):

### «Ռաֆտի մեթոդ»

Այն օգտագործվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքում: Դասի/դասերի նպատակից ելնելով ընտրում ենք թեման: Գրատախտակին/ձևաչափի վրա արտացոլված է Ռաֆտի աղյուսակը: Մտավոր գրոհի մեթոդով աշակերտները անվանում են հավանական դերերը, ուսուցիչը բարձրաձայնած դերերը գրում է առաջին սյունակում: Ապա դարձյալ մտավոր գրոհի մեթոդով աշակերտները պետք է բացահայտեն այն հավանական խմբերը կամ մարդկանց, ում կարող են դիմել: Ուսուցիչը լրացնում է երկրորդ սյունակը: Այնուհետև, մտավոր գրոհի մեթոդով տեղի է ունենում հավանական հիմնագաղափարների արտահայտում և ուսուցիչը լրացնում է երրորդ սյունակը: Չորրորդ սյունակը լրացվում է ըստ նրա, թե ինչ հնարավոր ձև կամ ժանր են օգտագործելու աշակերտները թեման գրելիս (մտավոր գրոհի մեթոդով պետք է դրսևորվի ժանրը և ձևը՝ մենախոսություն, երկխոսություն): Ուսուցիչը ընթերցում է լրացված սխեման, այնուհետև խմբերում բաժանում է աշակերտների կողմից թվարկած դերերը, ձևը և հավանական հասցեատիրոջը: Ուսուցիչը հանձնարարում է աշակերտին օգտագործել երևակայությունն ու

պատկերավորությունը և կիրառել այս կամ այն դարաշրջանի կամ հոսանքի վերաբերյալ ունեցած գիտելիքը:

15-20 րոպեների ընթացքում խմբերն աշխատում են, որից հետո ներկայանում լսարանի առաջ: Հնարավոր է այս մեթոդն օգտագործենք այլ կերպ՝ խմբի անդամներից յուրաքանչյուրը գրում է նշված թեման (ժամանակացույցը՝ 10 րոպե), հետո խմբում քննարկվում են թեմաներ, աշակերտներն ընտրում են ըստ իրենց լավագույնն ու կատարելագործում այն: Ապա ներկայացնում դա լսարանին:

Ներկայացնում ենք այս մեթոդի համապատասխան տարբերակը, որը ստեղծված է հատուկ կերպարվեստի և կիրառական արվեստի համար:

Աշակերտներն անցել են Հին Եգիպտոսի արվեստը (մի քանի դաս տրամադրել են այդ թեմային), ուսուցիչն օգտագործում է Ռաֆտի մեթոդը և խնդրում աշակերտներին Հին Եգիպտոսից դերեր ընտրել (ժամանակաշրջանը անվանում են իրենք՝ հին թագավորության դարաշրջան, միջին թագավորություն, նոր թագավորություն, նորագույն թագավորություն): Աշակերտները թվարկում են ենթադրյալ դերերը, և ուսուցիչը լրացնում է Ռաֆտի սխեմայի առաջին սյունակը: Այնուհետև, լրացնում է երկրորդ սյունակը, որտեղ գրվում է, թե ում կարող են դիմել ենթադրվող կերպարները: Երրորդ սյունակում գրվում են ենթադրվող հիմնական գաղափարները և ուսուցիչը լրացնում է չորրորդ սյունակը, որտեղ նշվում է դիմելաձևը: Աշակերտներն իրենք են ընտրում տրված աղյուսակներից մեկը և աշխատում անհատական կերպով: Ուսուցիչը հանձնարարում է կիրառել պատկերավորությունն ու երևակայությունը և այն գիտելիքները, որոնք ստացել են տվյալ երկրի մասին: Աշակերտները պետք է ստեղծեն թեմային առնչվող մեկ կամ մի քանի պատկերազարդում: (Գծանկարչական) աշխատանքի ավարտից հետո աշակերտները լսարանին են ներկայացնում թեմաները: Շնորհանդեսները կարելի է ներկայացնել հաջորդ դասի ընթացքում, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա ներկայացնել սեփական աշխատանքը, և աշակերտները կարողանան քննարկել այն: Հնարավոր է նաև, որ յուրաքանչյուր թեմայից հետո քննարկումներն իրականացվեն գրավոր կերպով՝ անանուն (3 րոպե) և ուսուցիչը բարձրաձայն ընթերցի կարծիքները: Նախքան գրելը ուսուցիչն աշակերտներին խնդրում է, որ իրենց կարծիքները ներկայացնեն վայելուչ կերպով:

Դասը հնարավոր է անցկացնել նաև այլ կերպ՝ աշակերտները թվարկում են ենթադրվող դերերը (նրանք պետք է ընտրեն դերեր Հին Եգիպտոսից), և ուսուցիչը լրացնում է Ռաֆտի սխեմայի առաջին սյունակը: Այնուհետև լրացնում է երկրորդ սյունակը, որտեղ գրում է, թե ում կարող են դիմել ենթադրվող կերպարները, երրորդ սյունակում գրվում են ենթադրվող գաղափարները և ուսուցիչը լրացնում է չորրորդ սյունակը, որտեղ նշվում է դիմելաձևը: Քննարկումից հետո բացահայտվում է (ամենահաճախ հնչած) դերը, որի շուրջ և սկսում են աշխատել աշակերտները: Ավարտելուն պես աշակերտները ներկայացնում են սեփական աշխատանքները: Այս մեթոդը նպաստում է նույն դերի տարբեր մեկնաբանությանը:

### «Նախագիծ»

Նախագծի վրա աշխատանքը պահանջում է ստեղծագործական ունակություն, նպաստում է կուտակած գիտելիքի կյանքի կոչմանն ու զարգացնում այդ գիտելիքը հաջորդականության մեջ իրար կապելու և համակողմանիորեն մտածելու ունակությունը: Նախագծի թեման ընտրելու համար պետք է ընտրվի խնդրահարույց հարց: Նախագծի վրա աշխատելը զարգացնում է աշակերտների.

- խնդրի վերլուծության հմտությունները,
- նպատակների համապատասխան խնդրի նախանշման հմտությունները,
- խնդիրը լուծելու նպատակով համապատասխան գործողություններ ծրագրելու և համապատասխան ռեսուրսներ ձեռք բերելու հմտությունները,
- գիտելիքը ստեղծագործականորեն կիրառելու հմտությունները,
- փոխհամագործակցության հմտությունները,
- ժամանակի բաշխման և գնահատման հմտությունները:

## Նախագիծը կազմելու սխեմա

1. **Խնդրի վերլուծություն** - ենթադրում է իրավիճակի վերլուծություն,
2. **Խնդրի սահմանում** - ենթադրում է այն խնդրի սահմանումը, որի պատասխան՝ ծրագրվում է նախագիծը,
3. **Նպատակ** - հակիրճ ձևավորած կարծիք, թե նախագիծն ինչ նպատակ է հետապնդում (խնդրի լուծում),
4. **Խնդիրներ** - կոնկրետ քայլեր, որոնք կարվեն նպատակին հասնելու համար,
5. **Իրականացման ուղիներ** – գործընթաց, որ պետք է պատասխանի հարցերին՝ ինչպե՞ս, ո՞վ,
6. **Ցանկ,** որն աշխատանքային ծրագիրն է՝ ժամանակով սահմանված,
7. **Ռեսուրսներ (բյուջե)** - այն ռեսուրսների ցանկը, որոնց օգնությամբ պետք է իրականանա նախագիծը,
8. **Արդյունքներ** - ամեն խնդրի լուծումից հետո ստանում ենք կոնկրետ արդյունք, որը բաշխվում է ըստ քանակական ցուցանիշների,
9. **Գնահատում** - չափանիշների ցանկ, որը մշակվում է ուսուցչի և աշակերտների կողմից՝ համատեղ:

## Զույգերով աշխատանք

Աշխատանքի այս ձևն անվանում են նաև այլ կերպ՝ մտածում ենք - զույգ ենք կազմում – հաղորդում ենք: Անցկացման փուլերն են՝

Առաջին փուլ (մտածում ենք)՝ յուրաքանչյուր աշակերտ իրականացնում է անհատականորեն: Օրինակ՝ իրականացվելիք գործնական աշխատանքի համար, որտեղ կիրառելով նկարչության և ապլիկացիայի տեխնիկան միասնաբար ստեղծվելու է ապլիկացիա սառը և տաք գույներից (սառը և տաքը միասին), աշակերտները պետք է նշեն իրենց գաղափարները:

Երկրորդ փուլ՝ այս փուլում զույգ կազմած աշակերտները միմյանց փոխանցում են իրենց գաղափարները, համաձայնության գալիս են ընդհանուր տարբերակի շուրջ: Ամեն ինչ իրականացվում է ժամանակաչափը և գիտակարգը պահպանելով և համակարգվում է ուսուցչի կողմից: Աշակերտները բաշխում են դերերը: Օրինակ՝ աշակերտներից մեկը ստեղծում է շրջանակ կամ որևէ պատկեր կիրառելով սառը գույները, մյուսը՝ տաք գույները:

Երրորդ փուլ՝ աշակերտները պահպանելով կոմպոզիցիոն բաշխման սկզբունքը, պատրաստած հատվածները բաշխում են մեկ ընդհանուր ձևաչափի վրա: Զույգերը ներկայացնում են ընդհանուր աշխատանքն ու խոսում դրա մասին:

## Խմբային աշխատանք

Խմբային աշխատանքը պետք է համապատասխանի դասի նպատակներին: Այն նպաստում է աշակերտների համագործակցության և սոցիալականացման ունակությունների զարգացմանը: Աշակերտները սովորում են հաշվի առնել ուրիշի կարծիքը և գիտակցել, որ բոլորն ունեն թույլ և ուժեղ կողմեր: Խմբով աշխատելիս հարկավոր է, որ ուսուցիչը հստակ հրահանգներ տա աշակերտներին:

Օրինակ՝ աշակերտները ստեղծում են քաղաքի կառուցվածք, կիրառում են տարբեր նյութեր (տարբեր չափի ստվարաթուղթ, պլաստմասսայե կամ երկաթե տուփեր, իրենք են ստեղծում կառուցվածքներ ստվարաթղթից), պայմանավորվում են, թե ինչպիսի տեսք կունենա վերջնական աշխատանքը, բաշխում են դերերը կամ ուսուցիչը խաղարկում է գունավոր քարտեր, որոնց վրա նշված է որևէ օբյեկտի անվանումը: Օրինակ՝ կինոթատրոնային ծառերի պատկեր (աշխատանքի ընդհանուր տեսքի, էսքիզի շուրջ համաձայնվելուց հետո), մեկ (օրինակ՝ ծառերի վրա) օբյեկտի վրա կարող է աշխատել մի քանի աշակերտ: Այնուհետև աշակերտները հարթության վրա կոմպոզիցիոն կերպով բաշխում են իրենց ստեղծած կառուցվածքները (սկզբնական գաղափարի կամ էսքիզի համաձայն): Էսքիզի վրա աշակերտները կարող են աշխատել նախապես: Լավագույն էսքիզն ընտրելու նպատակով, ցանկալի է, անցկացնել մրցույթ:

**«Տարածություն»**

Կառուցվածքային-թեմատիկ բանավեճի ձև է, որի ընթացքում աշակերտները պետք է տեղավորվեն իրար մոտիկ, կիսաշրջանում: Նվազ պաշտոնական միջավայրը նպաստում է աշակերտների շարժունակությանը և նրանց ներգրավմանը բանավեճին: Ուսուցիչը պետք է փորձի բանավեճին ներգրավել բոլոր աշակերտներին:

**«Արագ բանավեճ»**

Այս մեթոդն անցկացվում է զույգով և կիրառման նպատակը բոլոր աշակերտներին բանավեճին ներգրավելն է: Այս մեթոդն արդյունավետ է այն դեպքում, երբ հարցը կամ խնդիրը ունեն պարզ պատասխան, և ուսուցիչը ցանկանում է աշակերտներից ստանալ արագ պատասխան... Խնդիրը կամ հարցը հղելուց հետո ուսուցիչը խնդրում է աշակերտներին, որ շրջվեն դեպի կողքի նստած աշակերտը և պատասխանը գտնելու նպատակով անցկացնեն բանավեճ: Աշակերտներին պետք է տրվի մի փոքր ժամանակ (1 րոպե): Ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ զույգերում աշակերտներից մեկը դոմինանտ է մյուսի նկատմամբ և պետք է օգնի բոլոր աշակերտներին (համեմատաբար պասիվ աշակերտներին) ներգրավման գործընթացում: Հնարավոր է, աշակերտներին նման առաջադրանք տալը սկզբում դասարանում աղմուկ առաջացնի, սակայն ժամանակի ընթացքում ուսուցիչը և աշակերտները միասնաբար կկարողանան կառավարել այս գործընթացը:

**«Շախմատի տախտակ»**

Այս մեթոդով դասն անցկացնելու ժամանակ ուսուցիչը խնդրում է զույգերին, որ 30 վայրկյանի ընթացքում ինքնուրույն մտածեն հարցի կամ խնդրի շուրջ և դրանից հետո միայն սկսեն բանավեճը: Բանավեճի ընթացքից ելնելով, ուսուցիչն օգնում է ժամանակը կարգավորելու հարցում: Հաջորդ փուլում զույգերը փոխվում են, և նոր զույգերը միմյանց հետ կիսվում են այլ զույգերի արտահայտած կարծիքներով և միայն սրանից հետո է տեղի ունենում կարծիքների փոխանակում՝ ամբողջ դասարանի հետ: Զույգերին սահմանվում է ժամանակ: Կարևորն այն է, որ ուսուցիչը ուշադիր հետևի նոր զույգերի բանավեճին և, թե որքանով են պահպանում զույգերը ժամանակի սահմանը: Ուսուցիչը հետևում է գործընթացին, և նա պետք է սահմանի, թե կառուցողական է, արդյոք զույգերի միջև ընթացող բանավեճը: Ուսուցիչը հետևում է իրավիճակին և գործընթացն ամփոփելու նպատակով, ցանկալի է, որ կատարի հակիրճ գրառումներ:

**«Ակվարիում»**

Աշակերտներն իրենց կարծիքները պետք է արձանագրեն հերթականությամբ, շրջանաձև հաջորդականությամբ: Նախքան բանավեճի մեկնարկը, ուսուցիչն աշակերտների հետ պայմանավորվում է ժամանակացույցի շուրջ: Օրինակ, 2 րոպե ժամանակ յուրաքանչյուր ելույթ ունեցողին: Ուսուցիչը նախապես հանձնարարում է.

- Գտնել զուգահեռներ տրված թեմայի վերաբերյալ:
- Հարցին տալ միայն մեկ հնարավոր պատասխան և հիմնավորել:
- Ավարտել ուսուցչի կողմից սկսած նախադասությունը:

**«Սիմպոզիում»**

Բանավեճը նման ձևով անցկացնելու համար աշակերտները պետք է պատրաստեն տեղեկություններ և ներկայանան լսարանի առջև: Ելույթ ունեցողները պատասխանում են համադասարանցիների հարցերին: Աշակերտները, հնարավոր է ընտրեն մեկ կարծիք (եզրակացություն), որը հետագայում դառնա նոր բանավեճի առարկա:

**«Դեբատներ»**

Դեբատներ անցկացնելը հիմնված է մասնակիցների նախապես ծրագրած և պատրաստած ելույթների վրա: Ներկայացուցիչներին ընտրում են խմբերում: Բանավեճը մեկնարկում է երկու հակառակ կողմերի մեկական ներկայացուցչի ելույթով: Հաջորդ փուլում յուրաքանչյուր կողմի մնացած մասնակիցները կարծիքներ են հայտնում, մեկնաբանում են: Ուսուցիչը հետևում է, որ ելույթ ունեցողները պահպանեն ժամանակի ռեգլամենտը:

**«Դատական նիստ»**

Նման ձևն իրենից ներկայացնում է գործի քննարկման նմանակում: Իրավիճակի սիմուլյացիան աշակերտներին հնարավորություն է տալիս առավել լավ ըմբռնել բանավեճային հարցերն և գործողությունները: Ուսուցիչը պետք է ձգտի, որ հիմնական շեշտը դրվի քննարկման վրա և գաղափարների գնահատումը տեղի ունենա աշակերտների հետ համաձայնեցման ճանապարհով:

**«Ջիքսոու»**

Այս մեթոդն անցկացնելու համար ուսուցիչն առաջադրանքը բաժանում է մասերի: Դասարանը բաժանվում է 3-5 անդամներից բաղկացած խմբերի և յուրաքանչյուր անդամին առաջադրանքի միայն մեկ մասն է տրվում: Այնուհետև ստեղծվում են նոր խմբեր այն անդամներից, ովքեր առաջադրանքի նույն մասերն են ստացել և խմբում տեղի է ունենում բանավեճ: Հարցը քննարկելուց հետո, յուրաքանչյուր աշակերտ վերադառնում է իր հին խումբ: Այս դեպքում բոլոր աշակերտների կողմից բերված գաղափարները և տեղեկությունները հավասարապես կարևոր են առաջադրանքն իրականացնելու համար, ինչը խմբի անդամներին կապում է իրար:

**«Դրոշակ»**

Նախքան բանավեճի մեկնարկը, ուսուցիչն աշակերտներին բաժանում է տարբեր գույների երեք փոքր դրոշակ: Աշակերտները գունավոր դրոշակները խրում են փոքր սպունգի կտորի մեջ և տեղադրում այն իրենց նստարանների վրա: Դրոշակները պետք է լավ երևան: Ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է խաղի կանոններին: Յուրաքանչյուր աշակերտ իրավունք ունի բանավեճի ընթացքում միայն երեք անգամ կարծիք հայտնել: Յուրաքանչյուր պատասխանից հետո աշակերտը պետք է վերցնի դրոշակը և կողքի դնի: Երբ դրոշները սպառվում են, նա միայն ունկնդրի դեր է ստանձնում:

**«Քննարկում»**

Աշակերտները նախապես պատրաստում են տնային աշխատանքը: Տրված հարցի հետ կապված հակիրճ վերլուծություններ և եզրակացություններ են գրում: Վերադառնալով դասարան, խմբում կամ զույգով քննարկում են յուրաքանչյուր աշխատանք և բանավեճի հիման վրա գնահատում աշխատանքը նախապես մշակված գնահատման չափանիշներով, որը կազմվում է նախապես՝ ուսուցչի և աշակերտների միասնական աշխատանքի արդյունքում:

**«Տարածական»**

Այս մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչը դասարանը երկու մասի է բաժանում, մի մասը պետք է լինի որևէ դարաշրջանի/հոսանքի/նկարչի պաշտպանը: Մյուս մասը պետք է հաստատի հակասող կարծիքը: Օրինակ՝ աշակերտների մի մասը հաստատում է, որ Մունկի «Ճիչը» գլուխգործոց է և փաստարկներ է ներկայացնում: Իսկ երկրորդ մասը հակասում է այդ կարծիքին: Երկու կողմերն էլ հիմնավորում են իրենց կարծիքներն ու պաշտպանում սեփական դիրքորոշումը:

**«Ճանապարհորդներ»**

Լսարանը բաժանվում է երեք մասի, մի խումբը ներկայացնում է, օրինակ ՝ Վերածննդի դարաշրջանի Իտալիան, երկրորդ խումբը՝ 19-րդ դարի Ֆրանսիան, երրորդ խումբը՝ ճանապարհորդներին: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իր երկիրը՝ սոցիալ-տնտեսական, արվեստի տեսանկյունից: Ճանապարհորդները նախապես պատրաստում են հարց/չափանիշներ, որի համաձայն էլ հավաքում են տեղեկություններ այս կամ այն երկրի մասին: Շնորհանդեսը ներկայացնում են ճանապարհորդները:

**«Շարունակիր»**

Ուսուցիչն աշակերտներին որևէ պատմություն (դեպք) է պատմում, չի ավարտում և խնդրում է աշակերտներին, ինքնուրույն մտածել վերջաբան և նկարել այն (իրականացնել վիզուալիզացիա):

**«Շարունակիր 2»**

Ուսուցիչը զույգերին վերարտադրանկար է բաժանում, զույգերը պետք է մտածեն որևէ դեպք վերարտադրանկարի վրա արտացոլված սյուժեի համաձայն և ստեղծեն իրենց հորինած դեպքի պատկերը/պատկերազարդումը:

### «Զուգորդում»

Ուսուցիչը բառեր է թվարկում: Աշակերտները պետք է նկարեն այն զուգորդումները, որոնք առաջանում են կոնկրետ բառերը լսելիս: Օրինակ՝ ամպ, անձրևանոց, երկնագույն:

### «Ակտիվ դասախոսություն»

Ակտիվ դասախոսությունը նպաստում է ունկնդրմանը, տեղեկության ընկալմանն ու տեսակավորման ունակությունների մշակմանը, գիտելիքների կիրառմանը, վերլուծությանն ու եզրահանգելու ունակությունների զարգացմանը:

1. Առաջին փուլում ուսուցիչը դասի նպատակներից ելնելով, նշում է դասախոսության թեման և ընդգծում, որ դասախոսությունը կազմված է երկու մասից, հարց է տալիս դասախոսության առաջին մասից: Աշակերտների կողմից արտահայտած կարծիքները (հարցի պատասխանները) արձանագրում է գրատախտակի/ձևաչափի վրա, խնդրում է աշակերտներին ուշադրությամբ լսել նրան և պատրաստ լինել կարծիք արտահայտելու համար:
2. Առաջին մասն ավարտելուց հետո ուսուցիչը խնդրում է աշակերտներին ունկնդրած տեղեկությունը համեմատել արտահայտած կարծիքի հետ, որոնք գրատախտակին/ձևաչափի վրա են գրվում տեղեկությունն ունկնդրելուց առաջ:
3. Աշակերտների կարծիքները լսելուց հետո, ուսուցիչը հարց է հղում դասի երկրորդ մասից, աշակերտների պատասխանները դարձյալ գրվում են գրատախտակի/ձևաչափի վրա և շարունակվում է ակտիվ դասախոսություն՝ երկրորդ մասի վերաբերյալ:
4. Երկրորդ մասն ավարտելուց հետո, ուսուցիչը դարձյալ խնդրում է աշակերտներին համեմատել դասից առաջ նրանց կողմից արտահայտած կարծիքները դասի երկրորդ մասում սերտած տեղեկությունների հետ, որոնք արձանագրված են գրատախտակի/ձևաչափի վրա:
5. Համեմատությունից հետո, ուսուցիչը հանգուցային հարց է տալիս, որի շուրջ աշակերտները պետք է գրեն էսսե: Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները ներկայացնում են էսսեն (հնարավոր է ընթերցվեն որոշ էսսեներ և ոչ բոլորը), այս ակտիվությունը կիրառվում է ողջ դասարանի հետ աշխատելու նպատակով:

### «Ակտիվ դասախոսություն 2»

Ուսուցիչը դասախոսության թեման նախապես բաժանում է մի քանի մասի: Առաջին փուլում ինքն է կարդում/պատմում, երկրորդ փուլում աշակերտը կարդում է հաջորդ հատվածը և հարցեր է տալիս համադասարանցիներին, ամփոփում է նշված տեքստը, հաջորդ հատվածն այլ աշակերտ է կարդում և հարցեր տալիս համադասարանցիներին:

### «Մտավոր գրոհ»

Մտավոր գրոհը նպաստում է մեծ քանակությամբ գաղափարների վերարտադրմանը՝ կարճ ժամանակահատվածում: Այս մեթոդը նպաստում է հաղորդակցության, ստեղծագործական մտածելակերպի, տեղեկատվության տեսակավորման, քննարկման, վերլուծության և գնահատման ունակությունների զարգացմանը:

Ուսումնական նպատակներից ելնելով, ուսուցիչը նախապես ընտրում է թեման և հարցի տեսքով ձևավորում այն: Հարցը պետք է լինի հասկանալի և հստակ ձևավորված: Մտավոր գրոհը բաղկացած է երկու փուլից:

1. Գաղափարների վերարտադրման փուլ: Ուսումնական նպատակից ելնելով ուսուցիչը հարց է տալիս և աշակերտներն ազատ արտահայտում են իրենց կարծիքը: Կարծիքները հայտնելու ժամանակ չի թույլատրվում վեճ, քննադատություն կամ գնահատում: Բոլոր կարծիքներն ընդունելի են: Գաղափարների վերարտադրման փուլում կարևոր է գաղափարների քանակը և ոչ որակը: Որակի շուրջ քննարկումը՝ գնահատման փուլը, տեղի է ունենում գաղափարների վերարտադրումից հետո:

Բոլոր գաղափարները, անգամ անընդունելիները գրվում են ձևաչափի/գրատախտակի վրա:

Հնարավոր է գաղափարների գնահատումը տեղի ունենա նույն դասի ընթացքում կամ հաջորդ օրը: Այդ դեպքում աշակերտների կողմից արտահայտած կարծիքները պետք է գրվեն գրատախտակի/ձևաչափի վրա:

2. Գաղափարների գնահատման փուլ: Այս փուլը մեկնարկելիս պետք է տեղի ունենա արտահայտված կարծիքների ընդհանուր ամփոփում և նման գաղափարների միավորում ու ընդհանրացում: Սրանից հետո տեղի է ունենում դրանց դասակարգումը: Յուրաքանչյուր աշակերտին իր կարծիքով մի քանի կարևոր գաղափար ընտրելու և դրանք ըստ կարևորության դասավորել-գնահատելու հնարավորություն է տրվում:

(Ամենից կարևոր գաղափարը գնահատվում է ամենաբարձր միավորով:) Միավորների ամփոփման արդյունքում բացահայտվում է մի քանի արժանի գաղափար: Հնարավոր է գնահատման փուլից շեշտը տեղափոխվի դեպի բանավեճ:

### «Դերային խաղ»

Դերային խաղն արդյունավետ տեխնիկա է, որը հնարավորություն է տալիս աշակերտներին կատարելագործել կառուցողական երկխոսության ունակությունները, օգնում է աշակերտներին ըմբռնել հարցը, զարգացնել շնորհանդեսի, բանավեճային և ստեղծագործական ունակությունները, գնահատել ու կազմակերպել հարցի խորը հասանելիությունը, տեղեկատվությունը երկարատև հիշելու միջոցը:

- Դերային խաղի, որպես մեթոդի առավելագույն արդյունքի հասնելու համար հարկավոր է պատրաստել սցենար, որը պետք է կազմել այնպես, որ առանձնանա լուծման ենթակա խնդիրը:
- Դերերի բաշխումը կարող է տեղի ունենալ գունավոր քարտեր բաժանելու միջոցով, որոնց վրա նշված են աշակերտների կողմից իրականացրած դերերը:
- Հանձնարարություն՝ խաղացողների և դիտորդների համար: Դիտորդի նախապատրաստություն (թե ինչին պետք է ուշադրություն դարձնեն, հնարավոր է դիտորդներ նախատեսված չլինեն և դերերը բաժանվեն դասարանի աշակերտների միջև):
- Խաղի ընթացքը:
- Դերից դուրս գալը. այս փուլը կարևոր է, քանի որ աշակերտներին պետք է հնարավորություն տրվի քննարկելու, թե ինչ փորձ են ստացել դերակատարության ընթացքում:
- Դիտորդի մեկնաբանությունը:
- Ուսուցիչն ամփոփում է արդյունքներն ու դրանք կապում խաղի նպատակների հետ:

### «Սիմուլյացիաներ» (կեղծակերպություններ)

Այս մեթոդի կիրառման ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի մի քանի կարևոր հարց. նա պետք է խրախուսի աշակերտներին իրականացնել իմպրովիզացիա, կարող է պահանջել նրանցից սցենարի նման պարզ էսքիզի գրավոր արձանագրություն: Կարելի է կիրառել նաև պարզ դեկորացիաներ, ինքնաստեղծ ռեսուրսներ, բեմազգեստների տարրեր: Անչափ հետաքրքիր կլինի, եթե աշակերտները ստեղծագործելու համար կիրառեն նաև տեխնոլոգիական միջոցներ ՝ համակարգիչ, տեսա-ձայնագրային միջոցներ, պատրաստեն պաստառներ և այլն:

### «Զուգորդված կապերի քարտեզ»

Հնարավորություն, որ զարգացնում է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու, տեղեկությունը կուտակել-խմբավորելու, թեման գիտակցելու, զուգորդումներ ստեղծելու և տրամաբանորեն մտածելու ունակությունները: Այս մեթոդը հնարավոր է կիրառել անհատական, զույգով կամ խմբային աշխատանք կատարելիս:

Մեթոդը բաղկացած է մի քանի փուլից.
- Ուսումնական նպատակից ելնելով, ձևաչափի/գրատախտակի կենտրոնում գրվում է բառ, արտահայտություն կամ պատկեր:
- Աշակերտները գրված բառը/արտահայտությունը/պատկերը տրամաբանորեն կապակցում են նշված թեմային առնչվող զուգորդումների (կարծիքներին) հետ:
- Այնուհետև աշակերտները նշում են կապն այն բառերի և կարծիքների հետ, որոնք նրանց կարծիքով կապված են իրար հետ:
- Զուգորդված կապերի քարտեզ կազմելը շարունակվում է այնքան, մինչև սպառվում են այս հարցի շուրջ կարծիքները կամ հատկացված ժամանակը:

# 3. Կերպարվեստ և կիրառական արվեստ առարկայի V դասարանի չափորոշիչը

### Տարեվերջում նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղության

### Ուղղություն՝ ստեղծագործունակություն և պրակտիկա

**Ուս.պլան. V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.
- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով փոխանցում է տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է կոնտրաստային (հակադիր) գույներ և գույների գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտացոլել առարկաների ծավալը:
- Մտահղացումը առավել լավ փոխանցելու նպատակով ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ զուգահեռ դիրք:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունն արտացոլելու նպատակով կիրառում է կիսատոներ (առջևի պլան՝ հստակ, հետևի պլան՝ աղոտ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական միջոցներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (մարմինների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս.պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկա՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրականացնելու նպատակով:**

**Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.**

- Կիրառում է տարբեր հնարքներ, տարբեր նյութեր, տեխնիկաներ, անցկացնում է փորձեր՝ տրվածն ավելի լավ իրականացնելու նպատակով:
- Զարգացնում է բազմերանգ նյութերի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցները՝ տարբեր ժանրերի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):
- Զարգացնում է տարբեր նյութերի (բնական, արհեստական) կիրառման ուղիները մանր կերտարվեստի նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու համար:
- Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկաներ օգտագործելով:
- Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:
- Համակարգչային նկարչական ծրագրում ստեղծում է ռիթմային, համաչափ, անհամաչափ աշխատանքներ, առանձնացնում է աշխատանքում գլխավորը, կիրառում է հակադիր գույներ, ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրքը, պատկերը գիտակցաբար տարածում է նկարի հարթության վրա:

**Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն**

**Ուս.պլան.V.3. Աշակերտը համադասարանցիների համագործակցությամբ (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.**

- Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբերվող կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:
- Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:
- Համադաարանցիների հետ կիսվում է դիտարկման արդյունքներով և սեփական փորձով:
- Մյուսների հետ համագործակցելու նախաձեռնություն է ցուցաբերում, օգնում է նրանց կոնկրետ խնդիրը լուծելու հարցում:
- Վիրտուալ խմբերում կիսվում է իր թվայնացված աշխատանքով:
- Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Ուս.պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.**

- Անհատական, համատեղ աշխատանքը ներկայացնելիս, խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև կիրառած սկզբունքների, տարրերի, միջոցների, նյութերի, տեխնիկաների և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել սեփական կարծիքը քննարկման, բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում է հարցերին, խորհուրդ է տալիս և ընդունում, գործածում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուղղություն. Արվեստի ընկալումը համատեքստում**

**Ուս.պլան. V.5. Աշակերտը պետք է կարողանա կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները կապել պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

**Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.**

- Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշները՝ հիմնական բնութագրիչների համաձայն (ճարտարապետական հուշարձաններ, դետալներ, զարդանախշեր և այլն):
- Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետություն և այլն):
- Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (գեղարվեստական, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):
- Արտահայտում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:
- Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների արվեստի նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Ուս.պլան. V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.**

- Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:
- Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին և արտահայտում իր դիրքորոշումը:
- Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Բովանդակություն և հանձնարարականներ**

**Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները**

**Գիծ.** Տարբեր տեսակի և հաստության գծեր, ուրվագիծ և շտրիխ

Ակտիվություններ գծով.

Միայն սև մատիտի միջոցով, կիրառելով բազմաթիվ դետալներ, աշակերտը պատկերում է ինքն իրեն և մյուսներին իրական և հորինված տարբեր իրավիճակներում, կիրառում է տարբեր հաստության գծեր, ուրվագծեր:

Իրականացնում է գծանկարչական աշխատանք վրձնով և մեկ գույնի ներկով: Այդ նպատակով դեռ վարժվում է տարբեր տեսակի գծերը վրձնով նկարելու մեջ (ուսուցիչը պետք է ցույց տա, թե ինչպես է փոխվում գծի հաստությունը՝ վրձինը տարբեր ձևերով հպելու դեպքում): Ոգեշնչման համար կարող է ուսումնասիրել չինական և ճապոնական գծանկարչության նմուշները:

**Գույն -** հիմնական և բաղադրյալ, սառը և տաք, հակադիր գույներ, տոնայնություն՝ սպիտակի կամ սև գույնի ավելացմամբ ստացված տոն, կիսատոներ, գույնի գրադացիա (աստիճանավորում):

Ակտիվություններ գույնով և գծով.

Աշակերտը սև ֆլոմաստերով թղթի վրա, առանց ձեռքը բարձրացնելու նկարում է ուրվագիծ (գիծը շատ անգամ պետք է հատվի այնպես, որ հատման տեղերում ստացված ձևերը չլինեն շատ փոքր չափի): Ստացած սահմանափակված պատկերները ներկում է հակադիր (կոնտրաստային) և համանման (հարևան) գույներով: Նկարն ավելի արդյունավետ լինելու նպատակով, ներկած հատվածները կարելի է շտրիխավորվել, նկարել որևէ դետալ, որոշ հատվածներում ավելացնել գծերի հաստությունը և այլն:

**Ձև.** 2D և 3D- հարթ և ծավալային, համաչափ և անհամաչափ

Ակտիվություններ պատկերներով.

Փոքր չափի տուփերը (լուցկու, օծանելիքի) աշակերտները ներկում են սպիտակ ներկով, կամ վրան սոսնձում են սպիտակ թուղթ, սպիտակ թղթից նաև պատրաստում են կոն և բուրգ: Ուշադրություն են դարձնում, թե երկրաչափական մոդելների վրա ինչպես է ընկնում լույսի ստվերը: Ուսուցիչը գրատախտակի վրա ևս սխեմատիկ կերպով կարող է ցույց տալ առարկաներ, որոնց վրա անկյուններից ընկած են ստվերներ: Այնուհետև աշակերտները նկարում են երկրաչափական մոդելներ տարբեր լուսավորությամբ (ուղիղ և կողքից) և ներկում են ստվերները (ստվերները ներկելիս չի պահանջվում աստիճանավորում՝ բավական է, որ մի կողմը մյուսից մուգ լինի):

**Սկզբունքներ.** Կոմպոզիցիոն բաշխման հիմք (ուղղահայաց կամ զուգահեռ ձևաչափի ընտրություն, ձևաչափի վրա պատկերի բաշխում), ռիթմ, հիմնականի տարանջատում, համաչափություն և անհամաչափություն, ստատիկա, դինամիկա, կոնտրաստ, համամասնություն, տարածություն (հեռանկարի օրենքներ - առջևի և հետևի պլան):

**Կիրառված սկզբունքներ.**

Աշակերտը պատկերում է մարդու կազմվածքը՝ նախատեսելով հիմնական համամասնությունները (հեշտությամբ):

Ուշադրություն է դարձնում, թե ինչպես է փոփոխվում օբյեկտի չափը, գույնը, հստակությունը դիտողից գտնվող հեռավորության համաձայն և արտացոլում է դա աշխատանքում:

Նկարում է բնանկար՝ կիրառելով առջևի և հետևի պլանները:

Աշակերտը ծանոթանում է նկարի հարթության կիրառմանն ու կոմպոզիցիայի տարրական օրենքներին (թղթի վրա առարկաներն ու մարմինները պետք է բաշխվեն հավասարապես, այնպես որ «աչքը չհոգնեցնեն») ծանրաբեռնված կամ դատարկ տարածքներին: Պատկերված առարկաները պետք է չլինեն շատ փոքր, կամ այնպիսի չափի, որ չտեղավորվեն թղթի վրա:

**Նյութ և գործիք:** Մատիտ (գունավոր, հասարակ), պաստել, ֆլոմաստեր, գուաշ, ջրաներկ, ածուխ, սանգինա, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, գործվածք, թել, պարան, մետաղալար, պլաստիլին, կավ, բնական, արհեստական, ավանդական և ոչ ավանդական նյութեր (պլաստմասսայե և ակապե շշեր, մետաղյա իրեր, ստվարաթղթի և պոլիէթիլենային տոպրակներ և այլն), վրձին, մկրատ, սոսինձ, ատաղձագործական, թիթեղագործական, գործելու, կար անելու գործիքներ և այլն:

**Տեխնիկա և ընթացակարգ.** գեղանկարչություն, գծանկարչություն և դրանց տեխնիկաները (վրձնահարված, բիծ, դրոշմահետք), գրաֆիտ, ծեփակերտում, ապլիկացիա, թղթից պատրաստված իրեր, խճանկար, կոլաժ, մենատիպ, մոդելավորում, կառուցվածք, կարպետ, կաճ, գոբելեն, ասեղնագործվածք, համակարգչային տեխնոլոգիաներ (նկարչական ծրագիր, տեքստային խմբագիր), կտրել, սոսնձել, քերծել, ծռել, ոլորել, հյուսել:

Կիրառված նյութ և տեխնիկա.

Աշակերտը տանից բերում է փոքր չափի նկարազարդ գործվածքներ և վերևից ներկով նկարում է, շարունակում, ավարտում է գործվածքի նկարը (որպեսզի գուաշի ներկը չանցնի, գույներին պետք է խառնի մի քանի կաթիլ ջրադիմացկուն (ՊՎԱ) սոսինձ):

Պլաստիլինից (որը չորանում է) կամ աղի խմորից աշակերտը պատրաստում է ցանկացած ձևի շրջանակ՝ կլոր, ձվաձև, ուղղանկյուն... Շրջանակի վրա քերծում է նախշեր: Չորանալուց հետո, շրջանակը պետք է սոսնձել համապատասխան ձև ունեցող ստվարաթղթի վրա և ամրացնել կախիչ:

Ընդհանուր ակտիվություններ.

Աշակերտն ուսումնասիրում է շրջապատի առարկաները, օբյեկտները, երևույթները և արտացոլում է աշխատանքներում, նկարում է դիմանկարներ, նատյուրմորտներ ու բնապատկերներ նատուրայից և հիշողությամբ կիրառելով ավելի շատ դետալներ:

Երևակայությամբ ստեղծում է կերպարներ:

Պատկերում է իր կյանքի հետաքրքիր կամ կարևոր պահերը և փորձում է փոխանցել սեփական զգացումները:

Ընտրում է գեղարվեստական միջոցներ որոշակի գաղափարը փոխանցելու նպատակով (օրինակ՝ ստեղծում է պաստառ էկոլոգիական կամ այլ թեմայով):

Պատկերում է հարազատ մարդկանց (ընտանիքի անդամներ, ընկերներ և այլն), սիրելի գրական հերոսներին և փորձում է փոխանցել նրանց հանդեպ սեփական վերաբերմունքը:

**Ենթադրյալ թեմաներ.** «Արևամուտը ծովում», «Աշնանային/գարնանային անձրև», «Խաղողահավաք», «Հայրենի անկյուն», «Քարե դարի մարդիկ», «Դինոզավրեր», «Առասպելական հերոսներ», «Շամիրամի կախովի այգիները», «Սիրելի պատմական հերոս», «Երկրագունդն իմ տունն է», «Հավատարմություն», «Էքսկուրսիա» և այլն (կարող են լինել նաև տեղական արտադրամասի, ճարտարապետական հուշարձանի, տեղական և օտար ավանդույթներ պատկերող թեմաներ, կենցաղային տեսարաններ, իրականում տեղի ունեցած հանրային իրադարձություններ, անձնական նշանակություն ունեցող փաստեր, ինչպես նաև սեփական երևակայությունից ծնված թեմաներ և այլն):

**Առարկայի ուսուցման նպատակը, խնդիրները**

Առարկայի ուսուցման նպատակը ներդաշնակորեն զարգացած մարդ դաստիարակելն է, որը կունենա արվեստի մասին ընդհանուր տեսական գիտելիքներ, կունենա արվեստի նմուշի հետ «առնչվելու» ցանկություն, ընդհանուր առմամբ արվեստի հանդեպ էմոցիոնալ կախվածություն, կոնկրետ նմուշի ընկալման և սեփական կարծիքի մշակման, հստակ արտահայտման ունակություն:

Այս առարկայի խնդիրն է ցույց տալ աշակերտին, որ արվեստն աշխարհը ճանաչելու միջոցներից մեկն է և միաժամանակ, իր ինքնահաստատման, ինքնադրսևորման հրաշալի ասպարեզը:

# 4. Չափորոշչի արդյունքներին հասնելու և բովանդակության փոխկապակցման մատրիցա

| | |
|---|---|
| **1. Արձակուրդներ** | **Նպատակ.** Որոշենք, թե ինչ գիտելիքներ և ունակություններ ունեն աշակերտները, իրականացնենք աշակերտների կարողությունների ախտորոշում: Որոշենք, թե որքան ակտիվորեն են կիրառում նրանք նախորդ տարվա սովորած նյութը, տարրերը, տեխնիկաներն ու ընթացակարգը՝ սեփական տպավորությունները և էմոցիաները փոխանցելու համար: Մշակենք աշակերտի սեփական տպավորությունների, էմոցիաների փոխանցման և հիշողությամբ նկարելու ունակությունը, զարգացնենք զույգով աշխատելու (համագործակցության) և շնորհանդես ներկայացնելու ունակությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V,1 Ուս.պլան. V.3, Ուս.պլան. V.4** |
| **2. Ի՞նչ է կոմպոզիցիան** | **Նպատակ.** Աշակերտին հիշեցնենք/ծանոթացնենք կոմպոզիցիա տերմինը և բացատրենք դրա նշանակությունը, հիշեցնենք համաչափ և անհամաչափ կոմպոզիցիաների տեսակները, ծանոթացնենք կոմպոզիցիայում հավասարակշռություն հասկացության հետ: Մշակենք կոմպոզիցիոն բաշխման տարբեր միջոցներն աշխատանքում կիրառելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան. V.2, Ուս.պլան. V.4** |

| | |
|---|---|
| **3. Ընտրիր թուղթ** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի մտահղացման համապատասխան թղթի ձևի և նկարի տարածքի (ուղղահայաց/երկայնակի, հորիզոնական/լայնակի) և կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքներն ընտրելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան. V.4** |
| **4.Գույները տարածության մեջ** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք գույները բացացնելու միջոցով հետևի և առջևի տեսարանը տարբերակելու և տարածություն փոխանցելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1. Ուս.պլան. V.4** |
| **5. Ծովը և տարածու-թյունը** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք տարբեր նկարչական նյութերի և տեխնիկաների կիրառմամբ աշխատանքում տարածությունը փոխանցելու, այն պատկերելու ունակությունը, որպեսզի նա կարողանա փոխանցել ծովի տարածությունը և համապատասխան տրամադրությունը, զարգացնենք աշխատանքը ներկայացնելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան V.4.** |
| **6.Ուրախ մարդուկներ** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք մարդու կեցվածքը սխեմատիկ կերպով կառուցելու ունակությունը և շարժման մեջ նրան պատկերելու հմտությունը: Ինչպես նաև, փորձարկման ճանապարհով մշակենք տարբեր նյութերով ֆակտուրա ստեղծելու, համագործակցության և շնորհանդեսի հմտությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան V.2., Ուս.պլան. V.3., Ուս.պլան. V.4.** |

| | |
|---|---|
| **7. Լույս՝ պատուհաններում** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք տարբեր նյութերով փորձարկում անցկացնելու հմտությունը, արթնացնենք երևակայությունը, զարգացնենք ապլիկացիայի միջոցը կիրառելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1., Ուս.պլան. V.2, Ուս.պլան. V.3, Ուս.պլան. V.4.** |
| **8. Վրացի արվեստագետները Փարիզում** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք 20-րդ դարի սկզբում Փարիզում գործող վրացի նկարիչների՝ գեղանկարիչ Լադո Գուդիաշվիլիի և քանդակագործ Իակոբ Նիկոլաձեի հետ: Զարգացնենք աշակերտի գեղարվեստական ստեղծագործությունը վերլուծելու ունակությունը, ամրապնդենք զուգորդական մտածելակերպի հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.3, Ուս.պլան. V .4, Ուս.պլան. V.6.** |
| **9. Աշնանային բնանկար** | **Նպատակ.** Մշակենք աշակերտի հիշողությամբ նկարելու ունակությունը, տարբեր տեսակի վրձնահարվածներով և էֆեկտներով տարբերվող ֆակտուրաներ և տրամադրություն, տպավորություն, էմոցիաներ և տարվա այդ ժամանակահատվածին բնորոշ գունայնություն փոխանցելու ունակությունը: Աշակերտը պետք է կարողանա խոսել սեփական աշխատանքի, դրանում կիրառած միջոցների մասին: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան. V.2., Ուս.պլան. V.3., Ուս.պլան. V.4.** |
| **10. Որտե՞ղ նստեցնենք փիսիկին** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք պատկերը նկարի հարթության վրա գիտակցաբար տարածելու ունակությունը, ինչպես նաև, տարբեր միջոցներով աշխատանքում գլխավորն առանձնացնելու, աշխատանքը կոմպոզիցիոն ձևով կառուցելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան. V.4.** |
| **11. Կենդանաբանական այգու բնակիչները** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք բնությունը և շրջակա միջավայրն ուսումնասիրելու, արհեստական և բնական նյութեր կիրառելու ունակությունը, էսքիզ ստեղծելու հմտությունը, զարգացնենք հիշողությամբ և/կամ պատկերացմամբ նկարելու ունակությունը, ամրապնդենք զույգով աշխատելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.2., Ուս.պլան. V.3., Ուս.պլան. V.4.** |
| **12.Ամենն իմ հայրենիքն է...** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք Վրաստանի տարբեր տարածաշրջաններում պահպանված տարբեր ժամանակների հուշարձաններին, արվեստի նմուշներին և մշակենք դրանք վերլուծելու ունակությունը, զարգացնենք հուշարձանի մասին տեղեկություններ ձեռք բերելու ունակությունը, նաև մշակենք որևէ պատմական փաստի կամ լեգենդի/առասպելի առանձին դրվագները սեփական երևակայությամբ նկարելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.2., Ուս.պլան. V.4., Ուս.պլան. V.6** |

| | |
|---|---|
| **13.Մակերևույթ և մակատեսք (ֆակտուրա)** | **Նպատակ.** Ամրապնդենք թղթի վրա տարբեր ֆակտուրաներ ստանալու և դրանք աշխատանքում կիրառելու աշակերտի ունակությունը, որպեսզի նա տարբեր տեսակի էֆեկտներով և վրձնահարվածներով կարողանա փոխանցել տրամադրություն: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.2, Ուս.պլան. V.4** |
| **14.Աշխատանքի նպատակը** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի վերլուծական մտածելակերպի, արվեստի նմուշի նշանակության մասին դատողություններ անելու ունակությունը, ամրապնդենք դեկորատիվ նշանակության առարկա ստեղծելու գործնական հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.2., Ուս.պլան. V.4., Ուս.պլան. V.5.** |
| **15.Պահիր անտառը հանուն երեխաների...** | **Նպատակ.** Հրահիրենք աշակերտի քաղաքացիական պատասխանատվության զարգացումն էկոլոգիական թեմաները քննարկելու և սեփական աշխատանքներում այս խնդիրն արտացոլելու ունակությունն՝ արդեն սովորած սկզբունքների և տարրերի կիրառմամբ, ինչպես նաև համակարգչային նկարչական ծրագրում աշխատելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1, Ուս.պլան V.2, Ուս.պլան. V.4.** |
| **16.Հին աշխարհի քանդակագործությունը** | **Դասի նպատակը.** Աշակերտին ծանոթացնենք հին աշխարհի տարբեր մշակույթների կամ քաղաքակրթության քանդակագործությանը, ցույց տանք այս ճյուղի յուրահատկությունն ու բնութագրիչ նշանները և մշակենք քանդակագործության նմուշների վերաբերյալ դատողություններ անելու, դրանք վերլուծելու, տեղեկատվություն հավաքելու հմտությունը: |
| | **Արդյունք՝ Ուս.պլան., V.5** |

| | |
|---|---|
| **17.Ժպիտն՝ ընծա** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք համակարգչի միջոցով տարբեր էմոցիաներ արտահայտող նկար ստեղծելու հմտությունը, ամրապնդենք դիմախաղին ուշադիր հետևելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս. պլան.** V.2., **Ուս.պլան. V**.4. |
| **18. Դրոշմանկար գլանի միջոցով** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի ոչ ավանդական միջոցներով գունավոր դրոշմահետք ստանալու հմտությունը, ամրապնդենք դեկորատիվ աշխատանք ստեղծելու ունակությունը: |
| | **Արդունք. Ուս.պլան. V**.2, **Ուս.պլան. V**.4 |
| **19.Անծրևոտ եղանակ** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի ապլիկացիայի միջոցով տարբեր տրամադրություններ ունեցող աշխատանք ստեղծելու հմտությունը, ամրապնդենք արհեստական ռեսուրսը ստեղծագործաբար կիրառելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V.1., Ուս.պլան. V.2., Ուս.պլան. V.4.** |
| **20.Չորքոտանի բարեկամ** | **Նպատակ.** Մշակենք ջրաներկով ցանկացած թեմայով աշխատանք ստեղծելու աշակերտի ունակությունը, ամրապնդենք շրջակա միջավայրը, բնությունն ուսումնասիրելու ունակությունը: |
| | **Արդյունք.** Ուս. պլան. V.1., **Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.4. |
| **21. Ամենն իմ հայրենիքն է...** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք Վրաստանի տարբեր անկյուններում պահպանված տարբեր ժամանակների հուշարձանների, արվեստի նմուշների հետ և մշակենք դրանք վերլուծելու ունակությունը, զարգացնենք հուշարձանի մասին տեղեկություններ ձեռք բերելու հմտությունը, ինչպես նաև մշակենք որևէ պատմական փաստի կամ լեգենդի/առասպելի առանձին դրվագները սեփական երևակայությամբ նկարելու ունակությունը: |
| | **Արդյունք.** Ուս. պլան. **V**.2., **Ուս.պլան. V**.4., Ուս.պլան.V.6 |
| **22.Կարմրագլխարկ սնկեր** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք տարբեր տեսակի արհեստական ռեսուրսների կիրառմամբ դեկորատիվ եռաչափ աշխատանք ստեղծելու, աշխատանքը հերթականությամբ ծրագրելու և ուրիշների հետ համագործակցելու ունակությունը: |
| | **Արդյունք.** Ուս.պլան., V.2. **Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4. |

| | |
|---|---|
| **23.Պատկերներ և շրջակա միջավայր** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք բազմապատկեր կոմպոզիցիայի հասկացության, այն կառուցելու տարբեր սկզբունքների հետ, զարգացնենք նաև մոտ և հեռու դիտակետն ընկալելու և վերլուծելու կարողությունը, մշակենք բազմապատկեր կոմպոզիցիա ստեղծելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4. |
| **24.Պատկերազարդ «Ոդիսականը»** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի կերպարվեստի նմուշում գրական կամ առասպելական կերպարները ճանաչելու, գրական գործերի կոնկրետ դրվագը տարբեր միջոցներով և հնարքներով նկարելու ունակությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.5., **Ուս.պլան. V**.6. |
| **25.Հովհար** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք դեկորատիվ-կիրառական առարկան հեշտությամբ ստեղծելու, կիրառական արվեստի նմուշի այս կամ այն սոցիալական շերտին վերագրելու, դեկորատիվ-կիրառական առարկան այս կամ այն մշակույթին վերագրելու, վերլուծելու և փաստարկված դատողություններ անելու ունակությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.4., **Ուս.պլան. V**.5 |
| **26.Դիմանկար** | **Նպատակ.** Աշակերտի մեջ զարգացնենք արվեստի գործից տեղեկություններ քաղելու ունակությունը (դարաշրջան, երկիր, սոցիալական պատկանելություն), նաև մշակենք դիմանկար ստեղծելու հմտությունը և դրանում դետալներ պատկերելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4., **Ուս.պլան. V**.5 |
| **27.Զվարճալի սեղմակներ** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք տարբեր նյութերով փորձարկում կատարելու հմտությունը, հրահրենք երևակայությունը, արհեստական և բնական նյութերը կիրառելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.4 |

| | |
|---|---|
| **28.Ինտերիերի նախապատկեր (էսքիզ)** | Նպատակը. Աշակերտը պետք է ստեղծի ինտերիերի էսքիզ, մշակենք կերպարվեստի սկզբունքների և տարրերի կիրառմամբ առաջարկված թեմայի շուրջ աշխատելու և պատկերների կոմպոզիցիոն բաշխման ունակությունը: Զարգացնենք երևակայությունը և տրված խնդրի հանդեպ ստեղծագործական մոտեցման ունակությունը: |
| | Արդյունք՝**Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4. |
| **29.Նկար, դարաշրջան, երկիր** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք արվեստի ստեղծագործության միջոցով դարաշրջանին և երկրին հատուկ նշանները ճանաչելու ունակությունը: Ամրապնդենք նկարչական աշխատանքի վերլուծության ունակությունը: Զարգացնենք գործնական աշխատանքում դարաշրջանի, երկրի բնութագրիչ նշանները պատկերելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4., **Ուս.պլան. V**.5 |
| **30.Աշխարհի հայտնի աշտարակները** | **Նպատակ.** Աշակերտի մոտ հետաքրքրություն արթնացնենք համաշխարհային նշանակության ճարտարապետական հուշարձանների հանդեպ, զարգացնենք դրանց հասարակական նշանակությունն և ֆունկցիան ճանաչելու ունակությունը: Մշակենք ինքնուրույն և քննադատական մտածելակերպի հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.5. |
| **31.Ապագայի աշտարակ** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք արհեստական նյութերի կիրառմամբ տարածական կառուցվածք կառուցելու հմտությունը, խթանենք նյութի հանդեպ ստեղծագործական մոտեցման ունակությունը, գործնական աշխատանքն իրականացնելիս ինքնատիպ որոշում կայացնելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան.** V.2., **Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4., **Ուս.պլան. V**.5. |

| | |
|---|---|
| **32.Նոր տարի** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք բնական և արհեստական նյութերով աշխատանք ստեղծելու ունակությունը, զարգացնենք երևակայությունը, ինչպես նաև մշակենք կոնկրետ խնդիրը լուծելու համար իրականացվելիք աշխատանքը հերթականությամբ ծրագրելու ունակությունը: |
| | **Արդյունք.** Ուս.պլան., V.2., **Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4. |
| **33.Ամանորյա դիմակահանդես** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք տարբեր նյութերը և տեխնիկաներն ինքնուրույն ընտրելու ունակությունը, աշխատանքում տարբեր նյութերով և ֆակտուրայով տրամադրություն փոխանցելու ունակությունն, ինչպես նաև, թատերական բեմազգեստի առանձին դետալներ պատրաստելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4. |
| **34.Գծանկարչություն** | **Նպատակ.** Աշակերտին հիշեցնենք կերպարվեստի ճյուղերից մեկը՝ գծանկարչությունը և ցույց տանք դրա նկարչական հնարավորությունների լայն դիապազոնը, մշակենք այդ ճյուղի գեղարվեստական միջոցները գործնական աշխատանքում կիրառելու ունակությունը: Ազատ թեման ստեղծագործաբար մեկնաբանելու ունակությունը: |
| | **Արդյունք.** Ուս.պլան., V.1. **Ուս.պլան. V**.4. |
| **35.Դինամիկա (շարժունակություն)** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք բնության երևույթներն ուսումնասիրելու արդյունքում ստացած տպավորություններն ու դինամիկան փոխանցելու, պարզ նկարչական միջոցները գործնականորեն կիրառելու ունակությունները: Ամրապնդենք սեփական աշխատանքում կիրառված միջոցները քննարկելու ունակությունը, աշխատանքը քննադատորեն գնահատելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4. |
| **36.Ռիթմը նկարչության մեջ** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք նկարչության մեջ ռիթմ հասկացության հետ: Մշակենք կոնկրետ աշխատանքը վերլուծելու, այն քննարկելու, սեփական աշխատանքում ռիթմիկ կոմպոզիցիա կառուցելու ունակությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.4. |
| **37. Նկար խճաքարերի վրա** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք դեկորատիվ աշխատանք ստեղծելու ունակությունը, զարգացնենք երևակայությունը, մշակենք նրա մոտ դիմանկար նկարելու և դիմանկարում դիմախաղն արտացոլելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.4 |
| **38. Ամենն իմ հայրենիքն է...** | **Նպատակ.** Աշակերտի մոտ ամրապնդենք հայրենի մշակույթի, պատմության կարևորագույն իրադարձությունների գիտելիքները, զարգացնենք վրացական նյութական մշակույթի մասին գոյություն ունեցող տեղեկություններն ինքնուրույն գտնելու հմտությունը, արթնացնենք հետաքրքրություն՝ Վրաստանի պատմական շրջանների անցյալի և ներկայի հանդեպ: |
| | **Արդյունք.** Ուս.պլան., V.3., **Ուս.պլան. V**.5., **Ուս.պլան. V**.6. |
| **39. Համամասնություն** | Նպատակը. Աշակերտի մոտ մշակենք առարկաների համամասնությանը ուշադրություն դարձնելու և այն գործնականորեն պատկերելու ունակությունը: |
| | **Արդյունք.** Ուս.պլան.V.3., Ուս.պլան.V.5., Ուս.պլան.V.6 |
| **40.Տարբեր չափերի առարկաներ** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք առարկաներն ուսումնասիրելու, դրանց չափսերի փոխհարաբերակցության ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4 |
| **41.Նորեն կմեծանան...** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք արվեստի ստեղծագործությունն ընկալելու, վերլուծելու և դրա գլխավոր իմաստը «կարդալու» ունակությունը, առաջին աղբյուրի (գրական տեքստի) հետ դրա հարաբերակցությունը վերլուծելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5., **Ուս.պլան. V**.6 |

| | |
|---|---|
| **42. Նկար և տպավորություն** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք նրա համար ցանկալի թեմայով աշխատանք ստեղծելու գործնական հմտություն, ամրապնդենք թեմայի համապատասխան գեղարվեստական տարրեր ընտրելու և կիրառելու կարողություն, զարգացնենք աշխատանքը ներկայացնելու և դրա շուրջ դատողություններ անելու ունակությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4. |
| **43.Ծուռ հայելի** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք մարդու հիմնական համամասնություններն ուսումնասիրելու և կերպարներ նկարելիս այն գործնականում կիրառելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4. |
| **44. Մարտական տեսարաններ** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի կողմից տարբեր մշակույթներում նույն թեմայի շուրջ ստեղծված աշխատանքները համեմատելու ունակությունը, ամրապնդենք ստեղծագործությունների միջոցով տեղեկություններ ստանալու հմտությունը: Զարգացնենք տեսական գիտելիքը գործնականում հեշտությամբ կիրառելու ունակությունը (մարտական տեսարան՝ Վրաստանի որևէ պատմական դրվագի վերաբերյալ): |
| | **Արդյունք՝ Ուս.պլան. V**.1., **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5 |
| **46. Նվեր մայրիկին** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք դեկորատիվ աշխատանք ստեղծելու ունակությունը, արթնացնենք երևակայությունը, ինչպես նաև, մշակենք աշխատանքը հաջորդաբար ծրագրելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2., **Ուս.պլան. V**.4 |
| **46. Դասարանային ցուցատախտակ** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք սեփական ստեղծագործությունը ներկայացնելու ունակությունը, ամրապնդենք նյութական մշակույթի հուշարձանների մասին տեղեկություններ ձեռք բերելու և ներկայացնելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4 |
| **47. Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն՝ Զատիկ** | **Նպատակ.** Ամրապնդենք աշակերտների վրացական կրոնական և մշակութային ավանդույթների մասին գիտելիքները, զարգացնենք գեղարվեստական ստեղծագործությունները դիտարկելու ունակությունը, գործնական աշխատանքում ավանդական տարրերը գիտակցաբար կիրառելու հմտությունը: |
| | **Արդյունք.** Ուս.պլան., V.1., **Ուս.պլան. V**.4., **Ուս.պլան. V**.5., **Ուս.պլան. V**.6. |
| **48.Ամենն իմ հայրենիքն է.** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք Վրաստանի տարբեր տարածաշրջանների և այնտեղ պահպանվող վրացական մշակույթի հուշարձանների հետ, մշակենք նյութերը կուտակելու, վերլուծելու և սեփական աշխատանքը լայն լսարանի առջև ներկայացնելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.3., **Ուս.պլան. V**.4., **Ուս.պլան. V**.5., **Ուս.պլան. V**.6. |

| | |
|---|---|
| **49.Հին և նոր քաղաք** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի ճարտարապետական կառույցներն ուսումնասիրելու, դրանք բնութագրելու ունակությունը, խորացնենք գիտելիքը հին և ժամանակակից ճարտարապետական կառույցների յուրահատկությունների տեսանկյունից, ամրապնդենք ճարտարապետական էսքիզ, պատկեր ստեղծելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **50. Վրձնահարված և գույնի գրադացիա (աստիճանավորում)** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք գույնի գրադացիայի հասկացության հետ և զարգացնենք այն գործնականում կիրառելու հմտությունը, ամրապնդենք գեղարվեստական ստեղծագործությունն ուսումնասիրելու և այն վերլուծությամբ ընկալելու ունակությունը, խորացնենք աշխատանքից ստեղծված տպավորությունների ձևավորման և ստեղծագործության հետ դրանք կապելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4 |

| | |
|---|---|
| **51. «Հին» և «նոր» գեղանկարչություն** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք արվեստի ստեղծագործությունը դիտարկելու, համեմատական վերլուծության ունակությունը, զարգացնենք տարբեր ժամանակաշրջանի արվեստի նմուշների յուրահատկությունները «կարդալու» ունակությունը, ամրապնդենք տարբերվող նկարչական միջոցները քննարկելու հմտությունը: Մշակենք բազմերանգ նկարչական միջոցներով աշխատանք ստեղծելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5 |
| **52. Ինչպես նկարենք խնձոր** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի հասկացությունների հետ: Նրա մոտ մշակենք հարթության վրա կլոր առարկան պատկերելու հմտությունը լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի միջոցով: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4 |
| **53. Հսկա քանդակներ** | **Նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք աշխարհի հայտնի վիթխարի քանդակների ստեղծման պատմությանը, մշակենք դրանք բնութագրելու հմտությունը: Զարգացնենք տեղեկությունն ինքնուրույն ձեռք բերելու, պարբերականության ունակությունը: |
| | Արդյունք ՝ **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5 |
| **54. Ապլիկացիա գործվածքով** | **Նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք տարբեր արհեստական ռեսուրսները և ավանդական նկարչական նյութերը սինթեզի ենթարկելու միջոցով ապլիկացիա ստեղծելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.2, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5 |
| **55. Վրաստանի արքաները** | **Նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք արվեստի ստեղծագործություններում վրացի պատմական անձանց ճանաչելու ունակությունը, զարգացնենք արվեստի ստեղծագործությունը բնութագրել-վերլուծելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **56. Ջրաներկ. նուրբ և թեթև ներկեր** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի շրջակա միջավայրը դիտարկելու ունակությունը և ուսումնասիրության արդյունքները գործնականում կիրառելու հմտությունը, մշակենք ջրաներկով քաղաքի կամ գյուղի բնանկար ստեղծելու ունակությունը, տարբեր էֆեկտներ և ֆակտուրա ստեղծելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4. |
| **57. Ամենն իմ հայրենիքն է...** | **Նպատակ.** Աշակերտի մոտ հետաքրքրություն առաջացնենք վրացական մշակույթի հանդեպ, զարգացնենք տեղեկությունն ինքնուրույն ձեռք բերելու ունակությունը: Զարգացնենք այն տեսակավորելու և ներկայացնելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.5., **Ուս.պլան. V**.6. |
| **58. Ցուցասրահ** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի կողմից արվեստի ստեղծագործությունն ընկալելու, վերլուծելու ունակությունը, ամրապնդենք կերպարվեստի հիմնական տարրերը՝ կոմպոզիցիան, գույնը, գիծը և այլն, վերլուծելու և տպավորության հետ կապակցելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.4., Ուս.պլան V.5 |
| **59. Մարդ, գործունեություն, շրջակա միջավայր** | **Նպատակ.** Զարգացնենք աշակերտի կողմից արվեստի ստեղծագործությունն ուսումնասիրելու միջոցով տարբեր սոցիալական շերտերի ներկայացուցիչներին ճանաչելու ունակությունը, ամրապնդենք նկարի վրա արտացոլված շրջակա միջավայրը և դետալները կերպարների հետ կապակցելու ունակությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |

| | |
|---|---|
| **60. Աշխատում ենք կավով** | **Նպատակ.** Զարգացնենք կավով պլաստիկ կերպարներ ստեղծելու աշակերտի ունակությունը, խորացնենք դեկորատիվ և կիրառական առարկաներ ստեղծելու ունակությունը, մշակենք տարբեր նյութերով դեկորատիվ աշխատանք ստեղծելու հմտությունը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2, **Ուս.պլան. V**.4 |
| **61. Ակվարիում** | **Նպատակ.** Զարգացնենք թղթի, պլաստիկի և ապլիկացիայի միջոցով դեկորատիվ աշխատանք ստեղծելու աշակերտի ունակությունը, ամրապնդենք ֆակտուրան տարբեր միջոցներով ստանալու հմտությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2, **Ուս.պլան. V**.3, **Ուս.պլան. V**.4 |
| **62. Վրաստանի տեսարաններ** | **Նպատակ.** Ամրապնդենք արվեստի ստեղծագործությունն ուսումնասիրելու աշակերտի ունակությունը, այն բնութագրելու և վերլուծելու ունակությունը, զարգացնենք բնանկար նկարելու գործնական հմտությունը: |
| | Արդյունք **Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **63. Նախագիծ-դպրոցի բակը** | **Նպատակ.** Մշակենք խնդիրը որոշելու, համագործակցության ուղիներ գտնելու և իրականացվելիք աշխատանքին ստեղծագործականորեն մոտենալու՝ աշակերտի ունակությունները: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2 |
| **I գլխի ամփոփիչ դաս** | **Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: Ստուգել գործնական ունակությունների մշակման մակարդակը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.2, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **II գլխի ամփոփիչ դաս** | **Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: Ստուգել գործնական ունակությունների մշակման մակարդակը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.2, **Ուս.պլան. V**.3, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **III գլխի ամփոփիչ դաս** | **Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: |
| | Արդունք՝ **Ուս.պլան. V**.1, **Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **IV գլխի ամփոփիչ դաս** | **Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |
| **V գլխի ամփոփիչ դաս** | **Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: |
| | **Արդյունք. Ուս.պլան. V**.4, **Ուս.պլան. V**.5, **Ուս.պլան. V**.6 |

# 5.Ուսուցչի գրքի տեսություն

## Կոմպլեկտացիայի (համալրման) կազմ

### Կիրառման մեթոդներ

**V դասարանի «Կերպարվեստի և կիրառական արվեստի» առարկայի կոմպլեկտացիայի կազմում** Աշակերտի դասագիրքն ու Ուսուցչի գիրքն են: Աշակերտի դասագրքում ներառված են Ազգային ուսումնական պլանով նախատեսված բոլոր թեմաները, որոնք երաշխավորում են արդյունքը՝ ուսուցման համակարգում:

Ուսուցչի գրքում տրված են.

- Ընդհանուր տեղեկություններ V դասարանի Աշակերտի դասագրքի մասին (նպատակներ, կառուցվածք, բովանդակություն, մեթոդաբանություն, համալրում):
- Կերպարվեստի և կիրառական արվեստի V դասարանի չափորոշիչը:
- Չափորոշչի արդյունքներին հասնելու և բովանդակության փոխկապակցման մատրիցան:
- Ուսուցչի գրքի տեսություն, համալրման կազմը, կիրառման ցուցումները:
- Առարկայի դասավանդման գործընթացում դեպի  աշակերտը կողմնորոշված (կենտրոնացած) մոտեցման առանձնահատկությունները, թիրախային տարիքի յուրահատկությունները:
- Յուրահատուկ, առարկայական և ընդհանուր համապիտանի ունակությունները:
- Դեպի աշակերտը կողմնորոշված դասավանդման հիմնական ռազմավարությունները, որոնց վրա հիմնվում է դասագիրքը:
- Կրթական ռեսուրսները:
- Աշակերտի գնահատման սկզբունքները:
- Ընդհանուր հանձնարարականներ՝ կապված ակտիվությունների անցկացման հետ:
- Դասը ծրագրելու ընդհանուր սկզբունքները:
- Դասերի նմուշային սցենարներ (ընդամենը 16 դասի սցենար, այստեղից առաջին գլխում 12 սցենար, հաջորդ չորս գլուխներում՝ մեկական):
- Ամփոփիչ դասերի նյութեր՝ թեստեր, ինչպես նաև դրանց պատասխանները: Նաև՝ աղյուսակ աշակերտի ինքնագնահատման համար՝ «Գիտելիքների սնդուկ» խորագրով:

Առարկայի առանձնահատկությունից ելնելով, որպես հավելում ներկայացված են պատկերազարդ հարուստ նյութեր՝ էլեկտրոնային ռեսուրսի տեսքով, որոնք ներբեռնված են հրատարակչության կայքում և ֆեյսբուքյան էջում:

Բոլոր վերոնշյալ հարցերն Ուսուցչի գրքում նշված են համապատասխան համարով և ամրագրված են բովանդակության մեջ:

# 6. Առարկայի ուսուցման գործընթացում դեպի աշակերտը կողմնորոշված (կենտրոնացած) մոտեցումների, թիրախային տարիքի առանձնահատկությունները

## Երեխայի զարգացման առանձնահատկությունները

### Ֆիզիկական զարգացումը և դրա ազդեցությունը դպրոցական կրտսեր տարիքի երեխայի հոգեբանական զարգացման վրա

**5-6 տարեկան երեխա**

Կրտսեր դպրոցական տարիքը՝ 5-6 տարեկանից 11 տարեկան ընկած ժամանակահատվածն է: Այս ընթացքում երեխայի կյանքում այնպիսի կարևոր իրադարձություն է տեղի ունենում, ինչպիսին ուսուցման մեկնարկն է:

Տվյալ ժամանակամիջոցում երեխայի օրգանիզմն ինտենսիվ կենսաբանական աճ-զարգացում (կենտրոնական և վեգետատիվ նյարդային համակարգ, ոսկրային-մկանային համակարգ, ներքին օրգաններ) է արձանագրում: Բարձրանում է նյարդային գործընթացների ակտիվությունը: Նյարդային գործընթացների ակտիվությունը գերազանցում է զսպվածության գործընթացին և պայմանավորում դպրոցական կրտսեր տարիքի երեխայի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են չափից շատ էմոցիոնալ գրգռվածություն և անհանգստություն: Երեխային մի կողմից բնորոշ է կրկնակի ֆիզիկական դիմացկունությունը, մյուս կողմից՝ շուտ հոգնելը և նյարդա-հոգեկան գործընթացների խոցելիությունը:

Նրանց աշխատունակությունը 25-30 րոպե անց, սովորաբար նվազում է: Երեխաները հոգնում են նաև երկարօրյա խմբում մնալու ժամանակ, ինչպես նաև հուզականորեն ծանրաբեռնված դասերի և միջոցառումների արդյունքում:

Քանի որ մկանային համակարգի և դրա կառավարման գործընթացների զարգացումը չի ընթանում համաժամանակյա ընթացքով, այս տարիքի երեխաները բնութագրվում են շարժողական ակտիվության զարգացման առանձնահատկություններով: Խոշոր մկանների զարգացումն առաջ է ընկնում մանր մկանների զարգացումից, այդ իսկ պատճառով, երեխաների մոտ ավելի լավ են զարգացած խոշոր շարժողական հմտությունները, քան մանր (նուրբ) շարժողական հմտությունները (օրինակ՝ գրելը):

**6-8 տարեկան երեխա**

6 տարեկան, ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխան շատ է սիրում խաղալ, սակայն այժմ նրա հիմնական ակտիվությունը՝ նոր, որոշակի օրակարգը յուրացնելն է:

6-8 տարեկան երեխան լի է ֆիզիկական էներգիայով: Նա ունի չափից ավելի էներգիա, շատ է շարժվում: Ճիշտ է, նա ֆիզիկապես զարգացած է, սակայն աճման գործընթացն ընթանում է անհամաչափ: Սիրտը չի մեծանում մարմնին համաչափ: Այդ պատճառով, նա չի կարող իրականացնել երկարատև լարված ֆիզիկական ակտիվությունն: Նրան հարկավոր են դադարներ՝ հանգստի համար:

**9-11 տարեկան երեխա**

Այս տարիքի երեխան ֆիզիկապես **ակտիվ է**, էներգիայով լի, ինչը հիմք է ֆիզիկական ակտիվության համար: Սիրում է արկածներ, տպավորություններ, ֆիզիկական վարժություններ: Այս տարիքի երեխան այնքան է զբաղված իր առօրյա արկածներով, որ կարող է ուշադիր չլինել սեփական իրերի, հագուստի խնամքի նկատմամբ: Հարկավոր է այս խնդրին բևեռել նրա ուշադրությունը:

**Կոգնիտիվ (ճանաչողական) գործընթացների զարգացում**

Կրտսեր դպրոցական տարիքում տեղի է ունենում անցում՝ ճանաչողական հոգեկան գործընթացների ինքնաբերական ձևից (իրագործվում է խաղի կամ գործնական ակտիվության ընթացքում) առ հոգեկան ակտիվության ցանկացած, անկախ ձև, որն ունի իր նպատակը, դրդապատճառը, իրականացման միջոցները և հնարավորությունները:

**Ընկալում**

Դպրոցական կրտսեր տարիքի երեխայի ընկալումը ոչ բավարար է բաշխված: Այդ պատճառով այս տարիքի երեխան երբեմն խառնում է նման ուրվագիծ ունեցող տառերն ու թվերը (6-9, դ-ղ): Այդ պատճառով ընկալման զարգացումը մեծ նշանակություն ունի գրել և կարդալ սովորելու տեսանկյունից:

**6-9 տարեկան երեխա**

Այս տարիքում երեխան հաճախ չի ճանաչում պատկերը, եթե այն տարածության մեջ մի փոքր այլ կերպ է ներկայացված: Օրինակ, որոշ երեխաներ չեն կարող ընկալել ուղիղ գիծը, որպես ուղիղ, եթե այն տրված է թեք կամ հորիզոնական:

Երեխան ընկալում է նշանի, խորհրդանիշի ընդհանուր պատկերը և չի կարող տեսնել դրա տարրերը:

Այս տարիքի երեխայի ընկալումը սահմանվում է առաջին հերթին, հենց օբյեկտի հատկանիշներով: Այդ իսկ պատճառով, երեխաներն առարկայի մեջ ոչ թե գլխավորն ու կարևորն են տեսնում, այլ առարկայի աչքի ընկնող «պայծառ» հատկությունները (գույն, ձև, չափ):

**Դիտողականության հմտություն**

Կարևոր է, որ երեխաների մեջ ամրագրենք դիտողականություն: Ուսուցիչը կարող է իր մեծ ներդրումն ունենալ երեխայի ընկալողունակության զարգացման մեջ, եթե ճիշտ ընտրի նկարներ, պատկերներ և օգնի նրան ընկալումը կազմակերպելու հարցում ՝ խնդրի նրան ուսումնասիրել նկարի դետալները որոշակի հերթականությամբ, նկարում գտնի տարբեր դետալներ, մասերից ստանա ամբողջականը և այլն: Դպրոցական կրտսեր տարիքում զարգանում է **սինթեզային ընկալումը՝ ընկալված օբյեկտի տարրերի միջև կապի հաստատումը:** Եթե մինչ այդ նկարը բնութագրելիս երեխան անվանում էր նկարում պատկերված օբյեկտները, ապա այժմ (6-7 տարեկան) նա կարող է նկարագրել նկարը, հետագայում (8 տարեկան) կկարողանա նաև մեկնաբանել: Ուսուցիչը երեխայի մոտ պետք է փորձի զարգացնել մեկնաբանության հմտությունը՝ բազմատեսակ առաջադրանքների հաշվին:

Դասավանդման արդյունքում այս տարիքի երեխայի ընկալումը վերլուծական է դառնում, քանի որ ձեռք է բերում կազմակերպված դիտողականություն: Ուսուցիչը պետք է զարգացնի երեխայի կողմից օբյեկտի էական նշանների, առարկաների և երևույթների հատկությունների ընկալման ունակությունը: Ընկալման զարգացման արդյունավետ մեթոդներից մեկը՝ համեմատությունն է:

**Ընկալմանը բնորոշիչ է նաև հուզականությունը**: Երեխայի վրա հատկապես մեծ ազդեցություն է թողնում ուսուցչի էմոցիոնալ գովքը, գնահատականը, քան չեզոք տոնով ասված, թեկուզև, դրական արտահայտությունները:

**Ընկալման հաջորդ յուրահատկությունը՝ կապն է գործողության հետ:**

6-7 տարեկան երեխայի ընկալումը սերտ կապված է երեխայի գործնական աշխատանքի հետ: Առարկայի ընկալումը երեխայի համար նշանակում է առարկայի կիրառման, ինչ-որ բան փոփոխելու, ձեռքն առնելու միջոցով ակտիվության դրսևորում: Այդ պատճառով դպրոցական կրտսեր տարիքի երեխաների ուսուցման ժամանակ, շատ ժամանակ է պետք տրամադրել առարկաների հետ գործնական շփմանն ու տեսանելի նյութի հետ առնչությանը:

Զարգանում է ընկալման **«սոցիալականացում»**, երեխան առավելություն է տալիս մարդուց ստացած ազդանշաններին:

Չնայած ընկալման զարգացման այսպիսի առաջընթացին, այս տարիքում միևնույն է առաջնային են առարկայի արտաքին, տեսանելի հատկությունները: Այդ հարցում երեխան հաճախ սխալվում է, քանի որ եզրակացություններ է անում արտաքին, տեսանելի հատկությունների վրա հիմնվելով: Օրինակ, տվյալ տարիքի երեխայի համար, եթե առարկան մեծ է, ապա նաև ծանր է:

Դպրոցական կրտսեր տարիքում ժամանակի և տարածության ընկալումը որոշակի բնութագրիչներ ունի, ինչը պետք է նախատեսվի՝ բնության, պատմության, աշխարհագրության ուսուցման ժամանակ: Կրտսեր դասարաններում ժամանակի և տարածության ընկալումը սերտ կապված է երեխաների անձնական փորձի հետ, ինչը բավական սակավ է տվյալ տարիքում: Օրինակ, երեխան, ով գիտի, որ նրա պապիկը 60 տարեկան է, հնարավոր է նրան հարցնի. «Դու դինոզավր տեսե՞լ ես»: Քանի որ նրա համար պապիկի ծնունդը և դինոզավրերը, «շատ վաղուց» են տեղի ունեցել, կամ, եթե երեխային հարցնենք. «Քանի՞ կիլոմետր է մինչև քո տունը», նա հնարավոր է պատասխանի՝ 1000 կմ, քանի որ նրա համար 20, 500, 1000 կմ նշանակում է «շատ հեռու»:

Դպրոցական կրտսեր տարիքի երեխայի ընկալման զարգացումը հնարավոր է այնպիսի ակտիվություններով, ինչպիսիք են՝ նկարչությունը, նկարների ուսումնասիրությունը, դրանց նկարագրությունը, նմանություն-տարբերություն գտնելը, ծեփումը, հեքիաթների, բանաստեղծությունների, պատմվածքների ունկնդրումը և շարադրումը, հանելուկների կռահումը և այլն: Այս ակտիվություններն իրականացնելիս երեխան ընտելանում է օբյեկտիվ նյութի ձևափոխմանը և ստիպված է հաշվի առնել առարկայի օբյեկտիվ հատկությունները: Համապատասխանաբար, ընկալումն ավելի շեշտադրված և կազմակերպված է դառնում:

### Ուշադրություն

Երեխան պետք է կարողանա կենտրոնացնել ուշադրությունը ուսումնական խնդիրների վրա, որպեսզի որոշ ժամանակով պահպանի ինտենսիվ ուշադրությունը և ոչ թե տեղափոխի այն մեկ օբյեկտից մյուսը: Սակայն 5-8 և 9-11 տարեկան հասակում ցանկացած ուշադրություն հնարավոր է միայն ուժերի մոբիլիզացման և ուժեղ լարվածության կամ արտաքին ջանքերի դեպքում: Սովորական իրավիճակում երեխան դժվարանում է կառավարել ուշադրությունը:

Դպրոցական կրտսեր տարիքին բնորոշ է թույլ զարգացած ուշադրությունը: Փոխարենը լավ է զարգացած բնազդային ուշադրությունը: Նոր, անսպասելի, հետաքրքիր, լուսավոր ամեն ինչ գրավում է երեխայի ուշադրությունը: Հնարավոր է, որ երեխան իր ուշադրությունը չկենտրոնացնի ուսումնական նյութի էական դետալներին՝ կենտրոնանալով ոչ էականի վրա, այն պատճառով, որ դրանք գրավել են նրա ուշադրությունը:

Բացի այդ, երեխայի ուշադրությունը սերտ կապված է մտածելակերպի հետ, այդ պատճառով նա դժվարանում է ուշադրությունը կենտրոնացնել իր համար անհասկանալի, աղոտ նյութի վրա:

Առաջին և մասամբ, երկրորդ դասարանցիները չեն կարող երկարատև կենտրոնանալ մեկ ուղղությամբ: Հատկապես, եթե աշխատանքն անհետաքրքիր է և միագույն: Արդյունքում, երեխան չի կարողանում իրականացնել հանձնարարությունը, տառասխալներ է անում, բառեր է բաց թողնում նախադասություններում: 5-6 տարեկան երեխան մեկ ուղղությամբ ուշադրությունը կարող է կենտրոնացնել 15-20 րոպեի ընթացքում: 1-2-րդ դասարանում ուշադրությունն ավելի կայուն է արտաքին ակտիվություններն իրականացնելիս, քան մտավոր ակտիվության ժամանակ: Այդ պատճառով հարկավոր է մտավոր ակտիվությունը փոխարինել գործնական ակտիվություններով (նկարչություն, ծեփում, երգեցողություն, վարժանք): Ողջ դասի ընթացքում ուշադրությունը կարող են պահել միայն երրորդ դասարանցիները: Ուշադրության այս հատկությունը հոգեբանության մեջ կոչվում է **ուշադրության կայունություն (ուշադրության երկարատև կենտրոնացում մի ուղղությամբ, նույն օբյեկտի վրա):**

Դպրոցական կրտսեր տարիքում վատ պահվածքի բարդությունների պատճառներից մեկը՝ ուշադրության թուլությունն է: Այդ պատճառով կարևոր է գիտենալ այն, թե ինչպես է ձևավորվում

ցանկացած ուշադրություն ու ինչպես է հնարավոր զարգացնել այն: Ընդունված է ասել, որ ցանկացած ուշադրություն, ի տարբերություն ինքնաբերականի, չի առաջանում օրգանիզմի հասունության հետևանքով: Այն ձևավորվում է սոցիալական համատեքստում, երեխայի և մեծահասակի, ուսուցչի հետ փոխհարաբերության արդյունքում: Ցանկացած ուշադրության ձևավորման համար կարևոր է երեխայի ակտիվության կազմակերպումը:

Շրջակա միջավայրը ճանաչելու ընթացքում երեխան սկզբից առանձնացնում է միայն որոշակի օբյեկտներ, այնուհետև կարողանում է բնութագրել ամբողջ իրավիճակը և վերջում, մեկնաբանել: Միաժամանակ, սկզբում երեխան ուշադրությունը կարող է սևեռել միայն այն նպատակի վրա, որը նրա առջև դնում է մեծահասակը, իսկ հետո նաև իր կողմից նախանշված նպատակի վրա: Ցանկացած ուշադրության զարգացման նախնական փուլում, մեծահասակը խոսքով, կամ ժեստով առանձնացնում է շրջակա միջավայրի օբյեկտը և այդպես գրավում երեխայի ուշադրությունը: Օրինակ, ուսուցիչն ասում է. «Պատրաստվեք, հանեք գունավոր մատիտները, նկարչական տետրերը»:

### Հիշողություն

Հիշողությունը 5-6 տարեկան երեխայի հոգեբանության առաջնային գործոնն է: Այդ տարիքում հիշողությունը կրում է ինքնաբերական բնույթ, ինչը կախված է նրանից որ երեխայի մոտ դեռ լավ չի զարգացած անհրաժեշտ հիշվող նյութի ընկալման ունակությունը, ավելի քիչ են զարգացած զուգորդելու հմտությունները, ունի սակավ փորձ և չի տիրապետում հիշելու տեխնիկային:

Եթե որևէ իրադարձություն երեխայի համար հուզականորեն կարևոր է և նրա վրա տպավորություն է թողել, այդ դեպքում ինքնաբերական հիշողությունը դառնում է հստակ ու կայուն:

Հայտնի է, որ դպրոցական կրտսեր տարիքի երեխան կարող է հեշտությամբ հիշել «անիմաստ» նյութը, թերևս նրա համար անհասկանալի բառերը, արտահայտությունները, բանաստեղծությունները: Դրա պատճառն այն է, որ այս նյութի հնչեղության հանդեպ երեխան ունի հատուկ հուզական կախվածություն (եթե ներգրավված է խաղի ակտիվությանը): Միաժամանակ, հենց անհասկանալի տեղեկությունը կարող է հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ և գրավել նրա ուշադրությունը:

Դպրոցական կրտսեր տարիքում հիշողության առաջատար տեսակներն են՝ հուզական և ակնառու-**պատկերավոր** հիշողությունը: Երեխաները հեշտությամբ և հստակ հիշում են աչքի ընկնող, պայծառ, հետաքրքիր նյութերը, որոնք նրանց վրա հուզական ազդեցություն են թողել:

Ինչ վերաբերում է ակնառու-պատկերավոր հիշողությանը, երեխաներն ավելի լավ են հիշում կոնկրետ առարկաներ, իրադարձություններ, դեմքեր, քան բացատրություններ, նկարագրություններ: Այդ պատճառով ուսումնական նյութն ավելի լավ հիշելու համար, պետք է կիրառվեն մեծ քանակությամբ տեսանելի նյութեր: Այդուհանդերձ, հիշողության մեջ գրված նկարը հնարավոր է ժամանակ անց փոփոխությունների ենթարկվի՝ կորչեն կամ ուռճացվեն որոշ դետալներ:

Այսինքն, դպրոցական կրտսեր տարիքի երեխաներն ամենից լավ հիշում են կոնկրետ իրադարձություններ, որոնք ունեն հուզական բաղադրիչներ:

Երբ ասում ենք, որ դպրոցական կրտսեր տարիքի երեխաներն ունեն ակնառու-պատկերավոր լավ հիշողություն (ինչպես վիզուալ, այնպես էլ ակուստիկ), պետք է հիշենք, որ հիշողության այս ձևը դժվար է ենթարկվում ցանկացած վերականգնման: Լավ հիշողությունը սովորաբար ենթադրում է հիշել բառերը, բովանդակությունը: Իսկ կրտսեր տարիքի աշակերտների մոտ, հատկապես առաջին և երկրորդ դասարանում, բանավոր լսած տեղեկությունները սերտելիս, գործում է հիշողության մեխանիկական մեթոդը: Տեքստի բովանդակության հնարավորինս ճիշտ վերարտադրումը, մեծահասակների կողմից գնահատվում է որպես երեխայի կողմից բարեխղճորեն կատարված տնային աշխատանք և արժանանում բարձր գնահատականի: Սա իր հերթին, խրախուսում է երեխային նյութը պատմել, որքան հնարավոր է տեքստին մոտ: Մանավանդ, որ նրանք դեռ չեն կարող ընդհանրացնել: Երեխաների բանավոր խոսքն այնքանով զարգացած չէ, որ սեփական բառերով փոխանցեն տեքստի բովանդակությունը: Այդ պատճառով, սխալվելու վախից նրանք բառ առ բառ վերարտադրում են տեքստը:

Դպրոցական կրտսեր տարիքում ուսուցիչը պետք է աշխատի բառային և տրամաբանական հիշողության զարգացման վրա, այսինքն խորհրդանշական հիշողության զարգացման վրա: Վերբալ **(խոսքային) հիշողությունը** կապված է խոսքի հետ և վերջնականապես ձևավորվում է 10-13 տարեկան հասակում: Դա բնութագրվում է որպես սեփական բառերով տեքստի ճշգրիտ վերարտադրում:

**Տրամաբանական հիշողության** բնութագրիչը տեքստի բնօրինակը հիշելն է: Այդ պատճառով, տրամաբանական հիշողությունը սերտ կապված է մտածողության հետ: Նրա միջոցներից մեկը նյութի իմաստային խմբավորումն է: Դպրոցական կրտսեր տարիքի երեխաները այս տեխնիկան ինքնուրույն չեն կարող կիրառել (չեն կարող վերլուծել տեքստը, չեն առանձնացնում գլխավորը, էականը):

Ուսուցիչը պետք է օգնի երեխային հիշողության այս ձևը զարգացնելու հարցում: Պետք է տեղի ունենա նյութի վերլուծություն, առանձնացվեն առանձին հատվածներ (իմաստային, դժվար հիշելու): Կարևոր է ըմբռնել նյութը, ձևավորել սովորելու մոտիվացիան:

Հետզհետե ցանկացած հիշողություն դառնում է հոգեբանական այնպիսի  գործոն, որի վրա հիմնվում է ուսումնական գործընթացը:

Նյութը հիշելու համար 8-10 տարեկան երեխաները ակտիվորեն կիրառում են կրկնելու տեխնիկան, ինչը չեն անում 5-6 տարեկան երեխաները: Եթե նյութը հիշելու նպատակով 5-6 տարեկան երեխաներին սովորեցնենք կիրառել կրկնելու տեխնիկան, նրանք կօգտագործեն այն և էականորեն կբարելավեն իրենց հիշողությունը: Նոր նյութ մատուցելիս անպայման անհրաժեշտ է նորից հիշեցնել այդ միջոցը (չեն կիրառում ինքնաբուխ կերպով):

7-8 տարեկան երեխաները կիրառում են նաև խմբավորման տեխնիկան: Օրինակ, մեզ հարկավոր է հիշել 6 թվանշան՝ 3, 5, 4, 8, 7 և 1: Հեշտությամբ հիշելու նպատակով, դրանք կարող ենք բաժանել 3 խմբի (35-48-71) կամ 2 խմբի ( 354-871): Ինֆորմացիան հիշելու գործում ներազդում է մասերի քանակը և ոչ՝ պարունակությունը: Կարող ենք խմբավորել նաև նման օբյեկտները: Օրինակ՝ միրգն ու բանջարեղենը: 5-6 տարեկան երեխան այս տեխնիկան կարող է կիրառել ինքնաբուխ, սակայն մինչև վերջ չի գիտակցում, թե ինչպես է հնարավոր կիրառել այն: Նման իրավիճակ կարող է լինել 8-9 տարեկան երեխաների, ինչպես նաև դեռահասների մոտ ևս:

**Մտածողություն**

**Մտածողությունը ճանաչողական հոգեբանական գործընթաց է, որի շնորհիվ տեղի է ունենում պատճառահետևանքային կապերի և ուղղության ամրագրում՝ արտաքին աշխարհի իրադարձությունների և օբյեկտների միջև:**

Երեխայի ճանաչողական ակտիվությունն ու հետաքրքրասիրությունը ուղղված են դեպի շրջակա միջավայրի ճանաչում: Մտածողությունը անմիջապես կապված է խոսքի հետ: Որքան ավելի բարձր է երեխայի մտավոր ակտիվությունը, այնքան ավելի շատ և տարաբովանդակ հարցեր է նա տալիս՝ սա ի՞նչ է,  ո՞վ է,  ինչո՞ւ, ինչի՞ց, ո՞ւմ և այլն:

Որպես օրենք, հարցը տալով երեխան պատկերացնում է իրականությունը: Մտածողության այն ձևը**, որի ժամանակ խնդրի լուծումը տեղի է ունենում ներքին պլանում,** ընկալման և պատկերացման հիման վրա, կոչվում է ակնառու**-պատկերավոր** մտածողություն**:** Մտածողության հենց այս ձևն է բնորոշ դպրոցական կրտսեր տարիքի երեխաներին: Երեխաները դժվարանում են հասկանալ բանավոր արտահայտված միտքը, եթե նրանք չունեն ամուր հիմք: Իհարկե, այս տարիքի երեխան կարող է նաև տրամաբանորեն դատել, սակայն ավելի զգայուն է հատկապես, երբ ուսուցանման հիմքում տեսանելի նյութեր են:

**6-8 տարեկան երեխան՝ դիտորդ է:**

Ճիշտ է, առաջին դասարանի երեխայի մոտ զարգացած է դիտողականությունը, այդուհանդերձ ամեն տեսածը չէ, որ ընկալում է, քանի որ ինտելեկտուալ կարողությունները լիարժեք զարգացած չեն: Հնարավոր է մեծահասակները գերագնահատեն նրա ինտելեկտուալ կարողությունները, ելնելով նրանից, որ երեխան հաճախ է նկատում այնպիսի դետալներ, որոնց ուշադրություն չեն դարձնում մեծերը: Առաջին դասարանցին դատում է «այստեղ» և «հիմա» կատեգորիաներով: Դժվարանում է ըմբռնել ժամանակը, տարածքը և թվերը: Նա կարող է յուրացնել նոր նյութը, եթե այն կապված

է իրեն հայտնի տեղեկության հետ: Այդ պատճառով, ուսուցիչը պետք է լավ իմանա, թե ինչ գիտի երեխան և նոր գիտելիքը կապակցի հին գիտելիքի հետ:

**9-11 տարեկան երեխան՝ հետաքննող է:**

Այս տարիքի երեխան նույնպես լավ դիտորդ է, սակայն ավելի ուշադրությամբ է ուսումնասիրում և տրամաբանորեն դատում: Շատ հարցեր է տալիս և կարող է ինքնուրույն գտնել դրանց պատասխանը:

Այս տարիքի երեխան կուտակում է ամեն ինչ, նրա համար կարևոր է քանակը և ոչ՝ որակը: Մինչև 11 տարեկանը նա չի դասակարգում իր պաշարը (եթե, իհարկե այս հարցում նրան չի օգնում մեծահասակը): Ուսուցիչը երեխայի այս հատկությունը հնարավոր է կիրառի կրթական նպատակով: Երեխան դառնում է ավելի ուշադիր, իսկ պաշարը օգտագործելով կամ փոխելով բարելավվում են նրա անձնամիջյան հարաբերությունները:

Երեխաները սիրում են հետազոտել այն, ինչ նրանց համար անհայտ է: Այս տարիքում նրանք արդեն հասկանում են պատճառահետևանքային կապը, ունեն ժամանակի (ժամանակագրության և պատմության զգայականություն), տարածության, գտնվելու վայրի, հեռավորության լավ ընկալում: Նրանք քննարկում են այն, ինչ հասկանում և տեսնում են:

# 7. Կրթական հատուկ կարիքներով աշակերտներ

Եթե դասարանում կա կրթական հատուկ կարիքներով աշակերտ (ենթադրվում է սահմանափակ կարողությունների տեր, հատուկ տաղանդով օժտված աշակերտներ), ապա ուսուցիչը պետք է փորձի օգնել յուրաքանչյուր աշակերտին՝ սեփական կարողությունները դրսևորելու և կյանքի կոչելու հարցում: Հատուկ տաղանդով օժտված կամ սահմանափակ հնարավորությունների տեր աշակերտի վրա ուսուցիչը պետք է չկենտրոնացնի ուշադրությունը և ավելորդ ուշադրություն չցուցաբերի: Կերպարվեստի, կիրառական արվեստի կամ այլ առարկաների դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է ապահովի իրավահավասարություն: **Աշակերտների անհատական կրթական կարիքները հաշվի առնելով, ուսուցիչը պետք է ապահովի յուրաքանչյուր աշակերտի առավելագույն ներգրավվածությունը և համապատասխանաբար, նպաստի նրանց զարգացման և նվաճումների բարելավմանը:** Չնայած իր տարբերվող կարողությունների, աշակերտը պետք է հասկանա, թե ինչ է պահանջվում կերպարվեստի և կիրառական արվեստի դասին: Ելնելով կրթական կարիքներից, հնարավոր է կիրառել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կամ խառը հարմարեցված հանձնարարություններ: Հարկ եղած դեպքում ուսուցիչը պետք է կիրառի վիզուալ այլ հնարավորություններ ևս:

Կրթական հատուկ կարիքներով աշակերտներին պետք է ախտորոշենք մեծ զգուշությամբ, որպեսզի զերծ մնանք նախ աշակերտի պահվածքի առանձնահատկությունների **սխալ մեկնաբանումից**, ապա կրթական հատուկ կարիքների համար նախատեսվող միջոցների սխալ կիրառումից, որն իր հերթին ենթադրում է ուսումնական գործընթացի ոչ արդյունավետ ծրագրում, միջամտելու սխալ ռազմավարություն և ոչ արդյունավետ միջոցառումների իրականացում:

Նախքան անհատական ուսումնական ծրագիր կազմելը հարկավոր է երեխային գնահատել ինչպես հոգեբանական, այնպես էլ ակադեմիական տեսանկյունից, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը. ի՞նչ է կարող և ի՞նչ չի կարող: Գնահատման շնորհիվ, համապատասխանաբար պետք է մշակվեն երեխայի երկարաժամկետ և կարճաժամկետ անելիքները:

Ուսումնական տարեսկզբին, մեկ շաբաթվա ընթացքում, սահմանվում է այն աշակերտների ցուցակը, որոնք ունեն փոփոխված ծրագրով սովորելու կարիք: Սահմանափակ կարողությունների

տեր աշակերտին բացահայտելուց մեկ շաբաթվա ընթացքում դպրոցը ստեղծում է աշխատանքային խումբ և մշակում անհատական ուսումնական ծրագիր աշակերտի կրթական կարիքներից ելնելով, թիմում միավորվում են այն ուսուցիչները, որոնք դասավանդում են աշակերտին (այլ առարկայի ուսուցիչների հետ միասին մասնակցում է կերպարվեստի և կիրառական արվեստի ուսուցիչը), ինչպես նաև՝ ծնողը/խնամակալը, հոգեբանը, բժիշկը և այլն: Աշխատանքային խումբը վերահսկում է դասղեկը: Բազմադիսցիպլին խմբի հանդիպումները կազմակերպվում են կիսամյակի ընթացքում առնվազն երկու անգամ, որոնց ընթացքում վերլուծվում են ընթացիկ գործընթացները, խոսվում է արդյունքների մասին և մշակվում են կարճաժամկետ ու երկարաժամկետ խնդիրներ: Ամեն կիսամյակի վերջում կազմակերպվում է մեկ ամփոփիչ հանդիպում, բոլոր հանդիպումները գրանցվում են արձանագրությամբ և պահվում աշակերտի անձնական գործում: Անհատական ուսումնական ծրագիրը հաստատում է ուսուցչական խորհուրդը:

# 8. Յուրահատուկ, առարկայական և ընդհանուր համապիտանի ունակություններ

Կերպարվեստի և կիրառական արվեստի առանձնահատուկ, առարկայական իրավասությունները զարգանում են այս առարկայի տեսական և գործնական գիտելիքների և հմտությունների շնորհիվ: Առարկայի առանձնահատկությունից ելնելով, աշակերտի մոտ զարգանում են ինչպես կոնկրետ նկարչական ստեղծագործության ոլորտի ընկալման/գիտակցման, այնպես էլ սեփական գաղափարների, հույզերի, տրամադրությունների փոխանցման, ինքնահաստատման իրավասությունները: Այդ իսկ պատճառով հարկավոր է, որ նա տիրապետի կերպարվեստի և կիրառական արվեստի հիմնական սկզբունքներին և տեխնոլոգիաներին, ճանաչի և կիրառի դրա միջոցները, տարրերն ու ընթացակարգերը: Հմտություններից ամենակարևորները նպաստում են արվեստի դերի և առաքելության վերլուծությանը՝ համաշխարհային մշակույթի համատեքստում (վերլուծության և քննադատական վերլուծության ունակություն), սովորեցնում և ընտելացնում աշակերտին ստեղծագործ մոտեցում ցուցաբերել տարբեր տեսակի խնդիրների լուծման հանդեպ (խնդիրների լուծման ունակություն), զարգացնում են նրա՝ ցանկացած ոլորտում սեփական գաղափարներն ու զգացմունքներն արտահայտելու և դրանց վերաբերյալ դատողություններ անելու սովորությունը (ինքնադրևորման և ստեղծագործական դատողության ունակություն), խթանում են հասարակական կյանքում ներդրում անելու ցանկությունը (ակտիվ քաղաքացիական դիրքորոշման և ազգային ինքնագիտակցության աճ), զարգացնում են տեղեկություններն ինքնուրույն ձեռք բերելու, դրանք ըմբռնելու, մեկնաբանելու ավանդույթը (հետազոտում-որոնման ունակություն), սովորեցնում են համագործակցել ուսման և աշխատանքի մեջ, հանրության հետ փոխհարաբերության ուղիներ գտնել (հաղորդակցության ունակություն), սովորեցնում են լինել օբյեկտիվ և ինքնաքննադատ՝ գործունեության ցանկացած ոլորտում (ինքնագնահատման և սովորելու ունակություն):

Այսպիսով, կերպարվեստի և կիրառական արվեստի ուսուցումը զարգացնում է աշակերտի ինքնատիպ առարկայական իրավասությունները, որոնց վերջնական նպատակն է՝ գեղեցիկի ընկալման, պատկերավորության և երևակայության զարգացումը, արվեստի ստեղծագործությունն ըմբռնելու հմտությունը, արվեստի ընդհանրական լեզուն գիտակցելու ունակությունը, ինչը վրացական և համաշխարհային մշակույթի արժեքները մեկ ամբողջության մեջ ըմբռնելու հնարավորություն է տալիս նրան, և զարգացնում գեղագիտական ընկալման կայուն հիմքը:

### Առաջնահերթ համապիտանի իրավասութուններ

**Գրագիտությունը** ընթերցելու, գրելու, լսելու և խոսելու նպատակով լեզուն կիրառելու ունակությունից զատ, ենթադրում է նաև մարդու կողմից փոփոխական համատեքստում

ընթերցելու, գրելու, տեղեկությունը մշակելու, գաղափարներ և մտքեր արտահայտելու, որոշում կայացնելու և խնդիրները լուծելու ունակությունն է, որ հիմնվում է նրա կողմից ողջ կյանքի ընթացքում ձեռք բերած գիտելիքների վրա:

**Մեդիագրագիտությունը** ավանդական տեքստերի հետ միասին մուլտիմեդիային բնորոշ՝ լեզվական, ձայնային և տեսողական տեքստերը (միաժամանակ. միջոցներ կիրառող) ընկալման/ գիտակցման ունակությունն է: Աշակերտը պետք է կարողանա ընկալել-գիտակցել, մեկնաբանել, կիրառել և ստեղծել մուլտիմեդիա տեքստեր: Միաժամանակ կարևոր է, որպեսզի աշակերտը կարողանա քննադատելով գնահատել մեդիա աշխարհում ստացած տեղեկությունը, ինչը քննադատական դատողության զարգացնելու նախապայմանն է:

**Թվայնացված, համակարգչային գրագիտությունը** աշակերտների մոտ պայմանավորում է ժամանակակից աշխարհում ստեղծագործելու և նորարարական մոտեցումները մշակելու ունակությունը: Այդքանով, լիովին համապատասխանում է առարկայի ոլորտային իրավասություններին:

**Քանակական գրագիտությունը** թվի էության, թվերի միջև ուղղությունների ըմբռնումն է: Քանակական համեմատությունը աշակերտին օգնում է մաթեմատիկայի և այլ առարկաների ուսման հարցում:

**Էկոլոգիական գրագիտությունը** ենթադրում է շրջակա միջավայրի հանդեպ մարդու առողջ վերաբերմունքի ձևավորումը և, քանի որ շրջակա միջավայրն ուսումնասիրելու համար կերպարվեստն ու կիրառական արվեստը տեղեկատվության կարևորագույն աղբյուր են, ապա էկոլոգիական գրագիտությանը հատուկ դեր է տրվում առարկայի ուսուցման գործընթացում:

**Բազմալեզու իրավասությունը** լեզուներին տիրապետելու և կիրառելու ունակությունն է, որի զարգացումը հնարավոր է ցանկացած առարկայի շրջանակներում:

**Նշանագիտական (սեմիոտիկ) իրավասությունը** ենթադրում է տեղեկատվության նշանների տեղափոխում՝ մեկ համակարգից մյուսը: Առարկայի առանձնահատկությունից ելնելով ոլորտային իրավասությունների նման կարևոր է նաև այս իրավասությունը, քանի որ աշակերտին հնարավորություն է տրվում բանավոր կամ ոչ բանավոր (սխեմա, քարտեզ, երաժշտություն և այլն) տեղեկությունը մեկնաբանել և սեփական կարծիքը կամ տպավորությունն արտահայտել արվեստի միջոցով: Օրինակ, բառային տեքստում կամ երաժշտական ստեղծագործության մեջ փոխանցված կարծիքը պատկերազարդմամբ արտահայտելու, խոսքային տեքստը նկարի հետ կապակցելու ունակությունն է, որն առավելապես զարգացնում է կերպարվեստի և կիրառական արվեստի առարկան: Ուսուցման գործընթացն ինքնուրույն կառավարելու ունակությունն է, որն ուսումնական գործընթացի պարտադիր բաղադրիչն է: Ուսուցիչը աշակերտի ուշադրությունը պետք է ուղղի ուսուցման գործընթացի վրա, օգնի աշակերտին գիտակցել այն գործոնները և պայմանները, որոնք խափանում կամ նպաստում են ուսումնական գործընթացի ընթացքին: Բացահայտի այն միջոցներն ու մոտեցումները, որոնք բարելավում են ուսման արդյունքներն ու մշակի ուսման ռազմավարություններն ինքնուրույն կիրառելու ունակությունը:

**Սոցիալական և քաղաքացիական իրավասությունը** ենթադրում է քաղաքացիական կյանք ինտեգրվելուն անհրաժեշտ այնպիսի ունակությունների և արժեքների ձևավորում, որպիսիք են՝ կառուցողական համագործակցությունը, խնդիրների լուծումը, քննադատական և ստեղծագործական դատողությունը, որոշումների կայացումը, հանդուրժողականությունը, ուրիշի իրավունքների հանդեպ հարգալից վերաբերմունքը, ժողովրդավարական սկզբունքների ճանաչումը և այլն: Արվեստի ուսուցման գործընթացում տարբերվող գեղագիտական և ստեղծագործական մոտեցումների առկայությունը հատուկ կարևորություն է տալիս աշակերտի այս իրավասության զարգացմանը:

# 9.Դեպի աշակերտը կողմնորոշված (կենտրոնացած) ուսուցման հիմնական ռազմավարությունները, որոնց վրա հիմնվում է դասագիրքը

**«Ռազմավարություն 3, 2,1»**

Այս ռազմավարությունը կիրառվում է ֆիլմ դիտելու, դիտանյութեր ուսումնասիրելու, տեքստին ծանոթանալու, նախագծի ավարտից հետո: Այս մեթոդը ուժեղացնում է մոտիվացիան, ձևավորում ակտիվ ունկնդրող և ընթերցող, զարգացնում քննադատական դատողությունը: Այն բաղկացած է երեք փուլից.

1. Ուսումնական նպատակից ելնելով ուսուցիչն աշակերտներին առաջարկում է ընթերցել տեքստը, դիտել ֆիլմը կամ ուսումնասիրել դիտանյութերը:
2. Երկրորդ փուլում ուսուցիչը խնդրում է աշակերտներին գրել երեք հարց, որոնք հետաքրքրել են նրանց, այստեղից ընտրել երկուսը, որի մասին ուզում են իմանալ ավելին և պայմանավորվեն այն մեկ հարցի շուրջ, որը պետք է քննարկեն ապագայում:
3. Աշակերտները ներկայացնում են սեփական աշխատանքները:

**«Ռազմավարություն՝ ինչ կհիշեմ դասարանից դուրս գալուց հետո»**

Ուսուցիչը դասի ավարտից 10 րոպե շուտ աշակերտներին բաժանում է փոքր չափի թղթեր և հանձնարարում նրանց ձևավորել դրանք (գրել իրենց անունն ու ազգանունը և այլն), որից հետո մի փոքր պարբերության միջոցով, կանոնավոր և ուղղագրության նորմերի պահպանմամբ, ձևակերպեն իրենց մտքերը, արձանագրեն, թե ինչ է սովորեցրել նրանց կոնկրետ դասը, ընթերցած տեքստը կամ դիտած ֆիլմը: Ի՞նչ կհիշեն դասասենյակից դուրս գալուց հետո:

Կոգնիտիվ դիագրամներով աշխատանքն օգնում է աշակերտներին ընկալել դասի ընթացքում մատուցած կարևոր տեղեկությունը: Աշակերտներին տրվում է գաղափարի, հարցի վերահսկողության մեխանիզմ, որն օգնում է նրանց հաստատել և տեսնել մի մասի և ընդհանուրի, հասկացության և դետալների փոխկապակցությունը:

Կոգնիտիվ դիագրամներով աշխատանքն աշակերտների ակտիվության և անկախության աճի լավ միջոց է: Ուսուցման գործընթացում կոգնիտիվ դիագրամների կիրառումը զգալիորեն փոխել է ուսուցչի դերը և գործառույթը, մատչելի դարձրել ուսուցիչների կառուցվածքային, գործնական դասերի ծրագրումը, տվել ակադեմիական առաջընթացի և հմտությունների մշակման վերահսկողության և գնահատման բավական ճկուն տեխնիկա, ուսուցման և ուսման գործընթացը դարձրել ավելի բազմերանգ և արարչական: Համեմատության ժամանակ հիմնականում կիրառվում է երկու տեսակի գրաֆիկական սխեմա՝ Վենի դիագրամն ու համեմատության մատրիցան:

**Համեմատությունը** առարկաների կամ գաղափարների միջև նմանությունների և տարբերությունների նույնականացման գործընթացն է:

**Դասակարգումը՝** առարկաները կարգերի բաժանելու գործընթացն է, որը հիմնվում է դրանց բնութագրիչների վրա:

Այն ենթադրում է տարրերը բաժանել խմբերի, դրանց միջև նմանության հիման վրա: Դասակարգման ժամանակ կարևոր է նույնականացնել այն կանոնները, որոնք սահմանում են պատկանելությունը դասարանում և կարգերում: Դասակարգման վարժությունների վրա աշխատելիս աշակերտները պետք է իրականացնեն պատրաստի տարրերի դասակարգում: Ուսուցիչն աշակերտներին տեղեկություններ է տալիս այն կարգերի (խումբ, ոլորտ, ժանր, ոճ) մասին, որոնց համաձայն նրանք պետք է իրականացնեն տրված տարրերի դասակարգումը: Նման վարժության մեջ կարևորն այն է, որ աշակերտը ճշգրիտ որոշի տարրի կարգը և իմաստավորի, թե ինչո՞ւ է այս կամ այն տարրը վերագրել այս կամ այն կարգին:

**Համեմատության գործընթացն** արդյունավետ է այն դեպքում, երբ ուսուցչի նպատակը աշակերտների կողմից նույն բնութագրիչների միջև գոյություն ունեցող նմանություն-տարբերությունը տեսնելն է: Այս գործընթացի արդյունավետության համար, ուսուցիչն աշակերտներին առաջարկելու է լավ մտածված կառուցվածքավորված վարժություն: Ինչը ենթադրում է, որ ուսուցիչն աշակերտներին պետք է ցույց տա այն բնութագրիչները, որոնց հիման վրա նրանք կհամեմատեն իրադարձություններն ու արվեստի գործերը: Նման վարժությունները ուսուցչին հնարավորություն են տալիս օգտագործել աշակերտի կողմից արտահայտած մտքերը՝ համապատասխան (անհրաժեշտ) եզրակացություններ անելու համար:

**1. «Վենի դիագրամ»**՝ այս մեթոդը համեմատական վերլուծության հնարավորություն է տալիս և շատ արդյունավետ է տարբեր դարաշրջանների, ոճի և հոսանքների (նմուշների) աշխատանքները համեմատելիս: Կազմված է մեկ կամ երկու օղակից: Վենի դիագրամը պետք է լրացնել հետևյալ կերպ. առաջին և երկրորդ հատվածում գրվում են միմյանցից տարբերվող նշանները, փաստերն ու իրադարձությունները, իսկ երրորդում՝ նմանները:

Սխեման հնարավոր է լրացնել այլ կերպ: Առանձին-առանձին լրացվում են առաջին և երկրորդ հատվածները, իսկ այն ինչ միանման է՝ երկու հատվածներում՝ անցնելով երրորդ հատված:



Դիագրամ 2. Վենի դիագրամ

**2. Համեմատության մատրիցան,** մանրակրկիտ մոտեցման ժամանակ, ավելի հաճախ է կիրառվում, քան Վենի դիագրամը: Նմանությունների և տարբերությունների բացահայտումը կարևոր է նաև դասակարգման ժամանակ, քանի որ որոշակի տարրերի դասակարգումը սկսվում է հենց նմանության և տարբերության նույնականացմամբ: Դասակարգումը ենթադրում է տարրերը բաժանել խմբերի՝ դրանց միջև նմանության հիման վրա: Օրինակ՝ աշակերտները հետազոտում են ճարտարապետական ձևեր՝ սկսած հնագույն քաղաքակրթությունից մինչև ժամանակակից ճարտարապետության նմուշներ (ներառյալ)՝ համեմատության հիման վրա: Աշակերտները համեմատում են Քեոփսի բուրգը և Փարիզի Ապակե բուրգը:

| **Հատկանիշներ** | **Համեմատելու ենթակա օրինակներ** | | | |
|---|---|---|---|---|
| | **№1** | **№2** | **№3** | |
| 1 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |
| 2 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |
| 3 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |
| 4 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |

**«Ռազմավարություն. Գիտեմ-ուզում եմ իմանալ- ի՞նչ եմ հասկացել»**

Եթե ուսուցչի նպատակն է առավելագույնս կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը և նպաստել, որ մտածեն այս կամ այն հարցի շուրջ, ապա ուսուցիչը նրանց առաջարկում է կառուցվածք և փուլային մոտեցում: Այս մեթոդը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը, ակտիվացնում նախնական գիտելիքները, օգնում ամբողջովին գիտակցել նյութը, զարգացնում քննադատական դատողությունը, զարգացնում հարց հղելու հմտությունը, ցույց է տալիս, թե ի՞նչն է կարևոր տրված նյութում, մատնանշում է, թե ի՞նչ է սովորել նա այս նյութը մշակելով և բարձրացնում մոտիվացիան:

Ուսուցիչը հանձնարարում է յուրաքանչյուր աշակերտի, տրված հարցի հետ կապված տեղեկություններին ծանոթանալուց առաջ, լրացնել առաջին և երկրորդ սյունակները, տեղեկատվությանը ծանոթանալուց հետո՝ երրորդը:

| Գիտեմ | Ուզում եմ իմանալ | Ի՞նչ հասկացա |
|---|---|---|
| | | |

**Դիդակտիկ խաղեր և դեռահասի կոգնիտիվ ու տարիքային զարգացում**

Հանրորեն ընդունված և գիտականորեն հաստատված է, որ խաղի վարքագծի հիմքում ընկած է հաճույքը: Երեխայի համար խաղի հիմնական դրդապատճառը ակտիվությունից հաճույք ստանալն է: Խաղի մասին խոսելիս հարկավոր է անդրադառնալ նրա հոգեբանական և կոգնիտիվ հիմքերին:

Խաղի ընթացքում վարքագծի իմպուլսը ֆունկցիոնալ է, այսինքն երեխայի վարքագիծը ուղղորդվում է ֆունկցիոնալ հաճույքով: Այդ պատճառով, երբ երեխան ընդունվում է դպրոց և սկսում սովորել, նրա ինտելեկտուալ ֆունկցիաները գործարկելու համար առավել արդյունավետ է դառնում խաղերի կիրառումը, այսինքն ուսումը խաղի միջոցով անցկացնելը:

Գիտելիքներ ստանալու, ամրապնդելու և ուսումնական հմտությունները զարգացնելու համար հաճախ կիրառվում են զվարճալի, ճանաչողական վարժություններ՝ դիդակտիկ խաղեր:

**Դիդակտիկ խաղերը բազմազան են: Այդ խաղերը կարող են լինել՝**

1. Զվարճալի
2. Դատողական
3. Տրամաբանական
4. Զարգացնող
5. Ճանաչողական
6. Սիմուլյացիոն
7. Իտելեկտուալ

Դիդակտիկ խաղերը, կոգնիտիվ զարգացման տեսությունների համաձայն, երկու խմբի են բաժանվում.

| | |
|---|---|
| 1. Խումբ<br>Այս տիպի դիդակտիկ խաղի ընթացքում երեխայի մտածողությունը դառնում է տրամաբանական, սակայն միևնույնն է՝ սահմանվում ընկալմամբ: Պետք է հաշվի առնել, որ երեխան խնդիրը քննարկում է միայն սեփական ակնկալիքի համաձայն: | 2. Խումբ<br>Այս տիպի դիդակտիկ խաղի ընթացքում երեխաները դասակարգման ժամանակ չեն սխալվում, որովհետև մտածողությունը չի սահմանափակվում միայն ընկալմամբ: Դիդակտիկ խաղի բարդությունը կախված է նրանից, որ այս տարիքում (7-11) դեռահասի գիտակցության մեջ առաջ են գալիս զանգվածի, ծավալի և կշռի մշտականության հիմնական հասկացությունները: Մյուս կողմից, տրամաբանական գործողությունները հնարավոր է իրականացնել միայն իրական առարկաներով: Այդ պատճառով երեխաները հաճախ են լուծում իրական առարկաների հետ կապված խնդիրները, սակայն չեն կարող անել դա ֆորմալ մակարդակի վրա՝ իմաստավորելով և պատկերացմամբ: |

**Դիդակտիկ խաղ «այգեպան»**

«Այգեպան» աշակերտը պետք է անվանի իր սիրելի 3, 4, 5 մրգի տեսակ:

Աշակերտներն անվանում են տարբեր մրգեր: Նույն անվանումը կրկնել կարելի է: Ուսուցիչը գրատախտակին գրում է աշակերտների կողմից թվարկած մրգերը և գրատախտակին «այգու համայնապատկեր» է հայտնվում:

Այնուհետև ուսուցիչը սկսում է զվարճալի հարցերով խաղը: Նա հարցնում է.

Ելակը քաղելու համար պետք է ծառի՞ն բարձրանաս:

Հաղարջը քաղելու դեպքում, ծա՞ռ ես բարձրանալու:

Բալը խո՞տ է.. քաղելու համար պետք է խոտի տերևները կողքի քաշես և այնտե՞ղ գտնես:

Այնուհետև ուսուցիչը գրատախտակին գծում է երեք սյունակից բաղկացած աղյուսակ և ներսում գրում՝ ծառ, թուփ, խոտ: Աշակերտները զվարճալի հարց-պատասխանի արդյունքների համաձայն լրացնում են աղյուսակը:

| Ծառ | Թուփ | Խոտ |
|---|---|---|
| Խնձոր<br>Տանձ<br>Դեղձ<br>Սերկևիլ | Հաղարջ<br>Ազնվամորի<br>Մոշ | Ելակ |

Դիդակտիկ խաղն ուսուցման այնպիսի միջոց է, որը ուսումնական ծրագիրը «քողարկելու» միջոցով, հնարավորություն է տալիս երեխային սերտել գիտելիքն՝ առանց նախնական լարվածության:

Օրինակ, քննարկենք ընթերցողների թատրոնը: Վերջինս այնպիսի դիդակտիկ խաղ է, որը կիրառվում է ընթերցանությունը կատարելագործելու համար՝ այս կամ այն ստեղծագործությունը բանավոր կատարելով, աշակերտներն առանց գիտակցելու վարժվում են ընթերցանության մեջ: Բացի այդ, նրանք վարպետանում են զրուցելու հարցում, ավելի մեծ հետաքրքրություն է առաջանում գրականության հանդեպ:

**Հարկավոր է փոքր ծավալի տեքստ, որն ընթերցվում է 10-15 րոպեում և կազմված է երկխոսություններից, ինչը աշակերտներին դերեր բաշխելու հնարավորություն է տալիս:**

Ընթերցողների թատրոն կազմակերպելու համար պետք է անցկացնել հետևյալ ընթացակարգերը.

- Դասարանում տեքստ ընթերցելու համար պետք է ընտրվեն կամավորներ:
- Յուրաքանչյուր ընթերցողին պետք է տրվի պատճեն, և ուսուցիչը պետք է լսի առոգանությամբ ընթերցված տարբերակը:
- Այնուհետև ուսուցիչը պետք է ընթերցի տեքստը աշակերտների հետ միասին:
- Ոռուցիչը պետք է խնդրի աշակերտներին տեքստն ընթերցել ժեստերով, դիմախաղով, հնչերանգներով:
- Աշակերտները տեքստն ընթերցելու են թատերականացված:
- Նրանք պետք է կրկնեն տեսարանները մի քանի անգամ, որպեսզի ընթերցածը լինի առավել դրամատիկ և կատարելագործված:

Զարմանալի չէ, որ երեխաները առանձնապես են սիրում խաղալ: Այդ ժամանակ նրանք յուրացնում են կենսականորեն անհրաժեշտ ունակությունները և սովորությունները, հարստացնում սոցիալական պատկերացումները և ծանոթանում դժվար և խնդրահարույց իրավիճակներից փրկվելու ուղիների հետ: Դիդակտիկ խաղն ուսուցման յուրահատուկ միջոց է: Այն կիրառելով ուսուցիչը կարող է գեղեցիկ կերպով «քողարկել» ուսումնական խնդիրը և աշակերտը բնական

ճանապարհով, առանց սթրեսի տիրապետի գիտելիքներին: Նշված ռազմավարության կիրառումը արդյունավետ է այն դեպքում, եթե աշխատանքը խմբային բնույթ է ստանում, դասի ընթացքում դերերը բաշխվում են:

## Տարբերակման տեսությունն ու դրա կիրառումը ուսումնական գործընթացում

Տարբերակման տեսությունը հիմնվում է եզրակացության վրա, որի համաձայն աշակերտները զգալի տարբերություններով են առանձնանում (Կ. Տոմլինսոն): Տարբերակման տեսությունը մեզ առաջարկում է ռազմավարություններ, որոնք օգնում են ուսուցչին, հատուկ պայմաններ ստեղծել յուրաքանչյուր աշակերտի լավ սովորելու համար: Դրա համար ուսուցիչը կիրառում է տարբեր ուսումնական նյութեր, տարբերվող առաջադրանքներ և այլ տեսակի պրակտիկա:

Տարբերակման տեսության գործնական կիրառման ընթացքում ուսուցիչն առաջնորդվում է դասարանի ֆասիլիտացման ընդհանուր սկզբունքներով, որոնք արդյունավետ են յուրաքանչյուր աշակերտի համար: Այդ տեսության համաձայն, ուսուցման ընթացքում դասին իրականացված ակտիվությունների

- բովանդակությունը
- գործընթացը
- ապրանքը

**պարբերաբար փոփոխվում են՝ պայմանավորված նրանով, թե կոնկրետ ինչի համար են պատրաստ աշակերտները: Տարբերակման տեսությունը գործնականում կիրառելիս.**

1. Ուսուցիչը ստույգ գիտի, թե ո՞րն է կարևորը դասի մեջ:
2. Ուսուցիչը գիտակցում, գնահատում և հիմնվում է աշակերտների տարբերության վրա:
3. Ուսուցումը և գնահատումը փոխկապակցված են:
4. Ուսուցիչն ուսումնասիրում և կանոնավորում է բովանդակությունը, գործընթացն ու արդյունքը:
5. Աշակերտների անհատական հաջողությունը և հաջողության առավելագույն աճը երկու գլխավոր նպատակներն են:
6. Ուսուցման բոլոր փուլերում (պլանավորում, ուսուցում, գնահատում) տարբերակումն իրականացնելու համար հարկավոր է խուսանավել:

**Դասասենյակում տարբերակման տեսությունը գործնականում կիրառելու ընթացքում, ուսուցիչն իրականացնում է հետևյալ բաղադրիչների մոդիֆիկացում.**

- ուսումնական նյութեր,
- ուսումնական ռեսուրսներ
- ուսումնական միջավայր:

**Մոդիֆիկացիան անհրաժեշտ է երեք հիմնական հասկացություններից ելնելով.**

1. ուսման հնարավորություն,
2. ուսման մոտիվացիա,
3. ուսման արդյունավետություն:

Այս երեք հասկացություններին պետք է անպայման կցենք.

- աշակերտի պատրաստակամություն,
- հետաքրքրություն,
- ուսում:

Փաստ է, որ աշակերտները միմյանցից տարբերվում են: Գոյություն չունի «ստանդարտ» աշակերտ և գոյություն չունի կատարյալ միջոց, որով ուսուցիչը կարող է լուծել բոլոր աշակերտների խնդիրները: Հենց այստեղ է մեզ օգնում տարբերակման տեսությունը, որն ընդունում է աշակերտների միջև կարևոր տարբերության առկայությունը: Ուսումնական գործընթացը ծրագրելիս այն ընդգրկում է տարբերակված մոտեցումներ ուսուցման մոդալության տեսանկյունից: Նրանց վրա հիմնվելով ուսուցիչը հեշտությամբ կարող է կիրառել աշակերտների տարբերությունը՝ ուսումնական նպատակով նախատեսված արդյունքներին հասնելու համար:

Ուսուցման մոդալություններն են՝

- լսողական,
- տեսողական,
- կինեսթետիկ:

### Տեսողականով սովորողներ

Տեսողականով սովորողները դասարանի ամենախոշոր խումբն են կազմում: Նման աշակերտները ուսումնական նյութը հասկանալու համար պետք է այն «տեսնեն»: Կարևոր է ունենալ տեսողական օժանդակ միջոցներ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան տեսնել ինֆորմացիան: Դրա համար նրանց հարկավոր են նկարներ, գծանկարչական դասագրքեր, սենյակում փակցված տեղեկություններ և վիզուալիզացիային նպաստող պայմաններ:

Տոմլինսոնը հետևյալ կերպ է բնութագրում տեսողությամբ սովորողներին.

- Աշակերտները դժվարանում են հիշել անունները, չնայած մարդու մասին այլ մանրամասներ առավել լավ են ընկալում:
- Նրանք հրաշալի կերպով յուրացնում են գիտելիքը, եթե այդ գիտելիքը բացատրելու համար կան տեսողական հնարավորություններ:
- Նրանք գերադասում են անձամբ ընթերցել տեքստը:
- Նրանք գրություն կատարելու միջոցով են դասավորում մտքերը:
- Նրանք դժվարանում են հիշել լսողությամբ ստացած ցուցումները:
- Հաճախ իրենց հույզերն արտացոլում են դեմքի արտահայտությամբ:
- Սիրում են «փազլեր» և նման զբաղմունքներ:

Պետք է հիշենք, որ դասարանում խթանելով տեսողականը մենք նպաստում ենք նման աշակերտների հաջողությանը: Պետք է հիշենք, որ նրանց համար կարևոր է «տեսնել» ինֆորմացիան:

### Լսողությամբ սովորողներ

Լսողությամբ սովորողները դասարանի նվազագույն մասն են կազմում: Հնարավոր է, որ նստելու և լսելու միջոցով ուսումը գերադասող աշակերտների թիվը նվազել է մուլտիմեդիայի, այսօրվա տեխնիկական միջոցների պատճառով: Նման աշակետների համար կարևոր է լսել ինֆորմացիան՝ լինի այն բասախոսություն թե բանավեճ, սակայն նմաններին տրվելու է նաև խոսելու հնարավորություն:

Սփրենջերը գրում է. «Երբ նման աշակերտները ընթերցում են և կամ այն ժամանակ, երբ չեն ընթերցում, հաճախ շարժում են շուրթերը կամ փնթփնթում: Առհասարակ, նման աշակերտներն ունեն իրենք իրենց հետ խոսելու հակում»:

Նման աշակերտները երբեմն լսողությամբ ստացած ինֆորմացիան հերթականությամբ են պահում և նույն կերպ հերթականությամբ վերականգնում: Այն ուսուցիչները, որոնք գրեթե ամբողջությամբ լսողական ուսուցման վրա են հիմնվում, հնարավոր է խնդրի առաջ կանգնեն, եթե գործ ունենան այլ մոդալություններ ունեցող աշակերտների, հատկապես կինեստետիկների հետ:

**Գիտնականները հետևյալ կերպ են բնութագրում լսողությամբ սովորողներին.**

- Լսողությամբ սովորողներն անուններն առավել լավ են հիշում, քան դեմքերը:
- Անհանգստություն են դրսևորում, եթե դասասենյակում երկարատև են նստում:
- Արձագանքում են ֆիզիկական խրախուսմանը, ինչպիսին է օրինակ, ուսին թփթփացնելը:
- Գերադասում են մասնակցել կոնկրետ թեմայի մասին խմբային քննարկմանը, քան ընթերցեն այն:

Պետք է հիշենք, որ նրանք զգում են դասասենյակի հարմարավետության աստիճանը և ընկնում այդ բնութագրիչի ազդեցության տակ, աղմուկից հեշտությամբ շեղվում են, լավ հեքիաթասացներ են, գրավոր աշխատանքին գերադասում են բանավոր ելույթը:

## Կինեսթետիկ սովորողներ

Սփրենջերն ասում է. «Յուրաքանչյուր դաս պետք է ընդգրկի շարժում: Վերցրեք այդ շարժումը և հաճախ կրկնեք այն: Վերջում այն կվերածվի մշտական հիշողության»: Իրականում, ուսուցիչները, որոնք գերադասում են դասախոսության նմանվող դասեր, մեծ դժվարությունների առջև են կանգնում կինեսթետիկների հետ հարաբերություններում: Նման աշակերտներն ունեն շարժման կարիք: Նրանց հարկավոր են նաև ուսումնական մոդելներ, որոնք կարող են բռնել ձեռքում և շոշափել: Ուսումնական նյութն ըմբռնելու համար, նման աշակերտներին անհրաժեշտ է մասնակցել գործնական ակտիվությունների և գործնական դասերի:

Մասնագետները կինեսթետիկ սովորողներին հետևյալ կերպ են բնութագրում.

- Ավելի լավ են հիշում, երբ իրենք են ստեղծում և գերադասում են դա ունկնդրելու ու ընթերցելու գործընթացներից:
- Խնդիրը լուծելիս հաճախ ընտրում են այնպիսի միջոցներ, որոնք բարձր ֆիզիկական ակտիվություն են պահանջում:
- Չեն սիրում այնպիսի գործընթաց, որը միայն դիտել է պահանջում:
- Սիրում են նմանակումներ, դրամատիկ բեմականացումներ և ակտիվություններ բաց երկնքի տակ:

Պետք է հիշենք, որ նրանք սիրում են մոդելներ և հաճախ են կազմում դրանք՝ անկախ նախագծերի համար: Իրենց հույզերն արտահայտում են «մարմնի լեզվով»:

Դասավանդման ընթացքում կարևորը տարբեր մեթոդների դիմելն է, այնպիսի մեթոդների, որոնք նախատեսում են աշակերտի տեսողության, լսողության և շարժման կիրառում ուսումնական ակտիվություններում:

Ինչպես հայտնի է, մուտք գործող բոլոր տվյալներին բանականությունը դիմակայում է պերցեպտուալ ռեգիստրատորի կամ ռետիկուլյար ակտիվացման համակարգի (RAS) միջոցով: Այս հզոր համակարգը արագ որոշում է, թե արժե՞, արդյոք ուշադրություն դարձնել դրան: Եթե սենսորային (զգայական) հիշողության մեջ առկա տեղեկությունն արագորեն չկոդավորվի՝ կկորչի: Թե ի՞նչ են կոդավորում աշակերտները, կախված է նրանից, թե ինչի՞ն են ուշադրություն դարձնում: Տարբերակման տեսությունը կիրառելիս ուսուցիչը ծրագրում է ակտիվություններ՝ տարբեր մոդալություն ունեցող աշակերտների համար, ստեղծում արդյունավետ ուսումնական միջավայր, ինչով օգնում է դասարանում գտնվող տարբեր կարողությունների տեր երեխաներին սովորելու հարցում: Երբ աշակերտին տրվում է ուսումնական նյութը համապատասխան մոդալության մեջ, տեղի է ունենում տեղեկատվության արագ կոդավորում և այն չի կորչում:

**Դասասենյակում տարբերակման տեսությունը հնարավոր է կիրառել տարբեր ձևաչափերով.**

1. Ուսումնական նյութը և ակտիվությունները նախատեսված են տարբեր մոդալություններ ունեցող աշակերտների համար,
2. Դասարանում խմբերի ձևավորումը տեղի է ունենում ուսուցման մոդալության համաձայն և յուրաքանչյուր խմբի համար ստեղծված է համապատասխան վարժություն:

Առաջին ձևաչափը հիմնվում է այն կարծիքի վրա, որ աշակերտը սովորում է բոլոր մոդալություններով, սակայն դոմինանտ է մոդալություններից մեկը և այս ձևաչափով ուսուցման ժամանակ յուրաքանչյուր աշակերտ նյութն առավելապես ընկալում է այն ակտիվությամբ, որի մոդալությունը նրա համար դոմինանտ է: Այդ պատճառով այս ձևաչափով ուսուցման հաջողությունը կախված է նրանից, թե որքանով ճիշտ է կարողանում ուսուցիչը ակտիվության միջոցով իրականացնել տարբերակման տեսությունը:

Երկրորդ ձևաչափը հիմնվում է այն կարծիքի վրա, որ աշակերտը պետք է սովորի այն մոդալությամբ, որը նրա համար առաջնային է: Այս ձևաչափով ուսուցման արդյունավետությունը պայմանավորված  է երկու գործոններով.

1. Որքանո՞վ ճիշտ կարողացավ ուսուցիչն ամբողջացնել խմբերը՝ համապատասխան մոդալության համաձայն:
2. Որքանո՞վ ճիշտ է հարմարեցված ուսումնական ակտիվությունը կոնկրետ մոդալության շրջանակներում:

Գործնականում երկրորդ մոդալությունն առավել հայտնի է, մինչդեռ կրթության մասնագետները մշտապես նշում են առաջին ձևաչափի արդյունավետությունը: Տարիքային զարգացման հետ, խառը մոդալությամբ ուսուցման որակն աճում է և չնայած առաջնային մոդալությունը պահպանվում մարդու մոտ մինչև կյանքի վերջ: Հնարավոր է, դասի ծրագրումը հիմնվի այն կարծիքի վրա, որ աշակերտը բոլոր մոդալություններով է սովորում, սակայն յուրաքանչյուր ակտիվության շրջանակներուււմ կպարզվի, որ դոմինանտ է մոդալություններից մեկը, այսինքն տարբերակման տեսությունն իրականանում է ակտիվությունների միջոցով:

Կարևոր է, հղենք հետևյալ հարցը. ի՞նչ է տեղի ունենում հետո, այսինքն որքանո՞վ ակտուալ է տարբերակման տեսությունը՝ հարցը խորապես ընկալելու, բարձր դատողական ունակությունները զարգացնելու տեսանկյունից, ինչպե՞ս է կարողանում աշակերտը վերլուծել, համադրել և գնահատել՝ որքանո՞վ դինամիկ և տրանսֆերային է ձեռք բերված գիտելիքը: Նրանից հետո, երբ աշակերտները ստանում և մշակում են տեղեկությունը, այն անցնում է բանականության զտիչներով: Հենց բանականությունն է որոշում, թե ինչ անել այդ տեղեկատվության հետ: Մտածողության գործընթացը սահմանում է այն գործոնները, որոնք օգնում են աշակերտներին ավելի խորապես գիտակցել նյութը և կապակցել իրար: Դրա համար ուսուցիչը ստիպված է խաղալ տարբեր դերեր. 1. Որոշ աշակերտների համար բացահայտումների գործընթացում նա գործընկեր է դառնում: 2. Որոշ աշակերտների համար՝ ուսուցիչը մարզչի դեր է կատարում: 3. Կան աշակերտներ, որոնց համար նա խրախուսողի դեր է կատարում: 4. Ուսուցիչը պարտավոր է օգնել որոշ աշակերտների՝ հասկանալ բովանդակությունը: Ուսուցչի տարբեր դերերը բխում են ուսումնական գործընթացի հանդեպ տարբերակման մոտեցումից, քանի որ տարբերակման տեսությունն ընդունում է աշակերտների միջև գոյություն ունեցող կարևոր տարբերությունները և յուրաքանչյուր աշակերտի բացառիկությունը:

# 10.Կրթական ռեսուրսներ

Հատուկ այս ձեռնարկի համար պատրաստած հետևյալ կրթական ռեսուրսները.

- Էլեկտրոնային ռեսուրս (պատկերազարդ նյութ՝ յուրաքանչյուր դասի համար):
- Նկարչական ծրագրեր:
- Արվեստի մասին ձայնա/տեսանյութեր (հղումներ):

Այս ռեսուրսները բեռնված կլինեն հրատարակչության կայքում և հասանելի կլինեն յուրաքանչյուր ուսուցչի և աշակերտի համար:

Ուսուցիչը կկարողանա յուրաքանչյուր դասի համար կիրառել լրացուցիչ պատկերազարդ նյութեր՝ հատուկ 5-րդ դասարանի դասագրքի համար ստեղծված էլեկտրոնային ռեսուրսից, որը ներբեռնված կլինի հրատարակչության կայքում: Բացի այդ, կայքում նշված կլինեն նկարչական ծրագրերի և ձայնա/տեսանյութերի հղումներ: Այդ նյութերի կիրառումն ապահովում է ուսուցման նպատակի բարեհաջող իրականացումն ու արդյունքներին արդյունավետ հասնելը:

# 11. Աշակերտի գնահատման սկզբունքները

Ուսման արդյունքներին հասնելու ապահովումը և ուսում/ուսուցման որակի կառավարումն իրագործվում է աշակերտի գնահատմամբ: Գնահատումը պետք է իրականանա բազմատեսակ մեթոդներով և մեծ ինտենսիվությամբ, ինչն աշակերտի կարողությունների հետագա զարգացման նախապայմանն է:

V դասարանի առաջին կիսամյակում, այնպես ինչպես I-IV դասարաններում, աշակերտները չեն գնահատվում թվանշաններով, իսկ V դասարանի երկրորդ կիսամյակից արդեն ուժի մեջ են մտնում թվանշանները: Հենց այդ պատճառով, գնահատման ձևերն առաջին կիսամյակի համար նույնն են, ինչ I-IV դասարաններում: Սկզբում առաջարկում ենք առանց թվանշանի գնահատման համակարգ: Այստեղ ներկայացված է ընթացիկ գնահատման համակարգը աղյուսակի տեսքով, որի համաձայն ուսուցիչը հեշտությամբ հետևում է աշակերտի զարգացմանը և շտկում ուսումնական գործընթացը, հաշվի է առնում յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը, նրա հետ հարաբերություններում մշակում ճիշտ ուսուցչական տակտիկա:

Առաջարկած աղյուսակը ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝ տնային աշխատանք, դասարանային աշխատանք, ամփոփիչ առաջադրանքներ: Նման աղյուսակ ուսուցիչը կազմում է յուրաքանչյուր աշակերտի համար և յուրաքանչյուր դասին գրանցում նրա ակտիվությունը յուրաքանչյուր բաղադրիչի համաձայն:

Տարրական և V դասարանի առաջին կիսամյակում գնահատման համար ընդունված է պայմանական թվանշանների կիրառումը: Օրինակ, գերազանց՝ ++, միջին՝ +, թույլ՝ -, շատ թույլ ՝ 0:

Եթե աշակերտն ամբողջ կիսամյակի ընթացքում այս աղյուսակում հիմնականում պլյուսեր է (++, +) գրանցել, ապա նշանակում է, որ ողջ կիսամյակի ընթացքում նա բավարարել է բոլոր բաղադրիչները և կարող է համարվել առաջադեմ աշակերտ: Բնութագրում պետք է գրվի, որ այս առարկայում աշակերտը հասել է որոշակի հաջողության: Ողջ կիսամյակի ընթացքում նա ջանադրաբար աշխատում էր, ակտիվ ներգրավված էր ուսումնական գործընթացին, կազմակերպված էր և զինված անհրաժեշտ դպրոցական պիտույքներով, աշխատում էր մանրազնին, ակտիվ մասնակցում էր հարց-պատասխանի, թիմային աշխատանքի ժամանակ հաջողությամբ համագործակցում էր համադասարանցիների հետ, շնորհանդեսի ժամանակ պարզ և փաստարկներով ներկայացնում իր աշխատանքները: Ցանկալի է, բնութագրի վերջում մի քանի գովասանքի խոսք գրել աշակերտի մոտիվացիան ապագայում բարձրացնելու համար:

Եթե աշակերտը ողջ կիսամյակի ընթացքում ավելի շատ մինուսներ ( --, -) է հավաքել, այդ դեպքում ուսուցիչը պետք է ուսումնասիրի աղյուսակը և որոշի, թե որ բաղադրիչում աշակերտն ունի առավել շատ մինուսներ, այսինքն որտեղ է նրա խնդիրը: Սրա համաձայն ուսուցիչը պետք է մշակի այս աշակերտի հետ փոխհարաբերության որոշակի տակտիկա (ինչպե՞ս օգնել աշակերտին նշված խախտումներն ուղղելու հարցում): Եթե աշակերտն ուղղի այդ խախտումները, ուսուցիչը վերջնական բնութագրի մեջ նրան անպայման պետք է գովաբանի՝ խրախուսելու նպատակով: Եթե խախտումները չուղղվեն, ուսուցիչն օբյեկտիվության համար ցույց է տալու դրանք աշակերտին՝ ցանկություն ու հույս հայտնելով, որ ապագայում դրանք կկարգավորվեն:

## Ընթացիկ գնահատման աղյուսակ

| | Բաղադրիչ | 1,09 | 4,09 | 8,09 | 12,09 | 16,09 | 20,09 | 22,09 | 25,09 | 28,09 | 31,09 | 4,10 | 8,10 | 11,10 | 15,10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դաս 1 | Դաս 2 | Դաս 3 | Դաս 4 | Դաս 5 | Դաս 6 | Դաս 7 | Դաս 8 | Դաս 9 | Դաս 10 | Դաս 11 | Դաս 12 | Դաս 13 | Դաս 14 |
| Երեխայի անունը և ազգանունը | Դասարանային առաջադրանք | + | ++ | ++ | + | ++ | ++ | + | - | + | ++ | ++ | + | ++ | ++ |
| | Տնային առաջադրանք | | + | | - | + | | + | + | + | | + | + | + | |
| | Ամփոփիչ առաջադրանք | | | | | | ++ | | | | | + | | | |

Ընթացիկ գնահատման այս աղյուսակը կօգնի ուսուցչին հանձնարարականներ տալ աշակերտին՝ խախտումները հաղթահարելու հարցում: Ուսումնասիրության գրառումները պարունակում են մշտական ցուցումներ աշակերտի առաջընթացի մասին: Առաջարկում ենք հանձնարարականի հավանական նմուշ:

### Հանձնարարական

**(երեխայի անունը և ազգանունը)**

Փորձիր ավելի ուշադիր լինել դասի ընթացքում:

Սովորիր 8-րդ դասը:

Առավել ազատություն տուր երևակայությանդ: Դու դա կարող ես:

Կիսամյակի և տարեվերջում ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի մասին պետք է գրի ամփոփիչ մեկնաբանություն, որտեղ բնութագրի աշակերտի առաջադիմությունները և խորհուրդներ տա սեփական կարողություններն առավել լավ դրսևորելու համար: Այստեղ կարևոր է շատ զգույշ վերաբերվել աշակերտի խնդիրներին և առաջարկել դրանց բարելավման ուղիները:

Գնահատման ձևերը և միջոցները պետք է համապատասխանեն առարկայական չափորոշչին: Ուսուցչի կողմից կիրառված գնահատման տարբեր միջոցները բխում են ուսումնական նպատակից: Գնահատման ձևերը և միջոցներն ընտրելիս պետք է որոշվի.

1. Ո՞ր գիտելիքների ձեռք բերում և հմտությունների զարգացում է նախատեսում ուսումնական նպատակը, ինչո՞վ պետք է որոշվի, թե ի՞նչն է գնահատվելու:
2. Գնահատման ո՞ր միջոցը կկիրառի ուսուցիչը, այսինքն ո՞ր ակտիվությամբ կգնահատի աշակերտի գիտելիքը և հմտությունները:

Գնահատման լայն կիրառվող միջոցներն են՝ ուսումնասիրության արդյունքում արված գրառումները, արդյունքների վերլուծությունը, հարց-պատասխանը, թեստերը, պորտֆոլիոն (աշակերտի տարբեր տեսակի աշխատանքներով կազմված թղթապանակ), ցուցահանդեսը և զարգացնող մեկնաբանությունը:

### Ի՞նչ է ենթադրում յուրաքանչյուր բաղադրիչը կերպարվեստում և կիրառական արվեստում

**ա) տնային առաջադրանքներ**

Հնարավոր է գնահատել հետևյալ առաջադրանքների համաձայն.

Նյութի որոնում, ռեֆերատ, գործնական աշխատանք,

**բ) ընթացիկ դասարանային առաջադրանքներ**

Ներառում է հետևյալ տեսակի ակտիվություններ.

1. Իրականացնել կոնկրետ գործնական աշխատանք կամ ստեղծել աշխատանք որոշակի թեմայի շուրջ, ինչը կարող է գնահատվել հետևյալ չափանիշների համաձայն.

- Կազմակերպվածություն (համակարգվածություն, ժամանակի լիմիտի պահպանում, անհրաժեշտ նյութերի և պիտույքների առկայություն)
- Տեխնիկայի, նյութի տիրապետում
- Ստեղծագործականություն (որոշումների ինքնուրույն ընդունում, սեփական ձեռագրի, հայեցակետի ցուցադրում)
- Համագործակցություն՝ խմբային աշխատանքի ժամանակ

2. Մասնակցել սեփական և այլոց աշխատանքների քննարկմանը.

- ակտիվ մասնակցություն,
- սեփական կարծիքի ներկայացում՝ հիմնավորմամբ,
- ուրիշի կարծիքի հանդեպ հարգալից վերաբերմունքի ցուցաբերում:

3. Սեփական և մյուսների աշխատանքների շնորհանդես (ներկայացում՝ լսարանին), որը կարող է գնահատվել հետևյալ չափորոշիչների համաձայն.

- Ասելիքի պարզ և հասկանալի կերպով փոխանցում, շփում լսարանի հետ:
- Դիտանյութերի և տեխնիկական միջոցների կիրառում:
- Համապատասխան պատասխան՝ տրված հարցերին:

**գ) Ամփոփիչ առաջադրանքներ**

Կարող է գնահատվել հետևյալ ակտիվություններով

Թեստավորում, ցուցահանդես,գործնական աշխատանք, նախագծեր

Առաջարկում ենք աշակերտների գիտելիքների գնահատման աղյուսակի նմուշ, ելնելով նրանից, որ IV դասարանում աշակերտը չի գնահատվում միավորներով, մեր կողմից առաջարկած գնահատման չափորոշիչների բավարարման մակարդակը հնարավոր է սահմանել պայմանական նշաններով: Օրինակ, յուրաքանչյուր չափորոշիչ առավելագույն գնահատում երեք պլյուսի տեսքով (+++): Չափորոշիչը բավարար կարող է համարվել, եթե աշակերտի գործնական աշխատանքը գնահատվում է առնվազն մեկ պլյուսով: Ուսուցիչն անձամբ կարող է մշակել գործնական աշխատանքի գնահատման այլ չափորոշիչներ և առաջնորդվել դրանց բավարարման մակարդակի սահմանման նույն կարգով:

## Աղյուսակների նմուշներ

| Գործնական աշխատանքի (ստեղծագործության) գնահատում<br>Ամսաթիվ. __________________ աշխատանքի (ստեղծագործության) տեսակ.________________ | | | | |
|---|---|---|---|---|
| Աշակերտ | Գնահատման չափանիշներ | | | |
| | Կազմակերպվածություն (ժամանակի լիմիտի պահպանում, անհրաժեշտ պիտույքների առկայություն) | Նյութի, տեխնիկայի և գեղարվեստա-արտահայտչական միջոցների տիրապետում | Ստեղծագործակա-նություն (որքանով արդյունավետ է կիրառում տեխնիկան, նյութը և գեղարվեստա-արտահայտչական միջոցները՝ մտահղացումը փոխանցելու համար) | Համագործակցություն խմբային աշխատանքի ժամանակ |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| Տեսական աշխատանքի գնահատում<br>Ամսաթիվ._______________Աշխատանքի տեսակ (ռեֆերատ, էսսե, զեկույց...)_______________ | | | | |
| Աշակերտ | Գնահատման չափանիշներ | | | |
| | Կազմակերպվածություն (ժամանակի լիմիտի պահպանում, անհրաժեշտ պիտույքների առկայություն) | Տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու ունակություն տեղեկատվության ծավալ և ճշգրտություն | Գտած տեղեկատվության դասակարգման և վերլուծության ունակություն, եզրակացություն անելու ունակություն | Շնորհանդես՝ ունակություններ, հաղորդակցություն լսարանի հետ |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |

**Գործնական աշխատանքի գնահատման չափանիշներ - 1**

**Աշակերտի անուն, ազգանուն ________________________________________**

| Կազմակերպվածություն անհրաժեշտ ռեսուրսների/նյութերի առկայություն | Նյութի, տեխնիկայի տիրապետում | Տեխնիկան և նյութը ստեղծագործականորեն կիրառելու ունակություն | Համագործակցության ունակություն |
|---|---|---|---|
| | | | |

| Գործնական աշխատանքի գնահատման չափանիշներ -2<br>Աշակերտի անուն, ազանուն ___<br>Նյութ ___<br>Ամսաթիվ ___ | | | | |
|---|---|---|---|---|
| **Կոմպոզիցիա** | **Ձև/ծավալ** | **Գույն** | **Ֆակտուրա** | **Տարածություն** |
| Որքանո՞վ է կարողանում իրագործել նկարելու ենթակա օբյեկտների կոմպոզիցիոն բաշխումը նկարի հարթության վրա (կոմպոզիցիոն հավասարակշռության պահպանումը և այլն) և փոխանցել փոխհարաբերակցությունը | Որքանո՞վ է պահպանում առարկայի համամասնությունը և որքանով է կարողանում փոխանցել դրանց ծավալը ստվեր-լույսի միջոցով | Որքանո՞վ է համապատասխանում գունային գամման նկարելու ենթակա օբյեկտներին, կամ որքանո՞վ ստեղծագործականորեն է լուծված գույնի խնդիրը աշխատանքում | Որքանո՞վ է կարողանում փոխանցել նկարելու օբյեկտները (առարկաները, վարագուրումը, գործվածքը), ֆակտուրան | Որքանո՞վ է կարողանում ստեղծել տարածության էֆեկտ (առջևի պլան, միջին պլան, հետևի պլան (ֆոն)) |

## Շնորհանդեսի ունակությունների գնահատման չափանիշներ

**Աշակերտի անուն, ազգանուն**___

| | | |
|---|---|---|
| Սեփական աշխատանքի մասին խոսելիս նկարագրում է փուլերը, առանձնացնում հիմնականը | Կարող է փոխանցել ասելիքը պարզ և հասկանալի կերպով | Կարող է հարցերին տալ համապատասխան պատասխան |

## Աշակերտի ինքնագնահատականը

| **Քո աշխատանքը՝** | |
|---|---|
| Ինքնատի՞պ է | |
| Բացառի՞կ է | |
| Դետալայի՞ն է | |
| Հետաքրքի՞ր է | |
| Քո սեփական գաղափա՞րն է | |
| Քո աշխատանքը գունե՞ղ է | |
| Համապատասխանո՞ւմ է գաղափարի/առաջադրանքին | |
| Համոզվա՞ծ ես, որ աշխատանքդ ավարտված է | |

**Աշակերտի զարգացման գնահատման սյունակներ (Մ. Բարտելի համաձայն)**

**Ուսուցիչ** ________________________________

**Աշակերտ** ________________________________

**Բնութագիր** ________________________________

| | | Լավ | Միջին | Ենթակա է բարելավման |
|---|---|---|---|---|
| **Աճը, նորությունը և բարելավումը** | • Համապատասխանում է արդյո՞ք աշխատանքը նույն աշակերտի նախորդ աշխատանքին:<br>• Երևում է արդյո՞ք աշխատանքում առավել հուզականություն և արտահայտչականություն:<br>• Երևում է արդյո՞ք նոր գաղափար, առավել իմաստ:<br>• Երևում է արդյո՞ք առավել շատ վարպետություն: | Ստեղծագործականություն և անսպասելի հայտնագործություններ | | |
| **Առաջադրանքի իրականացում** | • Որքանո՞վ նորարարական, ինքնատիպ է աշխատանքը:<br>• Նախորդ աշխատանքի համեմատ երևում է արդյո՞ք որևէ փոփոխություն: | | | |
| **Եռանդ** | • Առաջադրանքում որքանո՞վ լավ է լուծված նախանշված խնդիրը/հիմնախնդիրը:<br>• Եթե աշակերտի կողմից իրականացված առաջադրանքը տարբերվող կերպով է լուծված, ուներ արդյո՞ք լուրջ պատճառ: | | | |
| **Եռանդ** | • Աշխատանքի ոճը կատարված է համապատասխան կերպով, մտածված և վարպետորեն: | | | |

## Հիմնական կարծիքներ զարգացնող գնահատման վերաբերյալ

Կրթության մասնագետները զարգացնող գնահատման բազում բացատրություններ են առաջարկել, այս տերմինն առաջին անգամ կիրառելուց հետո: Եթե ամփոփենք այդ սահմանումները, կարող ենք ձևակերպել մոտավորապես այսպիսի բացատրություն.

Զարգացնող գնահատումը գործընթաց է, որը ենթադրում է տարբեր ակտիվություններով, ուսուցման ռազմավարությամբ կամ այլ միջոցներով տեղեկատվության կուտակում աշակերտների հասկանալ/գիտակցելու մակարդակի վրա և այդ տեղեկատվության կիրառում նրանց առաջընթացին նպաստելու նպատակով: Այն միջոցները, որոնցով նման տեղեկատվություն ենք հավաքում, կոչվում են զարգացնող գնահատման գործիքներ:

Ցանկացած ակտիվություն կամ ուսուցման ռազմավարություն կարող է վերածվել զարգացնող գնահատման գործիքի, եթե այն օգնում է աշակերտներին ըմբռնել այն, թե ինչն են դժվարանում հասկանալ և ինչու, գիտակցել սեփական թույլ և ուժեղ կողմերը, կազմել պարզ պատկերացում, թե ինչ ճանապարհով պետք է գնան ցանկալի արդյունքին հասնելու նպատակով: Մյուս կողմից, նույն ակտիվությունը կամ ռազմավարությունը երբեմն կարող են ծառայել զարգացնող գնահատման գործընթացին, իսկ երբեմն՝ ոչ: Օրինակ՝ հարցերի առաջադրումը հայտնի է, որպես զարգացնող գնահատման հզոր գործիք: Չնայած որոշ դեպքերում հարցեր առաջադրելը ստեղծում է զարգացնող գնահատման հիմքը, իսկ որոշ դեպքերում՝ ոչ: Դա կապված է նրանից, թե հարցերը որքանով են ընձեռում հնարավորություն հասկանալ աշակերտների ընկալել/գիտակցելու մակարդակը (Տես. օրինակը զարգացնող գնահատման գործիքների ենթագլխում):

Եթե դատենք նման տրամաբանությամբ, որոշող գնահատման գործիքն էլ (օր. թեստը) որոշ դեպքերում կարող է վերածվել զարգացնող գնահատման գործիքի: Օրինակ, եթե թեստը ոչ թե գնահատենք միավորներով, այլ աշակերտներին բաժանենք փոքր խմբերի և խնդրենք, որ պատասխանները համեմատեն զույգերով, ընտրեն պատասխանը, որը նրանց կարծիքով ավելի է համապատասխանում և բացատրեն, ինչու են այդպես համարել, ապա այդ ակտիվությունն արդեն հնարավոր է համարել զարգացնող գնահատման գործընթաց: Այս գործընթացի հիմքում հենց որոշող գնահատման գործիքն է:

Ինչպե՞ս է օգնում զարգացնող գնահատումն ուսուցչին: Զարգացնող գնահատումը նրան ընձեռում է աշակերտների ընկալել/գիտակցելու մակարդակը ստուգելու հնարավորություն և համապատասխանաբար ծրագրելու ուսուցման գործընթացը: Ուսուցիչը կարող է մտահոգվել ուսումնական պրակտիկայի և յուրաքանչյուր երեխայի նվաճումների համար, նրա, թե ինչը կօգնի նրան բավարարել յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքը:

Որոշող և զարգացնող գնահատումների միջև հիմնական տարբերությունն այն է, որ զարգացնող գնահատումը տեղի է ունենում անմիջապես ուսումնական գործընթացի ժամանակ: Սա միջամտություն է իրական ժամանակում, որն օգնում է մեզ ժամանակին բացահայտել աշակերտի թույլ կողմերը և ուղղություն տալ նրան, մինչև թվանշանով/միավորով գիտելիքի գնահատումը:

Համապատասխանաբար, նման գնահատումը չի արտահայտվում թվանշանով/ միավորով, այն դեպքում երբ որոշող գնահատումն արդեն սանդղակի կիրառմամբ է գնահատում կոնկրետ նյութի յուրացում/ունակությունների զարգացումը և արտահայտվում է թվանշանով/միավորով:

Սխալ հայացքներ զարգացնող գնահատման վերաբերյալ.

Ստորև առաջարկում ենք մի քանի սխալ հայացքներ զարգացնող գնահատման հետ կապված.

**1. Զարգացնող գնահատումն ուսուցիչներից շատ ժամանակ և ջանքեր է պահանջում:**

Իրականում զարգացնող գնահատման գործիքները բացարձակապես չեն պահանջում շատ ժամանակ: Այսպես, ուսուցիչներն այնպես էլ հարցեր են ուղղում աշակերտներին և հնարավոր է այդ հարցերն այնպես ուղղեն, որ դրանք ձեռք բերեն զարգացնող դեր:

**2. Զարգացնող գնահատումն ուսուցչի մեկնաբանությունն է:**

Ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր մեկնաբանությունը զարգացնող գնահատման գործիքներից մեկն են:

**3. Զարգացնող գնահատումն աշակերտի գովերգումն է:**

Եթե աշակերտին ասենք. «կեցցես», «լավ աղջիկ/տղա ես» և հստակ չբացատրենք, թե ի՞նչն է լավ արել, այդ դեպքում գովասանքը չի լինի զարգացնող գնահատման գործիք:

**4. Դասարանին ուղղված «հասկանալի է՞» հարցը զարգացնող գնահատում է:**

Հարցերը զարգացնող գնահատման լավ գործիք են համարվում միայն այն դեպքում, եթե նախատեսված են բարձր մակարդակի դատողական ունակությունների համար: Համապատասխանաբար դասարանին ուղղված այնպիսի հարցերն, ինչպիսիք են՝ «հասկացա՞ք» կամ «կա բան, որ չե՞ք հասկացել» զարգացնող գնահատման գործիք չեն համարվում:

## Զարգացնող գնահատման գործիքներ

Այն, թե ինչը կարող է կիրառվել որպես զարգացնող գնահատման գործիք, ինքներդ էլ կարող եք մտածել: Գոյություն ունեն բազմաթիվ գործիքներ, որոնք ուսուցիչներն են առաջարկել՝ փորձել և կիսվել են բազմաթիվ այլ ուսուցիչների հետ: Ինչ վերաբերում է արդեն փորձած զարգացնող գնահատման գործիքներին, որոնց թվում են մեկ րոպեանոց էսսեն, ամփոփիչ քարտերը, ինքնագնահատումը, հասակակիցների գնահատումը, «լուսակիր» և այլն, առաջարկում ենք մի քանի բավական հայտնի գործիքներ, որոնք այսօր բազմաթիվ ուսուցիչներ են կիրառում:

### Ամփոփիչ քարտեր

Դասի վերջում ուսուցիչն աշակերտներին տալիս է փոքր թղթեր՝ «ամփոփիչ քարտեր», խնդրում է, որ անանուն պատասխանեն մեկ կամ երկու հարցի և թողնեն սեղանի վրա: Քարտերը հավաքում է աշակերտներից մեկը:

Հարցերը կարող են լինել ստորև ներկայացված հարցերի նման կամ ձեր կողմից ընտրված:

- Գրեք երկու կարևորագույն հարց, որոնք այսօր առաջին անգամ եք իմացել: Ինչո՞ւ են այդ հարցերն ամենակարևորը:
- Ի՞նչ եմ սովորել այսօր:
- Ինչպե՞ս կկիրառեմ այս գիտելիքն առօրյա կյանքում:
- Ո՞ր հարցն է մութ մնացել և ինչո՞ւ:

Ամփոփիչ քարտերը ձեզ կօգնեն, որպեսզի ճշտեք, թե ինչում են դժվարանում աշակերտները, ինչպե՞ս է անցել ձեր դասը, հասել եք, թե՞ ոչ նպատակներին: Հաջորդ դասին անպայման հակիրճ ամփոփեք նախորդ դասը և ուշադրություն դարձրեք այն հարցերին, որոնք աշակերտները նշել են քարտերում: Համաձայն նրա, թե որ դասարանում եք կիրառում ամփոփիչ քարտերը, պատասխանները հնարավոր է տարբերվեն: Երբեմն աշակերտները հնարավոր է մակերեսորեն վերաբերվեն քարտերի լրացմանը, սակայն եթե նրանց ցույց տաք, թե ինչ արդյունքի կհանգեցնի պատասխան տալը, կփոխվի նաև նրանց վերաբերմունքը:

### Հարցերի առաջադրում

Հարցեր ուղղելը զարգացնող գնահատման ամենահզոր գործիքն է, թեև ուշագրավ է այն, որ ցանկացած հարց չի կարող ծառայել զարգացնող գնահատմանը: Եթե հարցը ստուգում է ոչ թե բարձր մակարդակի դատողական ունակություններն, այլ փաստացի գիտելիքը, ուսուցիչը չի հասկանում, թե որքանով է ընկալել աշակերտը նոր նյութը: Օրինակ՝ «ո՞ր թվականին է ստեղծվել որևէ կոնկրետ ստեղծագործությունը» հարցը: Թեև, հաջորդ՝ «ո՞ր գեղարվեստական միջոցներն են կիրառված տոնական տրամադրության, ուրախ հույզերը փոխանցելու համար. պայծառ հստակ գույներ, թե՞ մռայլ, մուգ գունային գամման» հարցը, կարող ենք կիրառել զարգացնող գնահատման նպատակով: Երբ աշակերտները գիտեն գույների կիրառման սկզբունքները, նման հարցն իսկապես ցույց կտա, թե որքանով խորն են ըմբռնել հարցը:

### Բացատրիր քեզանից փոքրին/բացատրիր տատիկին

Աշակերտներին խնդրեք, որ բացատրեն կրտսեր ընկերոջը (երևակայական ընկերոջը կամ պատկերացնեն, որ այդ կրտսեր ընկերը կողքին նստած աշակերտն է) նոր հասկացությունը կամ նյութն ավելի պարզ, քան ուսուցիչն է բացատրել նրանց: Բացատրեք աշակերտներին, որ երևակայական ընկերը, նրանց միջև գոյություն ունեցող տարիքային տարբերությունից ելնելով կարող է տիրապետել ավելի պակաս գիտելիքի: Այդ պատճառով նրանց գլխավոր խնդիրն է, որ տրված հասկացությունը բացատրեն շատ ավելի պարզ լեզվով, քան դա արել է ուսուցիչը: Հետևեք, թե ինչպես են բացատրում աշակերտները նոր հասկացությունները, որպեսզի հասկանաք, որքանով խորապես են հասկացել/ըմբռնել հարցը: Եթե որոշեք, որ դրանով չեք վիրավորի աշակերտների տատիկներին, կարող եք այս ակտիվությունը ձևափոխել հետևյալ կերպ՝ «բացատրեք տատիկին»:

### Հասակակիցների գնահատում

Պետք է չմոռանանք, որ հասակակիցների գնահատումը հրաշալի զարգացնող գնահատման գործիք է և ուսուցչից մեծ ջանքեր չի պահանջում:

Խնդրեք աշակերտներին, վերանայել մեկը մյուսի տնային առաջադրանքները և սխալ պատասխաններին մեկնաբանություններ (և ոչ միավորներ) կցել: Եթե, այնուամենայնիվ, որոշեք կիրառել միավորներ, ապա դրանց պարտադիր պետք է կցված լինեն մեկնաբանություններ:

Մեկնաբանությունը պետք է նկարագրի ոչ միայն այն, թե ինչն է սխալ, այլ նաև աշխատանքի բարելավման ուղիները: Այս ռազմավարությունն ուսուցչի մոտ ավելի լավ պատկերացում կստեղծի այն մասին, թե որքանով լավ են հասկացել աշակերտները նոր նյութը:

### Տեխնոլոգիաներ և զարգացնող գնահատում

Կարող եք փորձել նաև հետևյալ ակտիվությունը, որը կխթանի աշակերտների կողմից տեխնոլոգիաների կիրառումը և միաժամանակ կծառայի որպես զարգացնող գնահատման գործիք. Հանձնարարեք աշակերտներին, պատրաստել գովազդ, կապված նոր սովորած հասկացության հետ: Նրանք պետք է մտածեն տեքստ և համապատասխան վիզուալիզացիա նոր նյութի մեջ կիրառված հասկացությունը ըմբռնելու համար: Այս ակտիվությունը կօգնի ձեզ, ավելին իմանալ այն մասին, թե ի՞նչ և ինչպե՞ս են հասկացել աշակերտները:

### Մեկնաբանություն/հետադարձ կապ

Մեկնաբանությունը/հետադարձ կապը զարգացնող գնահատման ամենահայտնի և տարածված գործիքն է: Հետազոտողները 600-ից ավելի հետազոտության հիման վրա եզրակացրել են, որ գոյություն ունի խթանող հետադարձ կապ և հետադարձ կապ, որը բացասաբար է ներազդում՝ ուսումը խթանելու փոխարեն հուսահատեցնում է աշակերտին և վատթարացնում ակադեմիական արդյունքները: Նույնիսկ նման կերպ ձևակերպված հետադարձ կապը կարող է տարբեր կերպ ազդել աշակերտի վրա, որը կենտրոնացած է առաջադիմության վրա (նրա համար հետադարձ կապը կարևոր է առաջադիմությունը բարելավելու համար) և աշակերտի վրա, որը ամեն կերպ փորձում է խուսափել հետադիմությունից: Այդ պատճառով վատ արդյունք ունեցող աշակերտին ուսուցիչը պետք է փորձի այնպես մատուցել հետադարձ կապը, որ այդ արդյունքը չմեկնաբանվի, որպես հետադիմություն: Մյուս կողմից, ուսուցիչը պետք է ցույց տա աշակերտներին, որ ջանքերը և բարելավված արդյունքը միմյանց հետ սերտ կապված են:

### Դիտարկումը, որպես զարգացնող գնահատում

Դիտարկումը նույնպես համարվում է զարգացնող գնահատման գործիք: Այդ ժամանակ ուսուցիչը կարող է ընտրել դիտարկման մի քանի օբյեկտ, կամ հետևի ողջ դասարանին, սակայն ընտրի կոնկրետ թեմա (օր.՝ հաղորդակցություն): Ուսուցիչը կարող է ողջ դասարանի առջև մեկնաբանություններ անել, կամ անհատաբար խոսել աշակերտների հետ, ամփոփել դիտարկման արդյունքները և կիրառել դրանք՝ ուսում/ուսուցման գործընթացը բարելավելու համար:

Եվ վերջում, ամենակարևորը, որ պետք է հաշվի առնենք, այն է, որ ցանկացած ակտիվություն կամ ռազմավարություն զարգացնող գնահատման գործիք է դառնում միայն այն դեպքում, եթե ուսուցիչը և աշակերտը (բացի նրանից, որ կպարզեն, թե ինչպիսին է աշակերտի առաջընթացը, ինչը նա չի հասնակում) գտնեն ուղիներ, թե ինչպես պետք է ըմբռնի աշակերտը այս կամ այն հարցը: Համապատասխանաբար, զարգացնող գնահատման գործիքներից և ոչ մեկի կիրառումը չի համարվի արդյունավետ, եթե վերջնական արդյունքը չլինի հարցի/հասկացության խորապես ընկալում/ըմբռնում կամ ունակության յուրացում:

Ինչպես նշեցինք, ինքներդ կարող եք ստեղծել/առաջարկել զարգացնող գնահատման ակտիվություններ, փորձեք, թե ինչպես է աշխատում այն դասարանում և կիսվեք այլ ուսուցիչների հետ: Դա կլինի հրաշալի հնարավորություն աշակերտների արդյունքները բարելավելու և ուսուցիչների մասնագիտական զարգացմանը նպաստելու համար:

# 12. Ակտիվությունների անցկացման ընդհանուր հանձնարարականներ

## Դասի պլանավորման ընդհանուր սկզբունքները

### 1. Մոտիվացիա

Աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան միջավայր, որի համար հարկավոր է մտածել և պատրաստել զանազան կրթական ռեսուրսներ:

Ռեսուրսները հնարավոր է ընտրել, ըստ հետևյալ չափորոշիչների՝

- անհրաժեշտություն
- մատչելիություն
- պահպանելու ապահովում
- օգնություն

Նախքան ռեսուրս ստեղծելը, ուսուցիչը պետք է որոշի՝

- ի՞նչ կա իր մտածած ռեսուրսի մեջ այնպիսին, որը նպաստելու է աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը,
- ի՞նչ կա իր մտածած ռեսուրսի մեջ այնպիսին, որը նպաստելու է փորձի հիման վրա ուսմանը,
- նպաստում է արդյո՞ք այս ռեսուրսը սովորածն ավելի լավ հասկանալու և ընկալելու հարցում:

Կրթական ռեսուրսները կարող են ստեղծվել տարբեր ճանապարհներով.

Մատչելի և դպրոցում առկա հնարավոր ռեսուրսների որոնում և կիրառում.

• Կրթական ռեսուրսները կարող է ստեղծել անմիջապես ուսուցիչը: Ռեսուրսները ստեղծելիս հնարավոր է և ցանկալի համագործակցություն կրթական ռեսուրսների փոխանակման ճանապարհներով, ինչպես այլ առարկաների ուսուցիչների հետ, մի դպրոցի շրջանակներում, այնպես էլ այլ դպրոցների հետ:

• Ռեսուրսը կարող է ստեղծվել նաև աշակերտների կողմից և դառնալ ուսումնական գործընթացի մի մաս:

Կրթական ռեսուրսների ստեղծման գործում աշակերտներին հնարավոր է ներգրավել տարբեր կերպ:

**Հանձնարարական.** Ուսուցիչը կարող է հանձնարարել աշակերտներին, հավաքել բնական նյութեր այս կամ այն թեմայի վերաբերյալ:

Ուսուցիչը պետք է օգնի յուրաքանչյուր աշակերտին, ստեղծել իր սեփական պորտֆոլիոն (ուսումնական թղթապանակը), ուր կտեղադրի գործնական և տնային բոլոր առաջադրանքները:

### 2. Ուսուցչի կողմից իրականացված նախնական աշխատանքներ

Ուսուցիչը պետք է հստակ սահմանի դասի նպատակը, ելնելով հիմնական հարցից: Անպայման պետք է հաշվի առնի նախնական գիտելիքները: Ինչպես նաև, պետք է ըմբռնի արդյունքը, որին պատրաստվում է հասնել (տես՝ բովանդակության և նպատակների քարտեզը): Ըստ այդմ, ուսուցիչը պետք է ընտրի ռեսուրսները, ծրագրի ակտիվություններ և սահմանի այդ ակտիվությունների համար անհրաժեշտ ժամանակը:

### 3. Հարցադրում և խնդրի սահմանում

Դասի սկզբին ուսուցիչը հստակ սահմանում և տեղեկացնում է աշակերտներին դասի նպատակը և ներկայացնում կոնկրետ խնդիրը:

### 4. Հիմնական և օժանդակ ուսումնական նյութեր

Հարցադրումից և խնդիրը սահմանելուց հետո, ուսուցիչն անցնում է բուն նյութին: Դասը կարող է սկսել միանգամից ակտիվությունով: Ելնելով տվյալ առարկայի յուրահատկությունից, դասի

այս փուլում հատուկ կարևորություն է տրվում նաև քննարկվելիք թեմայի համապատասխան պատկերազարդմանը: Դրա հետ ծանոթացնելուց հետո ուսուցիչը տալիս է ինտերակտիվ հարցեր, ինչով դրդում է աշակերտներին արտահայտել նկարից ստացած առաջին տպավորությունները, նկարագրել տվյալ պատկերը, վերլուծել այն, դատողություններ անել և արտահայտել սեփական կարծիքը տվյալ նկարի մասին: Որպես օժանդակ նյութ ուսուցիչը կարող է օգտագործել CD-ներում առկա տարբեր ռեսուրսներ:

### 5. Ինքնուրույն աշխատանք

Գրեթե բոլոր թեմաները պարունակում են գործնական աշխատանքներ, որոնք աշակերտը ինքնուրույն, զույգերով կամ խմբերով է կատարում դասի ընթացքում: Ինքնուրույն աշխատանքը կատարվում է կամ նկարչության տետրում, կամ դասագրքին կցված աշակերտի աշխատանքային տետրում:

Արդյունքում, ուսուցչին հնարավորություն է տրվում ստուգել, թե ինչպես են ընկալել աշակերտները բացատրած նյութը և ինչպես օգտագործեցին այս գիտելիքը գործնականում: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կատարված աշխատանքի որակը հավասար չի կարող լինել, բայց եթե աշակերտը կարողանում է որևէ ձևով, թեկուզ բանավոր մեկնաբանությամբ, ցուցադրել դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքը, կարող ենք համարել, որ նպատակն իրագործված է:

### 6. Վարժություններ

Յուրաքանչյուր դասի վերջում տրված են հարցեր, որոնք ուսուցիչը կարող է առաջադրել դասի ընթացքում ու դրանով ակտիվացնել աշակերտներին, ինչպես նաև ստուգել նոր նյութի յուրացման աստիճանը:

### 7. Եզրափակիչ փուլում կատարված աշխատանքը

Յուրաքանչյուր թեմատիկ բլոկ եզրափակվում է ամփոփիչ դասով, որը պարունակում է երկու տեսակի առաջադրանք՝ գործնական և թեստային, որոնց միջոցով ստուգվում է ինչպես նյութի յուրացման, այնպես էլ համապատասխան հմտությունների մշակման աստիճանը:

Ուսուցչի ձեռնարկում կան գրեթե բոլոր դասերի սցենարները, սակայն նշենք, որ մենք առաջարկում ենք միայն ենթադրյալ սցենարներ, դուք կարող եք ազատ, ըստ ձեր հայեցողության, ծրագրել ցանկացած դաս:

Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները և ելնելով յուրաքանչյուր դասի յուրահատկությունից, որոշ դեպքերում ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է տնային աշխատանք: Ուսուցչի ձեռնարկում որոշ ենթադրյալ սցենարներում ներկայացված են տնային աշխատանքներ և հրահանգներ, որոնք ուսուցիչը տալիս է աշակերտներին: Բնականաբար ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ որոշ դասերին ավելացնել տնային առաջադրանքներ:

# 13. Աշակերտի գրքի գործնական մասը

Աշակերտի գրքի կառուցվածքի հիմնական տարրը գլուխն է, որը բաղկացած է առանձին դասերից: Յուրաքանչյուր գլխում միավորված դասերի թեմաների նպատակն է ուսումնասիրել, ինչպես կերպարվեստի և կիրառական արվեստի հիմնական սկզբունքները և տարրերը, այնպես էլ որոշակի տեսական գիտելիքների յուրացումը՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Դասերի, այսինքն՝ առանձին թեմաների հերթագայությունն ենթադրում է անցած նյութի յուրացման աստիճանի հայտորոշում, ինչը նոր գիտելիքների և հմտության զարգացման նախապայմանն է: Դասի կառուցման սկզբունքը այս տարիքի աշակերտների համար, հիմնվում է բնական հետաքրքրության առաջացման, արդեն առկա փորձի միջոցով նոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքի վրա, ինչն աշակերտի համար ուսման մոտիվացիան բարձրացնելու

լավագույն միջոցն է: Դասի ընթացքում տեղի է ունենում նյութի յուրացման մշտական ստուգում/ գնահատում (անհրաժեշտության դեպքում, տեղի է ունենում արդյունքի ուղղում, ինչը նկարագրված է հավանական սցենարներում): Յուրաքանչյուր գլխի վերջում ամփոփիչ դասի միջոցով տեղի է ունենում ամբողջ գլխի նյութի ամփոփում և ամփոփիչ աշխատանքների գնահատում (գործնական աշխատանք, թեստ, տեսական աշխատանք): Ուսուցչի գրքում (ձեռնարկում) հավելյալ կերպով տրված են աշակերտի ինքնագնահատման աղյուսակների նմուշներ, որոնցով աշակերտն անձամբ կարողանում է գիտակցել ստացած արդյունքները, ամրագրել թերությունները/ դժվարությունները/ խնդիրները: Աշակերտի գրքի յուրաքանչյուր գլխում ուսումնասիրելիք նյութը տրված է նախնական գիտելիքից և փորձից ելնելով, ինչպես նաև սերտ կապով այլ դպրոցական առարկաների հետ (բնագիտություն, վրաց լեզու, աշխարհագրություն, պատմություն և այլն): Նոր գիտելիքների ձեռք բերման և հմտությունների մշակման կայուն հենարանն է թեմատիկայի կապը առօրյա կյանքի հետ՝ աշակերտի գործնական փորձով: Գիտելիքի ամրապնդման և գնահատման մեխանիզմներից մեկը տարբեր տեսակի թեստային աշխատանքներն են (տեսողական թեստ, տեսական թեստ, խառը թեստեր), որոնք ամբողջական տեսքով ներկայացված են Ուսուցչի գրքում:

Գործնական մասում ներկայացված են Աշակերտի գրքի առաջին գլխի տասներկու դասի ենթադրական սցենարները, իսկ հաջորդ չորս գլուխներից՝ մեկական սցենար: Ենթադրական սցենարները ընտրված են այնպես, որ ներկայացված լինեն բոլոր տեսակի դասերը գնահատման սեփական մեխանիզմներով և գործիքներով՝ հանձնարարություններ, ինտերակտիվ, քննարկումներ և այլն: Ուսուցչի գրքում ներկայացված են բոլոր դասերի թեմաները, նպատակը և ուսման արդյունքի կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչի արդյունքի հետ կոնկրետ ստուգիչը նշելով: Յուրաքանչյուր դասում նշված են դասի կազմակերպման ձևերը և համապատասխան ռեսուրսները: Հավանական սցենարներում մանրամասն ներկայացված են ակտիվությունները և յուրաքանչյուր ակտիվության կապն ազգային ուսումնական պլանի ուսման արդյունքի հետ, մատնանշելով կոնկրետ դասաժամը: Յուրաքանչյուր դասի հետ առկա են գնահատման ձևը և գնահատման չափանիշները, հանձնարարականներ (հիմնականում ուսանում/ ուսուցման տարբեր ռազմավարությունները մատնանշելով), ցուցումներ և տերմինների բացատրություն: Տարբեր տեսակի առաջադրանքները (տնային և դասարանային հանձնարարություններ, դպրոցական քննարկումներ, ինտերակտիվ և այլն) կենտրոնացված են տարբեր կարողություններ և կրթական կարիքներ ունեցող աշակերտների վրա: Ուսուցչին տրվում է հանձնարարական ակտիվություններ, ինչպես առաջադրանքը բարդացնելու, այնպես էլ այն պարզեցնելու տեսքով: Ուսուցչի գրքում (դասի սցենարներում) տրված է դասարանային և տնային աշխատանքների 9 գործնական և տեսական աշխատանք, գնահատման չափանիշներ, ինչպես նաև ամփոփիչ առաջադրանքների գնահատման աղյուսակներ, նախատեսելով առաջադրանքի կոնկրետ տիպը: Սցենարների հանձնարարական մասում առաջարկված են տնային աշխատանքները կատարելու տարբեր ձևեր և ռազմավարություններ:

Բավական ընդգրկուն են լրացուցիչ ռեսուրսները՝ տպագիր արտադրանքը, էլեկտրոնային ռեսուրսը (նպատակայնորեն ընտրված էլեկտրոնային ռեսուրսները կներբեռնվեն հրատարակչության վեբ-կայքում, գործնականորեն դասագրքում քննարկած յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ՝ դարաշրջան, մշակույթ, նկարչական տեխնիկա, ստեղծագործող, երկ և այլն):

Ուսուցչի գրքում ներկայացված են նաև անկախ նախագծերի իրականացման հիմնական պարամետրերը՝ նպատակը, արդյունքը և կապը ազգային ուսումնական պլանի արդյունքի հետ, կազմակերպման ձևը, անհրաժեշտ ռեսուրսները, հանձնարարականները: Բազմազան են տարբեր տեսակի թեստային վարժությունների նմուշները: Այսպիսով, Ուսուցչի գիրքը գործնական տեսանկյունից Աշակերտի գրքին զուգահեռ մեթոդոլոգիական աջակցություն է իրագործում և հնարավորություն է ընձեռում ուսուցչին օգտվել գրքի հեղինակների կողմից առաջարկված հավանական սցենարներից, միաժամանակ. տալիս է անհրաժեշտ ազատություն վարել դասավանդման գործընթացը ստեղծագործ մոտեցմամբ և դասարանի իրական անհրաժեշտություններից ելնելով:

# 14. Ուսուցչի գրքի եզրափակիչ մասը

Աշակերտի գրքում յուրաքանչյուր դաս ինտերակտիվ բնույթ է կրում, դասի հիմնական մասը տրվում է ինտերակտիվ հարցերին, որոնք ուսուցչին հնարավորություն են տալիս ստուգել ինչպես արդեն անցած նյութի յուրացման որակը, այնպես էլ ընդհանուր գիտելիքները (ինտեգրումը այլ առարկաների հետ, կապը կենցաղային փորձի հետ), միաժամանակ աշակերտի համար ներկայացվում է որոշակի ասպարեզ, սեփական միտքը և կարծիքը ազատ արտահայտելու համար: Ուսուցչի գրքի գործնական մասում, ինտերակտիվի պատասխանները հավանական սցենարներում և յուրաքանչյուր դասում ներկայացված են հապավումներով ՊԻՀ՝ պատասխան ինտերակտիվի հարցին:

Գիտելիքները հարստացնելու և խորացնելու նպատակով գրքում ուսուցչի համար տրված են հավելյալ տեղեկություններ՝ ՀՏՈւ, որոնք ուսուցիչն, ըստ իր հայեցողության, դասի ընթացքի որոշակի հատվածում ծանոթացնում է աշակերտներին: Գրքին կցված է օտար բառերի և տերմինների բառարան:

# 15. Ուսուցչի գրքի հետ կապված ցուցումներ

1. Ուսուցչի գրքում սահմանված է յուրաքանչյուր դասի նպատակը, գնահատումը, դասի համար անհրաժեշտ ռեսուրսները, աշխատանքի ձևը և դասի արդյունքները: Ցուցումներ, հանձնարարականներ:

2.Ուսուցչի գրքում տրված է 47 դասի ենթադրական սցենար: Ինչպես նաև էլեկտրոնային ուղիներով ներկայացված տարբեր տիպի հավելյալ նյութեր:

3.Կարևոր է, որ ուսուցիչը դասի ծրագրման ժամանակ հաշվի առնի նախնական գիտելիքները, այսինքն ուսուցիչը նախապես պետք է պատրաստի այն հարցերը, որոնց միջոցով կդրսևորվեն կոնկրետ հարցի հետ կապված արդեն անցած նյութի գիտելիքները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածում մշակված հմտությունները: Հենց սա է այն հիմքը, որի վրա ուսուցիչը հետագայում պետք է կառուցի նոր նյութ և աշակերտի մոտ զարգացնի համապատասխան գործնական հմտություններ:

4.Կարևոր է նաև այն, որ յուրաքանչյուր դասի վերջում աշակերտները կարգավորեն իրենց դասասենյակը, որպեսզի ուսումնական գործընթացն ընթանա մաքուր միջավայրում: Աշակերտների աշխատանքի միջավայրը՝ նստարանները, դասարանը, ամեն անգամ պիտի մաքուր լինեն: Ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի այդ սովորության զարգացմանը և հարկ եղած դեպքում հիշեցնի այդ պարտականության մասին:

5.Ուսուցիչը պետք է փորձի աշակերտների մոտ զարգացնել և՛ սեփական, և՛ ուրիշի աշխատանքներին նուրբ և  զգուշությամբ վերաբերվելու մշակույթը:

6.Դասի սցենարներում յուրաքանչյուր ակտիվության ժամանակը պայմանական է: Ուսուցիչն, ըստ իր հայեցողության, կարող է փոխել յուրաքանչյուր ակտիվության տևողությունը: Եթե ուսուցիչը նպատակահարմար համարի, որ գործնական աշխատանքին պետք է հատկացնել ավելի շատ ժամանակ և շնորհանդեսի համար ժամանակ չի մնում,ապա կարող է այն տեղափոխել հաջորդ դաս:

7. Գրքի վերջում տրված երեք նախագծերից («Մեր ցուցահանդեսը», «Գեղեցկացնենք դպրոցի բակը», «Երաժշտությունը և նկարչությունը») մեկը՝ «Մեր ցուցահանդեսը» ցանկալի է, որ ներկայացվի տարվա վերջում, իսկ մնացածը ուսուցիչն, ըստ իր հայեցողության կարող է անցկացնել ցանկացած ժամանակ:

# 16. Դասերի հնարավոր սցենարներ

## Աշակերտի գրքի բովանդակությունը.

Ինչպե՞ս օգտվենք գրքից .......... 5

**I գլուխ**
1. Արձակուրդներ .......... 6
2. Ի՞նչ է կոմպոզիցիան .......... 8
3. Ընտրիր թուղթը .......... 10
4. Գույները տարածության մեջ .......... 12
5. Ծովը և տարածությունը .......... 13
6. Ուրախ մարդուկներ .......... 14
7. Լույս՝ պատուհաններում .......... 15
8. Վրացի արվեստագետները Փարիզում .......... 16
9. Աշնանային բնանկար .......... 18
10. Որտե՞ղ նստեցնենք փիսիկին .......... 19
11. Կենդանաբանական այգու բնակիչները .......... 20
12. Ամենն իմ հայրենիքն է .......... 22

**II գլուխ**
13. Մակերևույթ և ֆակտուրա .......... 24
14. Աշխատանքի նպատակը .......... 26
15. Պահիր անտառը հանուն երեխաների .......... 28
16. Հին աշխարհի քանդակագործությունը .......... 30
17. Ժպիտն՝ ընձա .......... 32
18. Դրոշմանկար գլանի միջոցով .......... 33
19. Անձրևոտ եղանակ .......... 34
20. Չորքոտանի բարեկամ .......... 35
21. Ամենն իմ հայրենիքն է .......... 36
22. Կարմրագլխարկ սնկեր .......... 38
23. Պատկերներ և շրջակա միջավայր .......... 40
24. Պատկերազարդ «Ոդիսականը» .......... 42
25. Հովիար .......... 44

**III գլուխ**
26. Դիմանկար .......... 46
27. Զվարճալի սեղմակներ .......... 48
28. Ինտերիերի էսքիզ .......... 49
29. Նկար, դարաշրջան, երկիր .......... 50
30. Աշխարհի հայտնի աշտարակներ .......... 52
31. Ապագայի աշտարակ .......... 54
32. Նոր տարի .......... 55
33. Ամանորյա դիմակահանդես .......... 56
34. Գծանկարչություն (գրաֆիկա) .......... 58
35. Դինամիկա (շարժունակություն) .......... 60
36. Ռիթմը նկարչության մեջ .......... 62
37. Նկար խճաքարերի վրա .......... 63
38. Ամենն իմ հայրենիքն է .......... 64

**IV գլուխ**
39. Համամասնություն .......... 66
40. Տարբեր չափերի առարկաներ .......... 67
41. Նորեն կմեծանան .......... 68
42. Նկար և տպավորություն .......... 69
43. Ծուռ հայելի .......... 70
44. Մարտական տեսարաններ .......... 72
45. Նվեր մայրիկին .......... 74
46. Դասարանային ցուցատախտակ .......... 75
47. Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն՝ Զատիկ .......... 76
48. Ամենն իմ հայրենիքն է .......... 78

**V գլուխ**
49. Հին ու նոր քաղաք .......... 80
50. Վրձնահարված և գույնի գրադացիա (աստիճանավորում) .......... 82
51. «Հին» և «Նոր» գեղանկարչություն .......... 84
52. Ինչպե՞ս նկարենք խնձոր .......... 86
53. Հսկա քանդակներ .......... 88
54. Ապլիկացիա գործվածքով .......... 90
55. Վրաստանի արքաները .......... 92
56. Ջրաներկ. նուրբ և թեթև ներկեր .......... 94
57. Ամենն իմ հայրենիքն է .......... 96
58. Ցուցասրահ .......... 98
59. Մարդ, գործունեություն, շրջակա միջավայր .......... 100
60. Աշխատում ենք կավով .......... 102
61. Ակվարիում .......... 103
62. Վրաստանի տեսարաններ .......... 104

Նախագիծ. դպրոցի բակը .......... 106

Ամփոփիչ դաս -1 .......... 107
Ամփոփիչ դաս - 2 .......... 108
Ամփոփիչ դաս - 3 .......... 110
Ամփոփիչ դաս - 4 .......... 112
Ամփոփիչ դաս - 5 .......... 114

Բառարան .......... 118

## 1. Արձակուրդներ

**Դասի նպատակ.** Պարզենք, թե ի՞նչ գիտելիքներ և հմտությունների են տիրապետում աշակերտները, կատարենք աշակերտների կարողությունների հայտորոշում, որոշենք որքանով ակտիվ են օգտագործում նրանք անցյալ տարվա ընթացքում սովորած սկզբունքները, տարրերը, տեխնիկան և ընթացակարգը՝ սեփական տպավորությունները և հուզմունքները փոխանցելու համար: Աշակերտի մոտ զարգացնենք սեփական տպավորությունները, հուզմունքները արտահայտելու և հիշողությամբ նկարելու ունակությունը, զարգացնենք զույգով աշխատելու (համագործակցելու) և շնորհանդես ներկայացնելու ունակությունները:

**Արդյունք. Ուս. պլան.V.1 Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

- Կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա կիրառելով տրվածն առավել լավ կատարելու համար:
- Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):
- Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ, շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան.V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս, խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

### Դասի ընթացք

**Ակտիվություն I**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ ակտիվացնենք երևակայությամբ, հիշողությամբ նկարելու ունակությունը, զարգացնենք իրական դեպքի հիման վրա գեղարվեստական ստեղծագործության մտահղացման ունակությունը:

Ակտիվության արդյունք.

***Ժամանակ.*** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս. դասագիրք,** արձակուրդների ընթացքում արված լուսանկարներ:

### Ակտիվության համառոտ նկարագիր

**Ակտիվություն I**

Ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե որտե՞ղ է հանգստացել նրանցից յուրաքանչյուրը: Աշակերտները թվարկում են այն վայրերը, որտեղ նրանք անցկացրել են արձակուրդները: Այնուհետև ուսուցիչը զրուցում է աշակերտների հետ այն մասին, թե որքան նոր տպավորություններ է ստանում մարդը հանգստանալու մեկնելիս, նոր մարդկանց հետ ծանոթանալիս, նոր միջավայր, բնություն, տարբեր սովորույթներ տեսնելիս:

**Ցուցում.** Ուսուցիչը աշակերտներին կարող է պատմել հանգստանալու ժամանակ իր հետ տեղի ունեցած հետաքրքիր դեպքերի մասին: Ուսուցիչը բացատրում է երեխաներին, որ կերպարվեստը մարդկանց միջև շփման լավագույն միջոցն է և այժմ նրանք կարող են նկարների միջոցով պատմել միմյանց, թե ի՞նչ նոր բան իմացան և ի՞նչ է կատարվել նրանց հետ ամռան ընթացքում, միմյանց հետ կիսել տպավորությունները՝ կիրառելով ձևն ու գույնը: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին անձամբ ընտրել նյութն ու տեխնիկան աշխատանքը կատարելու համար: Ուսուցիչը հիշեցնում է աշակերտներին, որ նրանք կարող են կիրառել այն նկարչական նյութը, բնական և արհեստական պաշարը և տեխնիկան, որոնք օգտագործում էին նախորդ դասարաններում, օրինակ՝ սպունգ և ատամի խոզանակներ, ծողիկներ, ստվարաթուղթ և այլն: Աշակերտները թվարկում են այն էֆեկտները, որոնք հնարավոր է ստանալ աշխատանքում արհեստական ռեսուրս կիրառելով:

**Ակտիվություն II**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք մտահղացմանը համապատասխան նկարչական նյութի և ռեսուրսի ընտրության ունակություն: Զարգացնենք հիշողությամբ նկարելու ունակությունը, կերպարվեստի հիմնական տարրերի և տեխնիկայի, արհեստական և բնական ռեսուրսներն արդյունավետ կիրառելու ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրքը՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ ),

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա կիրառելով տրվածն առավել լավ կատարելու համար:

● Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ, շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** թուղթ, ցանկացած նկարչական նյութ, բնական կամ արհեստական նյութ, սոսինձ և մկրատ:

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները աշխատում են անհատականորեն: Աշխատանքն ավարտելուց հետո զույգերը փոխանակում են իրենց աշխատանքները և փորձում գուշակել միմյանց աշխատանքների թեման, սյուժեն, աշխատանքում արտահայտած հույզերը, տպավորությունը:

### Ակտիվություն III

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել սեփական և զուգընկերոջ աշխատանքը ներկայացնելու, մտահղացումը գուշակելու, տրամադրվածությունը նկարագրելու ունակությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի մասին, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի վերաբերյալ:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ստուգիչ**

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** զույգերով

**Ռեսուրս.** դասարանում կատարած աշխատանք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչն առաջարկում է յուրաքանչյուր աշակերտի զուգընկերոջ հետ փոխանակել աշխատանքները: Զույգերը կատարում են միմյանց աշխատանքների ներկայացում (շնորհանդես): Զույգերը խոսում են միմյանց աշխատանքներում փոխանցված տպավորությունների, էմոցիաների և այն

մասին, թե ի՞նչ միջոցներ է կիրառել զուգընկերը դրանք փոխանցելու համար, որտե՞ղ էր նա հանգստանում և ի՞նչ է ցանկացել պատկերել աշխատանքում: Գնահատում են ընկերների աշխատանքները: Քննարկում են, թե որքանով լավ է կարողացել զուգընկերը աշխատանքում փոխանցել մտահղացումը: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին, կարգի բերել աշխատավայրը և շնորհակալություն է հայտնում նրանց: Ուսուցիչն ուսումնասիրում է աշակերտների աշխատանքները, կատարում գրառումներ յուրաքանչյուր աշխատանքի մասին և պահում իր թղթապանակում:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** գնահատվում է, թե կիրառելով նախորդ տարիների ընթացքում յուրացված նյութը և տեխնիկան, որքանո՞վ է կարողացել աշակերտը արտացոլել տպավորությունները, հույզերը, օգտագործել հիշողությամբ նկարելու, համագործակցության, շնորհանդես ներկայացնելու ունակությունները:

## 2. Ի՞նչ է կոմպոզիցիան

**Դասի նպատակ.** Աշակերտին հիշեցնենք/ծանոթացնենք կոմպոզիցիա տերմինը և բացատրենք դրա նշանակությունը, հիշեցնենք համաչափ և անհամաչափ կոմպոզիցիայի տեսակները, ծանոթացնենք կոմպոզիցիայում հավասարակշռության հասկացությանը, զարգացնենք աշխատանքում կոմպոզիցիոն բաշխման տարբեր հնարքներ կիրառելու ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

- Կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա կիրառելով տրվածն առավել լավ կատարելու համար,
- Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցներ, տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):
- Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան.V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի մասին, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի վերաբերյալ:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

• Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

## Դասի ընթացք

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ ակտիվացնենք երևակայության, հիշողությամբ նկարելու ունակությունը, զարգացնենք իրական դեպքի հիման վրա գեղարվեստական ստեղծագործության մտահղացման ունակությունը:

**Ակտիվության արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

• Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

• Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ժամանակ.** 15 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, մատիտներ

### Ակտիվության համառոտ նկարագիր

### Ակտիվություն I

Ուսուցիչը խոսում է աշակերտների հետ այն մասին, որ յուրաքանչյուր կերպարվեստի ստեղծագործություն ունի որևէ տիպի կոմպոզիցիա, այսինքն նրա տարրերը որոշակի կարգով կապակցված են, դասավորված: Հենց տարրերի նման տեղադրությունը և կապակցումը կոչվում է կոմպոզիցիա: Նախորդ տարիներին աշակերտներն արդեն սովորել են կոմպոզիցիայի որոշակի տեսակներ և ուսուցիչը հիշեցնում է նրանց այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ համաչափություն, անհամաչափություն, համաչափության առանցք: Աշակերտները խոսում են այս հասկացությունների մասին և վերհիշում, թե ինչ է նշանակում դրանցից յուրաքանչյուրը: Ուսուցիչը հղում է ինտերակտիվ հարցեր, որոնց և աշակերտները պատասխանում են:

**Պ.Ի.Հ.** 1 և 2 լուսանկարներում ներկայացված կոմպոզիցիաները համաչափ են:

2. Համաչափության առանցք՝ որևէ ձևի, կոմպոզիցիայի կենտրոնում անցկացված առանցք, որի երկու կողմում էլ հավասարաչափ ձևեր են տեղադրված:

3. Սանտ Ապոլինարե Նուովոյի խճանկարի վրա Փրկչի պատկերն իրենից ներկայացնում է համաչափության առանցք: Այնուհետև ուսուցիչը և աշակերտները դատողություններ են անում հավասարաչափություն հասկացության մասին:

4. Առաջին (ա) լուսանկարի վրա ներկայացված երկրաչափական պատկերների կոմպոզիցիան՝ համաչափ է:

5. Այս նույն լուսանկարում կոմպոզիցիան հավասարակշռված է:

6. 3-րդ կոմպոզիցիան անհամաչափ է:

7. Չնայած անհամաչափությանը, կոմպոզիցիան հավասարակշռված է:

8. 4-րդ և 5-րդ կոմպոզիցիաները անհամաչափ են, թեև հավասարակշռված են, իսկ 6-րդ կոմպոզիցիան և՛ համաչափ է, և՛ հավասարակշռված:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին թղթի վրա մատիտով կատարել նույնպիսի համաչափ, անհամաչափ, հավասարակշռված կոմպոզիցիաներ, նրանց համար նախընտրելի երկրաչափական կամ յուրաքանչյուր այլ բնական պատկերների կիրառմամբ:

Նշված ժամանակահատվածում (5 րոպե), աշակերտները կատարում են հանձնարարությունը: Այնուհետև ուսուցիչը խնդրում է նրանց, ներկայացնել հերթով՝ համաչափ, անհամաչափ, հավասարակշռված կոմպոզիցիաների նմուշները: Դասընկերները ուսումնասիրում են կատարած նմուշները, թողնում են մեկնաբանություններ: Հարկ եղած դեպքում ուսուցիչը ուղղում է աշակերտներին, կրկնել է տալիս դասի ընթացքում անցած հասկացությունները:

### Ակտիվություն II

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել տրված թեմայով աշխատանք ստեղծելու ունակություն՝ համաչափ, անհամաչափ, հավասարակշռված սկզբունքների կիրառմամբ:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 20 րոպե

**Ռեսուրս.** թուղթ, ցանկացած նկարչական նյութ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները աշխատում են անհատականորեն: Աշխատանքն ավարտելուց հետո զույգերը փոխանակում են իրենց աշխատանքները և փորձում գուշակել միմյանց աշխատանքների թեման, սյուժեն, աշխատանքում արտահայտած հույզերը, տպավորությունը:

### Ակտիվություն III

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել սեփական և զուգընկերոջ աշխատանքը ներկայացնելու, մտահղացումը գուշակելու, տրամադրվածությունը նկարագրելու ունակությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ստուգիչ**

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** զույգերով

**Ռեսուրս.** դասարանում կատարած աշխատանք

**Ակտիվության համառոտ նկարագիր**

Ուսուցիչն առաջարկում է յուրաքանչյուր աշակերտի իր զուգընկերոջ հետ փոխանակել աշխատանքները: Զույգերը կատարում են միմյանց աշխատանքների ներկայացում (շնորհանդես): Խոսում են միմյանց աշխատանքներում փոխանցված տպավորությունների, էմոցիաների և այն մասին, թե ի՞նչ միջոցներ է կիրառել զուգընկերը դրանք փոխանցելու համար, որտե՞ղ էր նա հանգստանում և ի՞նչ է ցանկացել պատկերել աշխատանքում: Գնահատում են ընկերների աշխատանքները: Քննարկում են, թե որքանով լավ է կարողացել զուգընկերը աշխատանքում փոխանցել մտահղացումը: Ուսուցիչը խնդրում է աշակետներին, կարգի բերել աշխատավայրը և շնորհակալություն է հայտնում նրանց: Ուսուցիչն ուսումնասիրում է աշակերտների աշխատանքները, կատարում գրառումներ յուրաքանչյուր աշխատանքի մասին և պահում իր թղթապանակում:

**Տերմիններ `** կոմպոզիցիան լատիներեն բառ է և նշանակում է կազմել, կապակցել:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** կոմպոզիցիայի հասկացության և կոմպոզիցիայի տարբեր տեսակների վերաբերյալ տեսական գիտելիք և աշխատանքում դրանք գործնականորեն կիրառելու ունակություն:

## 3. Ընտրիր թուղթը

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել ըստ մտահղացման համապատասխան թղթի ձևի և նկարի համար հատկացված տարածքի (ուղղահայաց/երկայնակի, հորիզոնական/լայնակի) և կերպարվեստի հիմնական տարրերի և սկզբունքների ընտրության ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

## Դասի ընթացք

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք տարբեր տեսակի նկարի համար հատկացված տարածքը՝ երկայնակի կամ լայնակի թղթի կիրառում՝ մտահղացման համապատասխան կոմպոզիցիա ստեղծելու համար:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է կոռեկտ արտահայտություններ:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, մատիտներ, ներկեր, վրձին, ջրաման, անձեռոցիկներ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները ծանոթանում են դասագրքում ներկայացված արվեստի ստեղծագործություններին, դրանց ձևին: Քառանկյուն, լայնակի, երկայնակի և շրջանաձև նկարի համար հատկացված տարածքը պայմանավորում է կոմպոզիցիայի բնույթը: Ուսուցիչը պատմում է աշակերտներին, որ նկարիչն ըստ մտահղացման ընտրում է ձևը, որի վրա բաշխում է պատկերներ և օբյեկտներ: Աշակերտները նկարագրում են աշխատանքները, ուշադրությունը սևեռում են պատկերների քանակի և դրանց դիրքի վրա: Ուսուցիչը ինտերակտիվ հարցեր է հղում, որոնց պատասխանում են աշակերտները:

**Պ.Ի.Հ.** 1. Այս աշխատանքը շրջանաձև է: Այս ձևը կոչվում է տոնդո:

2. Ամենից շատ պատկեր պատկերված է Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք»-ը կոմպոզիցիայում, ինչը գերազանց արտացոլված է նկարի լայնակի տարածքի վրա:

3. Երկրորդ աշխատանքը ներկայացնում է բնակելի սենյակ: Ճիշտ է, կերպարները առջևի պլանում են ներկայացված, սակայն հանդիսատեսը լավ է տեսնում սենյակի ինտերիերը, մանրամասնությունը: Թվում է, թե հանդիսատեսը նույնպես գտնվում է նույն տարածքում:

### Ակտիվություն II

**Ակտվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել տրված թեմայով աշխատանք ստեղծելու ունակություն՝ տարբեր ձևաչափի թուղթ կիրառելով:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուղվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** երկու թուղթ, մատիտներ, ներկեր, վրձին, ջրաման, անձեռոցիկներ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին կատարել երկու աշխատանք՝ լայնակի և երկայնակի ձևաչափ կիրառելով: Թղթի ընտրությունը՝ մտահղացմանը համապատասխան: Աշակերտներն աշխատում են անհատականորեն: Աշխատանքն ավարտելուց հետո պատրաստվում են ներկայացնել աշխատանքի շնորհանդես:

### Ակտիվություն III

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել սեփական աշխատանքը ներկայացնելու, մտահղացման և նկարի համար հատկացված տարածքի ձևի մասին խոսելու ունակություն:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ստուգիչ**

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասարանում կատարած աշխատանք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները ներկայացնում են աշխատանքները և փորձում են հիմնավորել, թե ինչու են ընտրել թղթի այս կամ այն ձևը: Համադասարանցիները և ուսուցիչը ուշադրություն են դարձնում, թե ինչպես է կիրառված/յուրացված նկարի համար նախատեսված տարածքը, և ինչպես է կոմպոզիցիան «հարմարվել» ձևաչափին:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** կոմպոզիցիայի հասկացության և կոմպոզիցիայի տարբեր ձևերի տեսական գիտելիքներ և աշխատանքում դրանք գործնականորեն կիրառելու ունակություն:

## 4. Գույները տարածության մեջ

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել գունաբացման օգնությամբ առջևի և հետևի պլանը տարբերակելու և տարածության փոխանցման ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

## Դասի ընթացք

### Ակտիվություն I

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

**Ժամանակ.** 10 րոպե
**Աշխատանքի ձև.** անհատական
**Ռեսուրս.** դասագիրք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները ծանոթանում են դասագրքում ներկայացված դասի տեքստին և տեսողական նյութին, խոսում են այն մասին, որ հարթության վրա տարածությունը փոխանցելու համար նկարիչները գունաբացման մեթոդն են կիրառում: Ուսումնասիրում են աշխատանքները և խոսում այն մասին, թե ինչպես կպատկերվի առջևի պլանում վառ գույներով բնանկարը, իսկ բաց, գունատված գույներով՝ հետևի պլանը: Ուսուցիչը հղում է ինտերակտիվ հարցեր:

**Պ.Ի.Հ.** 1. Հեռավորության վրա հանդիսատեսի և որևէ առարկայի միջև օդի մեծ զանգված է:

2. Օդի ծավալը հաճախ թափանցիկ չէ և դրա համար հետևի, հեռու տեսարանը աղոտ է երևում:

3. Առաջին աշխատանքում ծառերը և հողը առջևի պլանում ավելի վառ գույներով են պատկերված:

4. Այս մեթոդով նկարիչներն աշխատանքում ստեղծում են տարածության, խորության տպավորություն:

### Ակտիվություն II

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Աշխատանքի ձև.** անհատական
**Ժամանակ.** 25 րոպե
**Ռեսուրս.** թուղթ, ցանկացած նկարչական նյութ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները կատարում են հանձնարարությունը, գունաբացման միջոցով բնանկարում փորձում են փոխանցել առջևի և հետևի պլանները, կիրառում են տարածության փոխանցման բոլոր ծանոթ միջոցները: Նախատեսված ժամանակն անցնելուց հետո աշակերտները պատրաստվում են աշխատանքների ներկայացմանը:

### Ակտիվության III

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած

սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասարանում կատարած աշխատանք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները կազմակերպում են դպրոցական ցուցահանդես, դիտարկում են միմյանց աշխատանքները: Սեփական աշխատանքը ներկայացնելիս խոսում են տարածության փոխանցման հնարքների մասին: Նշում են, թե ում մոտ ստացվեց ամենից լավ:

**Գնահատման ձև.** ընթացիկ

## 5. Ծովը և տարածությունը

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել տարբեր նկարչական նյութերի և տեխնիկաների կիրառմամբ աշխատանքում տարածություն փոխանցելու, այն պատկերելու ունակությունը, որպեսզի նա կարողանա փոխանցել ծովի տարածությունն ու համապատասխան տրամադրությունը: Աշակերտի մոտ զարգացնել աշխատանքը ներկայացնելու ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի),

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

### Դասի ընթացք

#### Ակտիվություն I

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս. դասագիրք,** թուղթ, մատիտներ, ռետին

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը դասը սկսում է ասելով. «Ծովի ափին գտնվելիս, հավանաբար մտածել եք այն մասին, թե ինչպիսի անծայրածիր տարածություն է բացվում ձեր առջև»: Այնուհետև հարց է հղում. «Ինՙչ եք կարծում, ինչպես է հնարավոր պատկերել ծովի տարածությունը թղթի հարթ մակերևույթին»: Աշակերտների պատասխանից հետո, ուսուցիչը հիշեցնում է աշակերտներին հորիզոնական գծի մասին, որը նրանք սերտել են նախորդ տարվա ընթացքում:

Նախքան ինքնուրույն աշխատանք սկսելը ուսուցիչն առաջարկում է աշկերտներին ստեղծել ծովի բնապատկերի էսքիզ:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է առաջին հերթին թղթի վրա մատիտով անցկացնել հորիզոնական գիծ, առջևի և հետևի պլանները միմյանցից առանձնացնելու նպատակով:

Ապա նրանք կարող են ավելացնել նաև այլ դետալներ՝ արմավենիներ, նավեր, նավակներ, տներ, արև և այլն: Սա նախապատրաստական աշխատանք է, վարժության տեսակ, որով աշակերտը մինչև ինքնուրույն աշխատանքն ավարտելը ձեռք է բերում տարածության փոխանցման որոշակի փորձ:

#### Ակտիվություն II

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել տրված թեմայով աշխատանք ստեղծելու ունակություն՝ հորիզոնի գծի, առջևի և հետևի պլանի պատկերման սկզբունքների կիրառմամբ:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, ետևի տեսարանը՝ աղոտ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** թուղթ, ջրաներկի համար հատուկ նկարչական թուղթ կամ սովորականից հաստ թուղթ, մատիտներ, ֆլոմաստերներ, ներկեր, վրձին, սպունգ, ջրաման, անձեռոցիկներ:

## Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ինքնուրույն նկարել ծովի բնապատկեր ջրաներկերի միջոցով: Ցանկալի է, այս աշխատանքը կատարվի ջրանկերկի համար հատկացված հատուկ կամ ավելի հաստ թղթի վրա: Աշակերտները մտահղացմանը համապատասխան ն պետք է ընտրեն ձևաչափ (հորիզոնական կամ ուղղահայաց):

Նախքան աշխատանքը սկսելը, ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է ջրաներկի թաց տեխնիկային, հաջորդաբար պատմում ջրաներկով աշխատելու փուլերի մասին: Սկզբում, աշակերտները մատիտով պետք է ոչ հստակ տարբեր դետալներ նշեն. հորիզոնի գիծ և ջրափնյա գիծ: Այնուհետև թուղթը սպունգի միջոցով պետք է թրջեն, մի քիչ չորանալուց հետո, տարբեր գույնի ներկերով աշխատեն, երբ ներկը չորանա առաջին պլանում չորացած մակերեսին ջրաներկով նկարեն արմավենիներն ու նաև մյուս պատկերները: Առաջին պլանի մանրամասները հնարավոր է մշակել ջրաներկով, գունավոր մատիտով կամ պաստելով:

### Ակտիվություն III

**Ակտիվության նպատակ.** աշակերտի մոտ զարգացնել սեփական աշխատանքը ներկայացնելու, մտահղացման ու տրամադրվածության նկարագրության, տերմինները մտածված կիրառելու ունակություն:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանքը: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման

և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** Դասարանում կատարած աշխատանք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները ներկայացնում են աշխատանքները, և փորձում են հիմնավորել, թե ինչու են ընտրել թղթի այս կամ այն ձևը, ինչ մեթոդներ են կիրառել հարթ թղթի վրա տարածությունը փոխանցելու համար: Մտածված կիրառում են տեխնիկական պատկերող տերմիններ, պատմում են, դժվարացել են, թե ոչ ջրաներկով աշխատելիս:

**Աշխատանքի ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Տարբեր նկարչական նյութերի և ջրաներկի թաց տեխնիկայի կիրառմամբ տարածություն պատկերելու և տրամադրություն փոխանցելու, ներկայացնելու ունակություն:

## 6. Ուրախ մարդուկներ

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել մարդու կեցվածքը սխեմատիկ կերպով կառուցելու և նրան շարժման մեջ պատկերելու ունակությունը: Նաև փորձարկման ճանապարհով մշակել տարբեր նյութերով ֆակտուրա ստեղծելու, համագործակցության և շնորհանդես ներկայացնելու ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Աշխատանքն առավել լավ կատարելու համար կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա կիրառելով:

● Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցները, տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշեր, բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան V.3** Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:

**Ստուգիչ**

- Համատեղ աշխատելիս (միջոցառում ծրագրել/իրականացնել, զույգով/խմբով ստեղծել աշխատանք) կիսում է համադասարանցիների տարբերվող կարծիքները, գաղափարները, նրանց հետ ընդհանուր որոշումներ է կայացնում:
- Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:
- Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:
- Մյուսների հետ համագործակցելու նախաձեռնություն է ցուցաբերում, օգնում նրանց կոնկրետ խնդիրը լուծելու հարցում:
- Պահպանում է սահմանված ժամանակը՝ բոլոր տեսակի ակտիվություններն իրականացնելիս:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

## Դասի ընթացք

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք պատկերների դիրքի, շարժման համաձայն աշխատանքը բնութագրելու հմտություն, վարժեցնենք պատկերացումը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատելու ձև՝** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը դիմում է աշակերտներին և հիշեցնում, որ նրանք արդեն ունեն իրար հետ աշխատանքներով խոսելու փորձ (հիշեցնում է առաջին դասը, որտեղ

զույգերը միմյանց աշխատանքներում պետք է գուշակեին, թե որտե՞ղ է նրա զուգընկերը հանգիստն անցկացրել և հետաքրքիր ի՞նչ է տեսել) նա խնդրում է բացել դասագիրքը և ծանոթանալ այնտեղ ներկայացված պատկերազարդումներին, որտեղ հեղինակը փոխանցել է մի մարդուկի պատմություն: Աշակերտների առաջադրանքն է նկարագրել տարբեր լուսանկարներում պատկերված մարդուկին: Դրա համար նրանք պետք է պատասխանեն ինտերակտիվ հարցերին:

**Պ.Ի.Հ.** 1. Առաջին նկարում մարդուկը պառկած է, երկրորդում՝ նստած հանգստանում է, երրորդում ՝ աջ ձեռքով հենվել է, և գլուխը դրել ձեռքին, ձախ ձեռքը դրել է գոտկատեղին, ոտքերը խաչել է, չորրորդում՝ ոտքերը դրել է ուսերի լայնությամբ և ձեռքերը բարձրացրել վեր:

2. Հնարավոր է, որ աշակերտները տարբեր նշանակություն տան յուրաքանչյուր դիրքին, բայց հիմնականում նրանք հետևյալ կերպ են բնութագրում պատկերները. առաջին նկարում մարդուկը քնած է (կամ պառկած է), երկրորդ նկարում մարդուկը նստած է և մտածում է, երրորդում՝ կանգնած մտածում է, չորրորդ նկարում՝ մարդուկն, ի վերջո որոշում է, թե ինչ անի, ինչն արտահայտված է իր դիրքով:

3. Հավանաբար աշակերտները այստեղ ներկայացված մարդուկին պատկերների միջոցով են հետևում, թե ինչպես է նա գտնում ինչ-որ խնդրի լուծման ելք:

**Ակտիվություն II**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել երևակայությամբ նկարելու, համագործակցությամբ աշխատելու ունակությունները: Զարգացնել հորինած պատմությունը նկարներով պատկերելու, տարբեր ֆակտուրաներ պատկերելու ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):

● Մտահղացումն առավել լավ փոխանցելու համար ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրքը:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձև, չափ, գույն) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Աշխատանքն առավել լավ կատարելու համար կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա կիրառելով:

● Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցներ, տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշեր՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա

առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան V.3** Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:

**Ստուգիչ**

- Համատեղ աշխատանքի ընթացքում (միջոցառում ծրագրել/իրականացնել, զույգով/խմբով ստեղծել աշխատանք) կիսում է համադասարանցիների տարբերվող կարծիքները, գաղափարները, նրանց հետ ընդհանուր որոշումներ է կայացնում:
- Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:
- Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:
- Մյուսների հետ համագործակցելու նախաձեռնություն է ցուցաբերում, օգնում նրանց կոնկրետ խնդիրը լուծելու հարցում:
- Պահպանում է ժամանակի սահմանը՝ բոլոր տեսակի ակտիվություններն իրականացնելիս:

**Աշխատանքի ձև**՝ անհատական, խմբային

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք, ձևաչափ, պաստել, մոմ, պլաստիլին, գուաշ կամ ցանկացած այլ ռեսուրս, ծողիկ, մատիտ, սպունգ, պլաստիկ միանգամյա օգտագործման պատառաքաղ:

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը և աշակերտները դասասենյակում սեղանները շրջանաձև են  դասավորում, այնուհետև ուսուցիչը խնդրում է աշակերտներին, մարդուկին անուն դնել, նրա մասին պատմություն հորինել և պատկերել իրենց իսկ կողմից հորինված պատմությունը (ո՞վ է, ո՞ւր է գնում, ի՞նչ է պատահել և այլն), սկզբում նրանք պետք է օգտագործեն վանդակավոր տետրի թերթ: Հաստ գունավոր գծով շրջագծեն քառակուսի, որի յուրաքանչյուր կողմը պետք է կազմված լինի 6 վանդակից: Ուսուցիչը հետևում է նրանց և օգնում կատարել հանձնարարությունը: Այս էջը կօգնի նրանց ձևավորել սեփական գաղափարը: Այս էջում աշակերտը կարող է ստեղծել ոչ միայն էսքիզ, այլ նաև վերջնական աշխատանքը, թեև նման ակտիվության համար նախընտրելի է, գործնական աշխատանքը կատարել ավելի հաստ և մեծ ձևաչափի վրա:

Աշխատանքային տետրում վարժվելուց հետո, աշակերտը կարող է օգտագործել տետրում ներկայացված պատկերների նմուշը՝ մեծ ձևաչափի վրա աշխատելիս: Հորինած պատմության համաձայն, աշակերտը գծում է վանդակների հստակ քանակ (եթե 4 գործողություն է պետք պատկերել, ապա կլինի 4 վանդակ, եթե 6, ապա՝ 6 և այլն): Աշակերտը կարող է, յուրաքանչյուր վանդակ ներկել տարբեր նյութերով, ստեղծել տարբեր ֆակտուրաներ (օրինակ մեկ վանդակը պաստելով, երկրորդը՝ գուաշի ներկով սպունգի օգնությամբ, երրորդը՝ ատամի խոզանակով և այլն): Ֆակտուրան ստեղծելուց հետո աշակերտը նկարում է, քերծում է, սոսնձում է և այդ կերպ է պատմում իր մարդուկի պատմությունը:

Աշխատանքն ավարտելուց հետո այն փոխանցում է նրա ձախ կողմում գտնվող ընկերոջը: Աշակերտներից յուրաքանչյուրը միմյանց աշխատանքներում որոշ դետալ են ավելացնում, օրինակ, թռչուն, որևէ կենդանի, զգեստի դետալ և այլն: Այսպես յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը շրջում է ամբողջ դասարանում և վերջում վերադառնում հեղինակին: Այսպիսով, ամբողջ դասարանը ներգրավված է «նկարներով երկխոսությանը», և փոքրիկ մարդուկների պատմությունները ամբողջանում են:

### Ակտիվություն III

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել համատեղ աշխատանքներ ներկայացնելու ունակությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք

ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ժամանակ. 1**0րոպե

**Աշխատանքի ձև՝** անհատական

**Ռեսուրս.** դասարանում կատարած աշխատանք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները ներկայանում են դասարանի առաջ և խոսում են իրենց աշխատանքի մասին, ինչպիսի՞ն էր իրենց մարդուկի պատմությունը և ի՞նչ ավելացավ մյուս աշակերտների հետ համագործակցելու արդյունքում:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Մարդու կազմվածքը սխեմատիկորեն կառուցելու, դինամիկա (շարժում) փոխանցելու, տարբեր ֆակտուրաներ ստեղծելու ունակություն, թիմային աշխատանքի սկզբունքներ:

## 7. Լույս պատուհաններում

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել տարբեր նյութերով փորձեր կատարելու հմտությունը, խորացնել երևակայությունը, զարգացնել ապլիկացիայի հնարքը օգտագործելու ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Աշխատանքն առավել լավ կատարելու համար կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա կիրառելով:

● Զարգացնում է բազմատեսակ նյութեր և տեխնիկաներ (ավանդական, ոչ ավանդական) կիրառելու հնարքներ, տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիները՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան. V.3 Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել իրականացնելիք աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Համատեղ աշխատանքի ընթացքում (միջոցառում ծրագրել/իրականացնել,

զույգով/խմբով ստեղծել աշխատանք) կիսում է համադասարանցիների տարբերվող կարծիքները, գաղափարները, նրանց հետ ընդհանուր որոշումներ է կայացնում:

● Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

● Մյուսների հետ համագործակցելու նախաձեռնություն է ցուցաբերում, օգնում է նրանց կոնկրետ խնդիրը լուծելու հարցում:

● Պահպանում է ժամանակի սահմանը՝ բոլոր տեսակի ակտիվություններն իրականացնելիս:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

## Դասի ընթացք

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակ.** աշակերտին հիշեցնենք ապլիկացիայի տեխնիկան, որպեսզի այս տեխնիկան օգտագործելով ստեղծի տրված թեմայով աշխատանք:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Սեփական հետաքրքրությունների և փորձի վրա հիմնվելով աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կերպով կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները՝ մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Աշխատանքն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր, տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

● Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ մանր կերտարվեստի նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու նպատակով:

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով,

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրա նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան. V.3 Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել իրականացնելիք աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ միասին կայացնում ընդհանուր որոշումներ:

● Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

● Ցուցաբերում է մյուսների հետ համագործակցության նախաձեռնություն, օգնում նրանց լուծել կոնկրետ խնդիրը:

● Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Ժամանակ.** 30 րոպե

**Աշխատանքի ձև՝** անհատական, զույգերով

**Ռեսուրս. դասագիրք,** ձևաչափ, գունավոր թղթեր, մատիտներ կամ ֆլոմաստերներ, սոսինձ, մկրատ

## Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է դասի տեքստին և նկարազարդումներին: Աշակերտները զրուցում են այն տեխնիկայի և նյութի մասին, որոնք օգտագործվել են այս աշխատանքները ստեղծելու ժամանակ: Ուսուցիչը նրանց հիշեցնում է, որ մեկ աշխատանքում տարբեր նյութերի օգտագործումը, կտրած պատկերների սոսնձումը մեկ ընդհանուր ձևաչափի վրա կոչվում է ապլիկացիա: Ուսուցիչը մանրամասն դիտարկում է, թե ինչպես է ստեղծված այս կամ այն պատկերը՝ տունը, ծառը, ամպերը: Նա խնդրում է աշակերտներին բաժանվել զույգերի, նախապատրաստել նկարչական նյութ և արհեստական ռեսուրս դասի ժամանակ ապլիկացիայի տեխնիկայի միջոցով լույսը պատուհաններում թեմայով աշխատանք ստեղծելու նպատակով: Աշակերտները բաժանվում են զույգերի և իրար մեջ բաժանում դերերը: Պատրաստում են ձևաչափ, գունավոր թղթերի վրա գծում ծառերի, տների ուրվագծեր, ամրացնում ձևաչափի վրա: Տրված թեմային համապատասխան նրանք նույն տեխնիկան օգտագործելով պետք է պատկերեն լուսավորված լուսամուտներ: Այս էֆեկտը փոխանցելու համար նրանք դեղին կամ նարնջագույն թղթերից կտրում են ուղղանկյուններ և սոսնձում ուրվագծած պատուհանների ներսում: Այս կերպ ստանում են լուսավորության էֆեկտ, որը երևում է պատուհաններից: Աշակերտները կարող են ստեղծագործաբար մոտենալ մտահղացմանը, ավելացնել դետալներ, օգտագործել արհեստական ռեսուրսի այլ հնարավորություններ: Զույգերը օգնում են միմյանց համատեղ աշխատանք ստեղծելու հարցում:

### Ակտիվություն II

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք համատեղ աշխատանք ներկայացնելու հմտություններ:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած

սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոճի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև՝** անհատական, զույգերով

**Ժամանակ.** 15 րոպե

**Ռեսուրս.** դասարանում ստեղծված աշխատանքներ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտները ներկայացնում են համատեղ աշխատանք, ինչպես են բաժանել դերերը զույգերի միջև, հայտնում են, թե ո՞ր նյութի և տեխնիկայի օգտագործմամբ են ստեղծել աշխատանքը, ի՞նչ հաջորդականությամբ էին աշխատում, որքանո՞վ են գոհ արդյունքից:

**Տերմիններ.** ապլիկացիա՝ պատկեր ստանալու միջոց, երբ մեկ ընդհանուր հիմքի վրա սոսնձվում են տարբեր նյութի և ձևի տարրեր:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** ապլիկացիայի միջոցով աշխատանք ստեղծելու, զույգերով աշխատելու և համատեղ աշխատանք ստեղծելու ունակություն:

## 8. Վրացի արվեստագետները Փարիզում

**Դասի նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք 20-րդ դարասկզբին Փարիզում գործունեություն ծավալող վրաց նկարիչների՝ գեղանկարիչ Լադո Գուդիաշվիլիի և քանդակագործ Իակոբ Նիկոլաձեի հետ: Աշակերտների մոտ զարգացնել գեղարվեստական աշխատանքի վերլուծության ունակությունը, ամրապնդենք զուգորդական մտածելակերպի հմտությունը:

**Ուս. պլան. V.3.** Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել իրականացնելիք աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով**:**

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոճի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքը քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա վերլուծություններ անել վրաց արվեստի և արվեստագետների մասին:**

● Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

### Դասի ընթացք

**Ակտիվություն I**

**Դասի նպատակ.** Աշակերտներին ծանոթացնենք 20-րդ դարասկզբին Փարիզում գործունեություն ծավալող վրացի նկարիչների մասին տեղեկություններին:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատելու ձև՝** ամբողջ դասարանը

**Ռեսուրս.** դասագիրք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Դասի սկզբում ուսուցիչը պատմում է աշակերտներին այն մասին, որ Փարիզը 20-րդ դարասկզբին եղել է համաշխարհային մշակույթի կենտրոն, և այստեղ տարբեր երկրներից ժամանած երիտասարդ ստեղծագործողներ էին հավաքվում, այդ թվում էին վրացի նկարիչներ Լադո Գուդիաշվիլին, Դավիթ Կակաբաձեն, Էլենե Ախվլեդիանին, Շալվա Քիքոձեն, Քեթևան Մաղալաշվիլին և այլոք:

Ապա ուսուցիչը պատմում է աշակերտներին այն, թե Լադո Գուդիաշվիլին և իր աշխատանքներն ինչպես հայտնվեցին Փարիզի ուշադրության կենտրոնում, և ի՞նչ հաջողությունների հասավ նա:

**Ակտիվություն II**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտը պետք է վերլուծի կոնկրետ գեղանկարչական աշխատանքները, դատողություններ անի դրանց մասին, պատասխանի ինտերակտիվ հարցերին:

**Ուս. պլան. V.3.** Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել իրականացնելիք աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով**:**

- Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ,

**Ուս. պլան.V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատությունը՝ մտքի, մտահղացման, տպավորություններով կիսվելու և ստացած գիտելիքների հիման վրա զրուցել օգտագործված մեթոդների մասին՝ սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատություններում համապատասխան տերմինաբանություն օգտագործելով:**

- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, ոլորտի, տպավորությունների, տրամադրության (ինչ տրամադրություն է ստեղծում նրա մոտ այս կամ այն գիծը, գույնը, ձևը և այլն) և արվեստի գործի հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս կիրառում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել սեփական կարծիքը քննարկման, բանավեճի ժամանակ, հարցնում և պատասխանում է հարցերին, խորհուրդ է տալիս և ընդունում է խորհուրդներ, գործածում է ճիշտ արտահայտություններ:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Ստուգիչ**

- Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:
- Ծանոթ է մի քանի հայտնի վրացի նկարչի և քանդակագործի աշխատանքներին և խոսում դրանց հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 15 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ուսումնասիրել դասի առաջին էջում ներկայացված աշխատանքները և պատասխանել ինտերակտիվ հարցերին:

**Պ.Ի.Հ.** 1 Աշակերտները նկարագրում են Լ. Գուդիաշվիլիի «Ցոցխալ ձուկը» և «Խնջույք սայլակով» նկարները:

2. Նկարագրելիս ուշադրությունը կենտրոնացնում են կերպարների հանդերձանքին, սայլակին, այդ դետալները աշակերտներին օգնում են նույնականացնել նկարներում պատկերած տեսարանները: Ենթադրաբար, աշակերտները նկարում պատկերված տեսարանները վերագրում են XIX դարավերջին և XX դարասկզբին:

3. Նմանատիպ հագուստներ այսօր կարելի է տեսնել վրացական պարի համերգներին

կամ թատրոնում, այս ժամանակաշրջանի թեմայի շուրջ բեմադրված ներկայացումներում: Ուսուցիչը պատմում է աշակերտներին, որ թիֆլիսցի կինտոներին և ղարաչոխելիներին (սև չուխայավոր) պատկանող հնագույն, այսպես կոչված քաղաքային հագուստը, այժմ պահվում է թանգարաններում: Հատուկ հրատարակություններում (ալբոմներում) գրանցված են հասարակության տարբեր խավի ներկայացուցիչների հագուստները: Դա անհրաժեշտ է, քանի որ տարազը մեր պատմության անբաժանելի մասն է: Այսպիսով, գրանցված պատմական տարազը անփոխարինելի օգնություն է ցուցաբերում թատրոնի և կինոյի ռեժիսորներին ու նկարիչներին պատմական ժանրի աշխատանքներ ստեղծելիս:

**Ակտիվություն III**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտին ծանոթացնել անվանի վրաց քանդակագործ Իակոբ Նիկոլաձեի և նրա հայտնի աշխատանքների հետ:

**Աշխատանքի ձև՝** ամբողջ դասարան

**Ժամանակ.** 5 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք

Դասի այս հատվածում ուսուցիչը աշակերտներին տեղեկություններ է հաղորդում Փարիզում գործունեություն ծավալող ևս մեկ վրացի քանդակագործ Իակոբ Նիկոլաձեի մասին, ով նույնպես XX դարասկզբին գտնվել է Փարիզում և հայտնի ֆրանսիացի քանդակագործ Ռոդենի արհեստանոցում է աշխատել, ուսուցիչն աշակերտներին տեղեկություններ է հաղորդում նաև Ի. Նիկոլաձեի կենսագրության և նրա կատարած աշխատանքների մասին:

**Ակտիվություն IV**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտը պետք է վերլուծի Իակոբ Նիկոլաձեի դասագրքում տրված աշխատանքները, դատողություններ անի դրանց մասին, պատասխանի ինտերակտիվ հարցերին:

**Ակտիվության արդյունք. Ուս. պլան V.3** Աշակերտը համադասարանցիների հետ համագործակցելով (զույգով, թիմով) պետք է կարողանա ծրագրել և իրագործել իրականացնելիք աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:

- Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և համատեղ աշխատանք, կիսվել կարծիքով, գաղափարներով, տպավորություններով և ստացած գիտելիքի հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում կիրառված միջոցների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքի մասին խոսելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս մյուսներին արտահայտել իրենց կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Ստուգիչ**

- Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:
- Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 15 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին դիտարկել դասի երկրորդ էջում ներկայացված

աշխատանքները և պատասխանել ինտերակտիվ հարցերին:

**Պ.Ի.Հ.** 1. Աշակերտները նկարագրում են Ի. Նիկոլաձեի ստեղծած Չախրուխաձեի դիմանկարը: Նկարագրելիս ուշադրությունը պետք է կենտրոնացնեն բանաստեղծի դեմքի արտահայտությանը, այն տպավորությանը, որը ստեղծվում է դեմքին նայելով:

2. Համաձայն դիմանկարի աշակերտները բնութագրելու են քանդակագործի կողմից ստեղծած բանաստեղծի գեղարվեստական կերպարը, տեսնելու են նրա մեջ ուժեղ, խելացի մարդուն բնորոշ հատկանիշները:

3. Աշակերտները պետք է նկարագրեն Իլիա Ճավճավաձեի գերեզմանի «Սգացող Վրաստան» հուշակոթողը՝ ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ կնոջ կերպարը Վրաստանի ընդհանրացված պատկերն է, իսկ նրա դիրքը սուգ, տխրություն և վիշտ է արտահայտում՝ համապատասխանելով հուշարձանի էությանը:

4. Հնարավոր է, որ աշակերտները Իլիա Ճավճավաձեի մահվան մասին ինտերակտիվ հարցին պատասխանելու համար տեղեկություններ չունենան: Այդ պատճառով ուսուցիչը պետք է պատմի նրա մահվան պատմությունը՝ Ծիծամուրիի ճանապարհին սպանության մասին:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** 1. Աշխատանքը նկարագրել-վերլուծելու ունակություն, 2. Դատողության և սեփական կարծիքը հիմնավորելու ունակություն, 3. Մյուսների կարծիքը լսելու և վիճարկելու ունակություն:

## 9. Աշնան բնանկար

**Դասի նպատակը.** Աշակերտի մոտ զարգացնել հիշողությամբ նկարելու ունակություն: Նաև՝ տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով տարբերվող ֆակտուրայի և նախընտրության, տպավորության, հույզերի և տարվա այս եղանակին բնորոշ գունային ներդաշնակությունը փոխանցելու ունակությունը: Աշակերտը պետք է կարողանա խոսել իր աշխատանքի, նրանում օգտագործված հնարքների մասին:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

- Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:

**Ուս. պլան V.3** Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների հետ համագործակցությամբ **(զույգ, թիմ)** ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով**:**

- Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել՝ սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

## Դասի ընթացքը

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակ.** Վարժություն. ստանալ տարբեր տեսակի ֆակտուրաներ, օգտագործելով տարբեր միջոցներ:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

● Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

**Ժամանակ.** 15 րոպե

**Աշխատանքի ձև.** Ամբողջ դասարանը և անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, ձևաչափ, ցանկացած նկարչական նյութ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը գրատախտակին գրում է «Աշուն» բառը և խնդրում աշակերտներին պատասխանել, թե ինչ են պատկերացնում այդ բառը հիշատակելիս: Ուսուցիչը գրատախտակին գրում է բոլոր այն բառերն ու երևույթները, որոնք թվարկել են աշակերտները: Այդ բառերի թվում հնարավոր է լինեն հակադիր գույներ (որոնք, իրոք, բնութագրում են աշունը), բնության երևույթները (անձրև, տերևաթափ) և այլն:

Այնուհետև ուսուցիչն ուշադրությունը կենտրոնացնում է հակադիր գույների վրա, որոնց գործածմամբ աշակերտները պետք է ստեղծեն աշնան բնանկար, օգտագործեն զանազան նյութեր, վրձնահարվածներ, ստեղծեն իրարից տարբերվող ֆակտուրաներ, փոխանցեն տրամադրություն:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին բացել դասագիրքը, ուշադրություն դարձնել գրքում ներկայացված նմուշներին: Նա խորհուրդ է տալիս աշակերտներին, ընտրել և նկարել բնանկարի այնպիսի մոտիվ, որի վրա պատկերված լինեն առջևի և հետևի պլանները: Ինչպես նաև՝ տարբեր մեթոդներով ստեղծել ֆակտուրա, որի համար աշակերտներին առաջարկում է կատարել զանազան ֆակտուրաներ ստեղծելու վարժություն՝ գործածելով ատամի խոզանակ, մեծ վրձին, սպունգ: Օրինակ՝ էսքիզ, որը ստեղծելու փորձ աշակերտներն արդեն ունեն: Դա կլինի յուրօրինակ նախապատրաստական վարժանք, որի շնորհիվ հետագայում կիրառելով այդ մեթոդները աշակերտները կստեղծեն ինքնուրույն աշխատանք՝ աշնան բնանկար:

### Ակտիվություն II

**Ակտիվության նպատակ.** Աշակերտը պետք է կարողանա հիշողությամբ նկարել աշնան բնանկար, փոխանցելով տարվա եղանակին բնորոշ գունեղությունը, ինչպես նաև աշխատանքի մեջ ստեղծել տարածության էֆեկտ և ֆակտուրա՝ օգտագործելով տարբեր միջոցներ:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

- Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ տարբեր նյութեր և տեխնիկա օգտագործելով:
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:

**Ուս. պլան V.3. Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների հետ համագործակցությամբ (զույգ, թիմ) ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

- Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 20 րոպե

**Ռեսուրս.** աշխատանքային տետր, ձևաչափ, ցանկացած նկարչական նյութ:

## Ակտիվության համառոտ նկարագիր

Աշակերտներն ինքնուրույն ստեղծում են աշնան բնանկար, նրանց խնդիրն է բնանկարի մեջ ստեղծել տարածության տպավորություն՝ օգտագործելով տարբեր մեթոդներ և զանազան ֆակտուրաներ:

## Ակտիվություն III. Շնորհանդես

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործված սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** անհատական

Աշխատանքն ավարտելուց հետո, աշակերտները կազմակերպում են շնորհանդես, խոսում իրենց աշխատանքների, աշխատանքում օգտագործած հնարքների մասին, փորձում են գնահատել սեփական և ընկերների գործերը:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափորոշիչներ.** 1. Հիշողությամբ նկարելու ունակություն (գունագեղություն, որը բնորոշ է այս եղանակին):

2. Աշխատանքի մեջ օգտագործված տարբեր մեթոդներով ստեղծված ձևաչափ (ֆակտուրա):

3. Տարածություն փոխանցելու հմտություն:

4. Պատկերներ և նրանց միջոցով փոխանցված տպավորություններ և տրամադրություն:

5. Շնորհանդես կազմակերպելու հմտություն:

## 10. Որտե՞ղ նստեցնենք փիսիկին

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել պատկերը նկարի հարթության վրա գիտակցաբար բաշխելու, ինչպես նաև տարբեր հնարքներով աշխատանքի մեջ գլխավորն առանձնացնելու, աշխատանքի կոմպոզիցիոն կառուցվածք ստեղծելու ունակությունները:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

- Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումն հնարավորինս լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

### Դասի ընթացքը

**Ակտիվություն I**

**Ներածական խոսք, հարց-պատասխան**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել դիտարկելու ունակությունը՝ պարզ կոմպոզիցիան նկարագրելու և վերլուծելու եղանակով:

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** ամբողջ դասարանով, անհատական

**Ռեսուրս.** դասագիրք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել գրքերը, ուշադրություն դարձնել այնտեղ պատկերված մի քանի կոմպոզիցիայի վրա և պատասխանել ինտերակտիվ հարցերին:

**Պ.Ի.Հ. 4.** 4-րդ հարցին պատասխանելիս աշակերտներն անպայման պետք է հիմնավորեն իրենց կարծիքները, թե ինչու են հավանում այս կամ այն կոմպոզիցիոն լուծումը:

**Ակտիվություն II՝**

**գործնական աշխատանք**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ փորձարկման եղանակով զարգացնել նկարի հարթության վրա պատկերը գիտակցաբար բաշխելու, ինչպես նաև տարբեր եղանակներով աշխատանքի մեջ գլխավորն առանձնացնելու, կոմպոզիցիոն աշխատանք ստեղծելու ունակություններն ու հմտությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝**

**աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

● Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** ձևաչափ, գունավոր թղթեր, մկրատ, սոսինձ, ցանկացած նկարչական նյութ:

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը հանձնարարություն է տալիս աշակերտներին: Նրանք նախօրոք պետք է մտածեն, թե ինչ պատկերներից և մարմիններից պետք է կազմված լինի իրենց կոմպոզիցիան: Գունավոր թղթից պետք է կտրեն մեկ, ամենագլխավոր պատկերը, նրա մի քանի տարբեր չափերի տարբերակները՝ ձևաչափի վրա տեղաշարժելու հնարավորությամբ: Այդ եղանակով ձևաչափի վրա պատկերի համապատասխան տեղը գտնեն, այնուհետև մյուս բոլոր պատկերները բաշխեն ցանկացած եղանակով (նկարեն, սոսնձեն) և այդ ճանապարհով ստեղծեն կոմպոզիցիա:

### Ակտիվություն III. Շնորհանդես

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 10 րոպե

### Ակտիվության համառոտ նկարագիր

Սեփական աշխատանքի շնորհանդեսի ժամանակ աշակերտները պատմում են, թե ինչպես գտան գլխավոր պատկերի համապատասխան տեղը ձևաչափի վրա, որ միջոցներով ստեղծեցին կոմպոզիցիայի մյուս պատկերները, ինչպիսի կոմպոզիցիա ստեղծեցին (համաչափ, անհամաչափ):

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ. 1.** Պատկերը նկարի հարթության վրա գիտակցաբար բաշխելու ունակություն, 2. Տարբեր հնարքներով աշխատանքի մեջ գլխավորն առանձնացնելու ունակություն, 3. Աշխատանքը կոմպոզիցիոն կերպով կառուցելու հմտություն-կարողություն, 4. Շնորհանդես ներկայացնելու ունակություններ:

**Տերմիններ՝** ֆակտուրա

**Գնահատման ձև.** ընթացիկ

## 11. Կենդանաբանական այգու բնակիչները

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել բնությունն և շրջակա միջավայրը դիտարկելու ունակությունը, արհեստական և

բնական նյութերի օգտագործելու, ուրվանկար կատարելու հմտությունը, զարգացնել հիշողությամբ և/կամ երևակայությամբ նկարելու ունակությունը: Ամրապնդել զույգի հետ աշխատելու ունակություն-կարողությունը:

## Դասի ընթացքը

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակը.** Ներածական խոսք, հարց ու պատասխան

**Ժամանակ.** 10 րոպե

**Աշխատանքի ձև.** ամբողջ դասարանով

**Ռեսուրս.** դասագիրք, էքսկուրսիայի ընթացքում արված ուրվանկարներ:

### Ակտիվության համառոտ նկարագիր

Դասի սկզբում ուսուցիչը զրուցում է այն վայրերի մասին, որտեղ աշակերտները կարող են տեսնել կենդանիներ և թռչուններ (օրինակ՝ անտառում, գյուղում, կենդանաբանական այգում): Հնարավոր է, որ նման վայրեր դասարանը էքսկուրսիա արդեն մեկնել է և կամ ծրագրում է իրականացնել ապագայում: Եվ եթե պատրաստվում են, ապա նման պարագայում նրանք պարտադիր պետք է իրենց հետ թերթիկներ (տետր, ծոցատետր) և մատիտ ունենան, ուր ուրվագծեն իրենց հետաքրքրող թռչնի կամ կենդանու պատկերը: Նկարիչները նույնպես հաճախ ուրվագծում են և ապա արվեստանոցում դրա օգնությամբ վերջնական/կատարյալ աշխատանքներ ստեղծում: Ուսուցիչը հաղորդում է այն մասին, որ ուրվանկարը շտապ է կատարվում և մարդկանց հնարավորություն է ընձեռում թղթի վրա ամրագրել այս կամ այն բնորոշ դետալը, նշել այն շարժումները կամ տարրերը, որոնք պիտանի են հետագա աշխատանքի համար: Աշակերտները հիշում են այն վայրերը, որտեղ տեսել են հետաքրքիր կենդանիներ և թռչուններ նաև՝ նշում, կատարել են, թե՞ ոչ դրանց ուրվանկարները:

**Ցուցում.** Ցանկալի է, որ նախքան դասն անցկացնելը ուսուցիչն էքսկուրսիայի ժամանակ հանձնարարի աշակերտներին կատարել ուրվագծումներ, որոնք կկիրառվեն դասի ընթացքում:

Աշակերտներն ուսուցչի խնդրանքով ծանոթանում են դասագրքում տրված մատնանշումներին/ցուցումներին և դրանց նախատեսմամբ ծրագրում աշխատանքը:

### Ակտիվություն II. Գործնական աշխատանք

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնել բնությունն և շրջակա միջավայրը դիտարկելու, արհեստական և բնական նյութերն օգտագործելու ունակությունները: Ամրապնդել զույգի հետ աշխատելու ունակություն-կարողությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

- Հանձնարարվածն առավել լավ կատարելու համար կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր, տեխնիկա:
- Զարգացնում է բազմատեսակ նյութեր և տեխնիկաներ (ավանդական, ոչ ավանդական) կիրառելու հնարքներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):
- Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ մանր կերտարվեստի նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու համար:

**Ուս. պլան V.3.** Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների հետ համագործակցությամբ **(զույգ, թիմ)** ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու համար:

- Համատեղ աշխատելիս (միջոցառման ծրագրում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:
- Համագործակցում է մյուսների հետ՝ ընդհանուր խնդիրը լուծելիս:
- Դիտարկման արդյունքներով և սեփական

փործով կիսվում է համադասարանցիների հետ:

● Ցուցաբերում է մյուսների հետ համագործակցության նախաձեռնություն, օգնում նրանց լուծել կոնկրետ խնդիրը:

**Աշխատանքի ձև.** զույգերով

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք, թղթեր, մատիտ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, ջրաման, մեծ ձևաչափ, սոսինձ, բնական և արհեստական նյութեր:

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը բաժանում է աշակերտներին զույգերի և հանձնարարություն տալիս նրանց: Յուրաքանչյուր աշակերտ պետք է նկարի թռչնի պատկերը բնօրինակից կատարված ուրվանկարի հիման վրա (գերադասելի է, որ ուրվանկարն արվի բնօրինակից, սակայն եթե աշակերտները չեն ունեցել այդ հնարավորությունը, ապա կարելի է օգտվել նաև լուսանկարներից կամ տեսանյութերից): Այնուհետև զուգընկերները պետք է միացնեն աշխատանքները և գունավոր ֆոների և շրջանակների միջոցով վերածեն այն համատեղ դեկորատիվ աշխատանքի:

### Ակտիվություն III. Շնորհանդես

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա զրուցել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Պ.Ի.Հ. 1.2.3.** Աշակերտները նկարագրում են բնանկարը, նշում են, որ բույսերը մի ուղղությամբ են թեքված, ինչը պարզ զգացնել է տալիս դիտողին քամու ուղղությունը: Ճապոնացի կանանց կերպարները ևս թեքված են գոտկատեղից, նրանց հագուստի փեշերը ծածանվում են, իսկ գլխարկները բռնել են ձեռքով, որպեսզի քամին չտանի: Նրանց դիրքը, շարժումը, ծածանվող հագուստը դիտողի մոտ ուժեղ քամու տպավորություն են ստեղծում: Նկարիչները հիմնականում կոր, թեք գծերի միջոցով են փոխանցում քամու սուրոցը:

4. Կերպարները ակտիվ շարժվում են Հալիկառնասի դամբարանի ֆրիզի (ծոփոր) վրա:

5. Թեսալոնիկեի տաճարի խճանկարը ստատիկ է:

**Գնահատման ձև.** ընթացիկ:

**Չափանիշներ.** Շրջակա միջավայրն ու բնության երևույթներն ուսումնասիրելու արդյունքում ստացած տպավորություններն արտացոլելու, աշխատանքին դինամիկա փոխանցելու,  շնորհանդես կազմակերպելու ունակություններ:

**Հանձնարարականներ.** Դասը սկսելուց անմիջապես հետո ուսուցիչը խնդրում է աշակերտներին պատկերացնել քամոտ եղանակ և մի քանի բառով նկարագրել, թե ինչպիսի՞ն է այդ ժամանակ շրջակա միջավայրը, բնությունը: Աշակերտները հերթով նկարագրում են, թե ինչպես են խշշում ծառերը, ճկվում ճյուղերը, գետնին թափվում պոկված տերևները: Պատկերացնելիս հնարավոր է, աշակերտներն օգտագործեն մարմնի պլաստիկան (օրինակ՝ ձեռքերի միջոցով մարմնավորեն քամուց խշշացող ծառի ճյուղերը, մոլեգնած ալիքը և այլն): Ցանկալի է, որ նրանք նկարագրեն նաև իրենց զգացմունքները, օրինակ՝ քամին զգզզում է մազերը, ծածանում է հագուստը, ձեռքից «պոկում է» առարկաները: Այսպիսով, մի քանի րոպե հատկացվում է քամոտ եղանակին բնորոշ տեսարան պատկերացնելու համար: Այդ ժամանակ աշակերտների մոտ ակտիվանում է երևակայությունը, նրանք մտաբերում են բնորոշ մանրամասներ և այլն: Զրույցի ժամանակ ուսուցիչն օգտագործում է տարբեր համեմատություններ, որպեսզի հնարավորին չափ լավ ներկայացնի, թե ինչպես է ամեն ինչ շարժվում քամու ժամանակ:

## 36. Ռիթմը նկարչության մեջ

**Դասի նպատակ.** Աշակերտին ծանոթացնենք նկարչության մեջ ռիթմ

հասկացությանը: Մշակենք կոնկրետ աշխատանքը վերլուծելու, այն քննարկելու, սեփական աշխատանքում ռիթմիկ կոմպոզիցիա կառուցելու ունակություններ:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

**Ստուգիչ**

- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

**Ստուգիչ**

- Յանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:
- Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:
- Յամակարգչային նկարչական ծրագրում ստեղծում է ռիթմիկ, համաչափ, անհամաչափ աշխատանքներ, աշխատանքում առանձնացնում է գլխավորը, կիրառում է հակադիր գույներ, ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, ձևաչափ, ներկեր, վրձին, ջրաման, անձեռոցիկ:

Այլ ռազմավարության դեպքում (տես ստորև ներկայացված հանձնարարականը)՝ համակարգչային նկարչական ծրագիր:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** կոմպոզիցիայի մեջ

ռիթմիկությունը տեսնելու և վերլուծելու, ռիթմիկ կոմպոզիցիա կառուցելու ունակություններ:

**Հանձնարարականներ.** Գործնական աշխատանքը ցանկալի է կատարել համակարգչի միջոցով: Աշակերտը նկարչական ծրագրի միջոցով պետք է ստեղծի ռիթմիկ, համաչափ կամ անհամաչափ աշխատանք: Հնարավոր է, օգտագործի արդեն սովորած սկզբունքները, օրինակ՝ օգտագործի հակադիր գույներ, ընտրի նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, պատկերը գիտակցված բաշխի նկարի հարթության վրա:

## 37. Նկար խճաքարերի վրա

**Դասի նպատակ.** աշակերտի մոտ մշակենք դեկորատիվ աշխատանք ստեղծելու ունակություն, արթնացնենք երևակայությունը, մշակենք հիշողությամբ դիմանկար նկարելու և դիմանկարի մեջ դիմախաղն արտացոլելու ունակությունը:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

**Ստուգիչ**

- Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:
- Զարգացնում է բազմատեսակ նյութի և տեխնիկայի (ավանդական, ոչ ավանդական) կիրառման միջոցներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):
- Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին

արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, տափակ խճաքարեր, գուաշի ներկեր, վրձին, ջրաման, անձեռոցիկ:

**Ցուցում.** յուրաքանչյուր աշակերտ կարող է պատրաստել մի քանի աշխատանք, այնուհետև դասարանում կազմակերպել ցուցահանդես:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** բնական և արհեստական ռեսուրսի կիրառմամբ դիմանկար ստեղծելու, դիմանկարում դիմախաղն արտացոլելու, դեկորատիվ աշխատանք ստեղծելու ունակություններ:

## 38. Ամենն իմ հայրենիքն է...

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ ամրապնդենք հայրենի մշակույթի, պատմության կարևորագույն իրադարձությունների իմացություն, զարգացնենք վրացական նյութական մշակույթի մասին առկա տեղեկություններն ինքնուրույն ձեռք բերելու հմտություն-կարողություն, առաջացնենք հետաքրքրություն Վրաստանի պատմական տարածքների անցյալի և ներկայի նկատմամբ:

**Ուս. պլան V.3 Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների հետ համագործակցությամբ (զույգ, թիմ) ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:

● Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիր լուծելիս:

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

● Ցուցաբերում է մյուսների հետ համագործակցության նախաձեռնություն, օգնում նրանց լուծել կոնկրետ խնդիր:

● Վիրտուալ խմբերում կիսվում է իր թվայնացած աշխատանքով:

● Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Արդյունքը. Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

**Ստուգիչ**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետական և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

• Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Ստուգիչ**

● Խոսում է վրաց քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին, և արտահայտում իր դիրքորոշումը:

**Պ.Ի.Հ.** 1. Նախքան քրիստոնեությունը Ճղոնդիդին հեթանոսների կուռքն էր: Ըստ ավանդության, տեղացի բնակչությունը այդ կուռքին երեխաներ է զոհաբերել: Հին վրացերենով նահատակը մարտվիլի էր կոչվում, հենց այստեղ զոհաբերվածների՝ մարտվիլիների (նահատակների) անունով է կառուցվել առաջին եկեղեցին: Գյուղի ու տաճարի անվանումը նույնպես այդ ավանդույթի հետ է կապված:

2. Ճղոնդիդելին (այսինքն Ճղոնդիդիի եպիսկոպոսը) Դավիթ Շինարարի հոգևոր վարդապետն էր և նրա մտերիմ համախոհը: Երկրի շենացման հետ կապված բոլոր միջոցառումները կապված են Ճղոնդիդելու անվան հետ: Թագավորը նրան դարձրեց մծիգնոբարթուխուցեսի և հռչակեց վեզիր: Ճղոնդիդիի եպիսկոպոսը ամենաազդեցիկ քահանայապետն էր Արևմտյան Վրաստանում:

**Պ.Ի.Հ.** Սամեգրելոյի իշխանները՝ Դադիանիները, բարեկամական կապի մեջ էին ֆրանսիացի մեծատոհմիկների՝ Մյուրատների հետ: Հենց այդ կապի արդյունքում Դադիանիների պալատում հայտնվել են եվրոպական տարբեր երկրների թանկարժեք մասունքներ, որոնք նրանք որպես ընծա են ստացել:

**Աշխատանքի ձև.** անհատական: Առաջադրանքը, ըստ ուսուցչի որոշման, հնարավոր է կատարել զույգերով կամ խմբերում:

**Ռեսուրս.** դասագիրք, եկեղեցական օրացույց, Սուրբ Հայրերի խրատական պատգամներ, Զուգդիդի պետական պատմաճարտարապետական թանգարանի նյութեր (Սրբերի մասին տեղեկություններ ձեռք բերելու համար):

**Ցուցում.** Դասն անցկացնելուց հետո ցանկալի է, որ աշակերտները այցելեն Դադիանիների պալատ և Մարտվիլիի մենաստան:

**Գնահատման ձև.** ընթացիկ:

**Չափանիշներ.** Վրացական մշակույթի հուշարձանների մասին տեղեկատվություն որոնելու և վերամշակելու հմտություն-կարողություն, վերլուծական մտածողության ունակություն, ինտեգրում այլ առարկաներից անցած նյութերի հետ:

**Հանձնարարականներ.** Ուսուցիչը կարող է ընտրել դասն անցկացնելու - վարելու այլ ռազմավարություն և հանձնարարի աշակերտներին ձեռք բերել տեղեկություններ՝ Սամեգրելոյի պատմական հուշարձանների, քրիստոնեական սրբությունների, Դադիանիների պալատի մասին, որը հաջորդ դասի ընթացքում պետք է ներկայացնեն դասարանի առջև: Տեղեկություն ձեռք բերելու նպատակով նրանք կարող են օգտվել համացանցից: Առաջադրանքը կատարելու համար ուսուցիչն աշակերտներին առաջարկում է համապատասխան գրականություն: Սրբերի մասին տեղեկություն հնարավոր է ձեռք բերել եկեղեցական օրացույցներում, Սուրբ Հայրերի քարոզներում և պատգամներում: Նույն նպատակով կարելի է օգտագործել նաև թանգարանային նյութեր (գրացուցակներ, բուկլետներ):

## 39. Համամասնություն

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք առարկաների համամասնությունը դիտարկելու և այն գործնականում արտացոլելու ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Լույս-ստվերի, արտացոլքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումն առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր հնարքներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքի մեջ առանձնացնում է գլխավորը,

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, սև կամ գունավոր մատիտներ, ռետին:

**Տերմիններ՝** համամասնությունը ստեղծվում է առարկայի հատվածների չափերի հարաբերակցությամբ:

**Ցուցում.** Կարևոր է, որ աշակերտը որոշ չափով պահպանի նկարելու օբյեկտի իրական համամասնությունը: Աշխատանքի գործընթացում ուսուցիչը հետևում է աշխատանքի ընթացքին և ցուցումներ է տալիս նրան:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** առարկաները, միջավայրը ուսումնասիրելու ունակություն: Առարկաների համամասնությունը գործնականում պատկերելու ունակություն:

## 40. Տարբեր չափերի առարկաներ

**Դասի նպատակ.** աշակերտի մոտ զարգացնենք առարկաները դիտարկելու, դրանց չափերը իրար փոխհարաբերակցելու ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:

● Լույս-ստվերի, արտացոլքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:

● Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումն առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

● Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, ետևի տեսարանը՝ ոչ հստակ):

● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, սև և գունավոր մատիտներ, ռետին

**Ցուցում.** ուսուցիչը նախապատրաստած պետք է ունենա տարբեր չափսերի առարկաներ նատյուրմորտ հավաքելու համար: Դասարանական առաջադրանքը կատարելիս ուսուցիչը որոշակի հրահանգներ է տալիս աշակերտներին, որ միմյանց հարաբերակցեն նատյուրմորտի առարկաների չափերը:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Տրված առարկաները (նատյուրմորտ) դիտարկելու ունակություն, դիտարկումների արդյունքները գործնականում պատկերելու ունակություն: Շնորհանդես ներկայացնելու ունակություն:

## 41. Նորեն կմեծանան...

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք արվեստի ստեղծագործությունը ըմբռնելու, վերլուծելու և նրա հիմնական միտքը ընկալելու ունակություն, սկզբնաղբյուրի (գրական տեքստի) հետ նրա կապը վերլուծելու հմտություն-կարողություն:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

**Արդյունք. Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները՝ պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստում:**

**Ստուգիչ**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին**

**Ստուգիչ**

● Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին, և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և խոսում է դրանց հանդեպ իր վերաբերմունքի մասին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, ալբոմներ, վրացի քանդակագործների աշխատանքների լուսանկարներ:

**Պ.Ի.Ճ. 1.** Աշակերտներն իրենց բառերով պետք է փոխանցեն այս քառատողի բովանդակությունը: Զուգահեռ ուսուցիչը պետք է հաղորդի տեղեկություններ այն մասին, թե ի՞նչ է և որտե՞ղ է գտնվում Ալգեթին, ի՞նչ նկատի ունի հեղինակը «գայլաձագեր» ասելով:

2. Աշակերտները պետք է անեն

դատողություններ այս քառատողի բովանդակության շուրջ: Ուսուցիչը նրանց դատողությունները պետք է ուղղի դեպի հայրենիքը պաշտպանելու արդար պայքարը: Նա կարող է աշակերտներին հիշեցնել ևս մեկ քառատող՝ «Այլոց հայրենիքը չենք խլի, Մերն էլ ոչ մեկին չենք զիջի, Այլապես այնպես կվարվենք, Որ թշնամու ծիծաղ կշարժենք»:

1. Ցանկալի է, որ ուսուցիչը պատրաստ ունենա Մերաբ Բերձենիշվիլիի այլ ստեղծագործությունների լուսանկարներ ևս և ներկայացնի աշակերտներին՝ խնդրելով բնութագրել դրանք:

2. Դասի վերջին հատվածը պետք է հատկացվի Էլգուջա Ամաշուկելիի «Կտրիճն ու վագրը» արձանին: Ուսուցիչը աշակերտներին պատմում է, որ արձանը կանգնած է Մցխեթայից Թբիլիսի մուտք գործելու ճանապարհին, այնուհետև խնդրում է նրանց նկարագրել այն (ուշադրությունը պետք է կենտրոնացնել դինամիկայի վրա): Վերջում նա անպայման պետք է ասի աշակերտներին, որ արձանը ստեղծված է «Կտրիճն ու վագրը» վրացական բալլադի մոտիվներով: Ուսուցիչն աշակերտներին անպայման պետք է պատմի բալլադի բովանդակությունը, կարող է դուրս գրել նաև որոշ հատվածներ և ընթերցել դրանք բանաստեղծության տեսքով: Այնուհետև աշակերտներին պետք է տրվի հատուկ շրջանակում ներկայացված առաջադրանքը:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Արվեստի նմուշի վերլուծության, գրական սկզբնաղբյուրի հետ կապն ըմբռնելու ունակություններ:

**Հանձնարարականներ.** դասն անցկացնելու մեկ այլ ռազմավարություն կարող է հանդիսանալ աշակերտների կողմից այս երկու վրացի քանդակագործների աշխատանքների ձեռք բերումն ու դրանց շուրջ փոքր էսսե գրելը:

## 42. Նկար և տպավորություն

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք իր համար ցանկալի թեմայի վերաբերյալ ստեղծագործություն ստեղծելու գործնական հմտություն-կարողություն, ամրապնդենք թեմային համապատասխան նկարչական տարրեր ընտրելու և օգտագործելու, զարգացնենք ստեղծագործությունը ներկայացնելու և դրա շուրջ դատողություններ անելու ունակություններ:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունը արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, ետևի տեսարանը՝ աղոտ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական**

**և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործված սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի վերաբերյալ:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Պ.Ի.Հ.** 1. Դասագրքում ներկայացրած բոլոր նկարները ստեղծված են մայրության թեմայով: Օգյուստ Ռենուարի նկարի վրա պատկերված է ինտերիերում՝ երեխան գիրկը երիտասարդ, ժպտացող կին: Նրանց հանդերձանքը, ինտերիերի դետալները նման են առօրյա կյանքից դետալներին:

Պիկասոյի նկարի վրա նույնպես մայր և որդի են պատկերված, սակայն գեղարվեստական լեզուն այստեղ ավելի պայմանական է, ձևերը՝ պարզեցված, գործողությունն ասես ոչ թե սովորական, այլ ուրիշ առեղծվածային միջավայրում է կատարվում:

Պաուլ Կլեեի ստեղծագործությունը պետք է երկար դիտել հասկանալու համար, որ այստեղ նույնպես մոր և որդու ասես քանդած, մասնատված հատվածներ են պատկերված: Այս պատկերը ամենապայմանականն է տվյալ թեմայով ստեղծված այլ ստեղծագործությունների համեմատ:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, ցանկացած նկարչական նյութ

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Մտահղացումն իրականացնելու գործնական հմտություն-կարողություն, մտահղացմանը համապատասխան նկարչական միջոցներ, սկզբունքներ և տարրեր ընտրելու, շնորհանդես կազմակերպելու ունակություններ:

## 43. Ծուռ հայելի

**Դասի նպատակ.** աշակերտի մոտ զարգացնենք մարմնի կազմվածքը նկարելիս մարդու հիմնական համամասնությունները դիտարկելու և դրանք գործնականում կիրառելու ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումն առավել լավ փոխանցելու նպատակով:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

● Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
● Տարածությունն արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ աղոտ):
● Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
● Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան V.3 Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների համագործակցությամբ (զույգ, թիմ) ծրագրել և իրագործել աշխատանքը ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) տարբեր կարծիքներով, գաղափարներով կիսվում է համադասարանցիների հետ, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:
● Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:
● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

**Դասընթաց**

**Ակտիվություն I**

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք մարդու համամասնությունը դիտարկելու, այն խախտելու հետևանքով առաջացած արդյունքը գիտակցելու ունակություն:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

**Աշխատանքի ձև.** անհատական
**Ժամանակ.** 10 րոպե
**Ռեսուրս.** դասագիրք

### Ակտիվության համառոտ նկարագիր

Դասի սկզբում ուսուցիչն աշակերտներին հարց է հղում. «Ո՞րն է հայելու նշանակությունը»: Աշակերտներն, իհարկե պատասխանում են, որ հայելու շնորհիվ մարդն իր պատկերն է տեսնում: Ուսուցիչը տալիս է հերթական հարցը. «Եթե հայելին անհրաժեշտ է իրական պատկերը տեսնելու համար, ապա ինչպե՞ս եք կարծում, ինչո՞ւ է անհրաժեշտ ծուռ հայելին»: Աշակերտները ենթադրություն

են անում, որ ծուռ հայելու մեջ արտացոլվող պատկերը զվարճալի է: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին, որ դիտարկեն դասագրքում տրված ծուռ հայելիները և որոշեն, թե ինչո՞ւ են զվարճալի հայելու մեջ արտացոլված պատկերները: Աշակերտները նկարագրում են երկու արտացոլանքները:

**Պ.Ի.Հ.** Առաջին պատկերը ձգված է լայնությամբ և գլուխը շատ փոքր է: Երկրորդը՝ երկարացված է և ունի բարակ ոտքեր, իսկ գլուխը՝ տձև է:

Ծուռ հայելու մեջ անդրադարձված պատկերները նկարագրելուց հետո, ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ի՞նչ տպավորություն են թողնում այդ պատկերները: Աշակերտները պատասխանում են, որ այս տիպի պատկերները զվարճալի են: Ուսուցիչը խնդրում է աշակերտներին կոնկրետացնել, թե ի՞նչն է առաջացնում նման տպավորություն: Աշակերտների պատասխաններից երևում է, որ պատկերը զվարճալի է դառնում, երբ նրա մասերն իրար չեն հարաբերակցում, խեղաթյուրվում են: Ուսուցիչն աշակերտներին հիշեցնում է քիչ առաջ սովորած հասկացությունը՝ համամասնություն (մասերի փոխհարաբերակցություն) և դասարանը գալիս է ընդհանուր եզրակացության, որ համամասնության չափազանցված խախտումը խեղաթյուրում, զվարճալի է դարձնում պատկերը:

Այնուհետև ուսուցիչը ծանոթացնում է դասի առաջին հատվածին և աշակերտները խոսում են ծուռ հայելիների սենյակի մասին: Հնարավոր է, նրանցից ոմանք եղել են այնտեղ: Տպավորությունների անմիջական փոխանցմանը հատկացվում է 2-3 րոպե:

### Ակտիվություն II

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք արվեստի ստեղծագործություններում մարդու կազմվածքի համամասնությունը ամրագրելու գործնական ունակություն:

**Ուս. պլան V.3. Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների համագործակցությամբ (զույգ, թիմ) ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:
- Համագործակցում է մյուսների հետ՝ ընդհանուր խնդիրը լուծելիս:
- Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

**Աշխատանքի ձև.** անհատական, զույգերով

***Ժամանակ.*** 10 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, քանոն, ստվարաթուղթ, մատիտ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Հաջորդ ակտիվությունը հատկացված է արվեստի պատմության մեջ մարդու կազմվածքի համամասնության ուսումնասիրությանն ու նշանակությանը: Ուսուցիչը խնդրում է ծանոթանալ դասագրքում ներկայացված հին հունական արձաններին և դրանց համամասնությունների էսքիզներին, ինչպես նաև Վերածննդի դարաշրջանի հայտնի նկարիչներ՝ Լեոնարդո դա Վինչիի և Ալբրեխտ Դյուրերի էսքիզներին, որոնց վրա պատկերված է մարդու մարմնի

տարբեր մասերի փոխհարաբերակցությունը: Ակտիվության էությունն այն է, որ աշակերտի համար ակնհայտ է դառնում, թե որքան մեծ նշանակություն էին տալիս մարմնի համամասնությանը մեծ արվեստագետները և ինչպես էին արտահայտում դա իրենց աշխատանքներում: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին անձամբ անցկացնել փորձ: Իրենց ունեցած տեսողական նյութերից զույգերի բաժանված աշակերտներն ընտրում են մարդու՝ իրենց համար ցանկալի (իրենց կարծիքով գեղեցիկ, նազելի) պատկեր: Քանոնի կամ ստվարաթղթի կտորի օգնությամբ նրանք նախ պետք է չափեն գլխի երկարությունը, իսկ հետո որոշեն, թե քանի անգամ է տեղավորվում այդ չափն ամբողջ կազմվածքի երկարության և լայնության վրա: Աշակերտները տվյալները պետք է նշեն թղթի վրա: Փորձի ընթացքում ստացած արդյունքները աշակերտներին կօգնեն մարդու կազմվածքը պատկերելիս, եթե նրանք պահպանեն նման համամասնություն: Ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտներին առաջարկի նմանատիպ տնային առաջադրանք:

### Ակտիվություն III

**Ակտիվության նպատակ.** Աշակերտների մոտ մշակենք դիմանկար նկարելիս հիմնական համամասնությունները պահպանելու ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Լույս-ստվերի, արտացոլքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու նպատակով
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ժամանակ.** 25 րոպե

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, նկարչական ցանկացած նյութ

### Ակտիվության համառոտ նկարագիր

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին դիտարկել երկու կերպարի՝ իրենց հասակակից աղջկա և տղայի դիմանկարներ, որոնք

ներկայացված են դասագրքում: «Ի՞նչ տարբերություն կա այս պատկերների միջև», - հարցնում է ուսուցիչը: Աշակերտները պատասխանում են, որ մի դեպքում համամասնությունը պահպանված է, իսկ երկրորդ դեպքում՝ խախտված: Դասարանական առաջադրանքը, որը և առաջարկում է ուսուցիչն աշակերտներին, հենց ընկերոջ երկու դիմանկար նկարելն է՝ ճիշտ և խախտված համամասնությամբ:

Աշակերտները կատարում են առաջադրանքը, որից հետո դասարանում կազմակերպվում է հապճեպ ստեղծված զվարճալի դիմանկարների շնորհանդես: Ուսուցիչը հետևում է շնորհանդեսի ընթացքին: Աշակերտները ներկայացնում են աշխատանքներն ու թվարկում, թե որ համամասնությունն են փոխել աշխատանքում: Ցանկալի է, որպեսզի ուսուցիչը բացատրի աշակերտներին, որ նման միջոցի նկարիչները հաճախ դիմում են կատակային դիմանկարներ՝ ծաղրանկարներ ստեղծելիս: Դասն ավարտվում է ուրախ նոտայով: Ուսուցիչը տնային առաջադրանք է հանձնարարում՝ պատկերել մարդու կազմվածքը պահպանելով հիմնական համամասնությունը:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** դիտարկելու, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու ունակություններ

## 44. Մարտական տեսարաններ

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք տարբեր մշակույթներում միևնույն թեմայով ստեղծված աշխատանքները համեմատելու ունակություն, ամրապնդենք ստեղծագործությունների միջոցով տեղեկություն ստանալու հմտություն-կարողություն: Զարգացնենք տեսական գիտելիքը գործնականում հեշտությամբ օգտագործելու ունակություն (մարտական տեսարան Վրաստանի պատմության որևէ դրվագից):

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու նպատակով
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունն արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի**

**արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Արդյունք. Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

**Ստուգիչ**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների արվեստի նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, թուղթ, ցանկացած նկարչական նյութ

**Պ.Ի.Հ.** Հալիկառնասի դամբարանի ռելիեֆի վրա պատկերված է ամազոնուհիների մարտը: Նրանց դիրքը կտրուկ է, հագուստը՝ ծածանվող, նրանցից մեկը ձեռքին վահան ունի: Կերպարների դիրքը, դինամիկան ընդգծում են պայքարի թեժությունը:

**Պ.Ի.Հ.** Ալեքսանդր Մակեդոնացին մետաղյա զրահով է, Դարեհ III-ը գլխին սաղավարտ է դրել, իսկ նրա մարտիկները երկար նիզակներ են բռնել:

**Պ.Ի.Հ.** Վերեշչագինի նկարի վրա սարերի մեջ փռված դաշտավայրում պատկերված են պատերազմական գործողություններ: Զինվորների խումբը կրակում է հակառակորդներին: Դաշտը պատված է վիրավորներով և սպանվածներով:

Զինվորների հագուստի և զենքի համաձայն, այս նկարը պատկանում է XIX դարին:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Գեղարվեստական ստեղծագործությունը դիտարկելու, տարբեր մշակույթներում միևնույն թեմայով ստեղծված աշխատանքները համեմատելու ունակություններ: Տեսողական տեղեկություն ձեռք բերելու ունակություն: Ձեռք բերած գիտելիքը գործնականում կիրառելու ունակություն:

## 45. Նվեր մայրիկին

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք դեկորատիվ աշխատանք ստեղծելու ունակություն, արթնացնենք երևակայությունը, ինչպես նաև, մշակենք աշխատանքը հաջորդաբար դասդասելու հմտություն-կարողությունը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր

հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

● Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ մանր կերտարվեստի նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու նպատակով:

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիք՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, ձևաչափեր, ներկեր, վրձին, սպունգ, մկրատ, սոսինձ, գունավոր թղթեր:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** դեկորատիվ աշխատանքների ստեղծում, երևակայություն, աշխատանքի դասդասում:

## 46. Դասարանային ցուցատախտակ

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք սեփական ստեղծագործությունը ներկայացնելու ունակություն, ամրապնդենք նյութական մշակույթի հուշարձանների մասին տեղեկություն ձեռք բերելու և ներկայացնելու հմտություն-կարողություն:

**Ուս. պլան V.3.** Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների համագործակցությամբ **(զույգ, թիմ)** ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:

**Ստուգիչ**

● Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:

● Համագործակցում է մյուսների հետ՝ ընդհանուր խնդիրը լուծելիս:

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

● Ցուցաբերում է մյուսների հետ համագործակցության նախաձեռնություն, օգնում նրանց լուծել կոնկրետ խնդիրը:

● Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի**

**արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիք՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** զույգերով կամ խմբերում

**Ռեսուրս.** դասագիրք, փայտե կամ պլաստմասսայե ցուցատախտակ, լուսանկարչական նյութեր, էսքիզներ և նկարներ, սխեմաներ, տեղեկատվական տեքստ, ֆլոմաստերներ, ձևաչափեր, կպչուն ժապավեն, մկրատ:

**Ցուցում.** Պատրաստի նյութի առկայության դեպքում դասին հատկացվում է 45 րոպե: Այլ դեպքերում, դասի ընթացքում ծրագրվում են դասարանային ցուցատախտակի ստեղծման համար պարտադիր միջոցառումներ: Աշակերտները բաժանվում են զույգերի կամ խմբերի: Աշխատանքը բաժանվում է երկու կամ ավելի դասաժամի:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Պատմական հուշարձանների և արվեստագետների մասին տեղեկատվություն ձեռք բերելու և ներկայացնելու ունակություն, էքսպոզիցիան ներկայացնելու մշակույթ:

## 47. Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն՝ Զատիկ

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ ամրապնդենք վրացական կրոնական և մշակութային ավանդույթների գիտելիքներ, զարգացնենք գեղարվեստական ստեղծագործությունը դիտարկելու ունակությունը, գործնականում ավանդական տարրերը գիտակցաբար կիրառելու հմտություն-կարողությունները:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցված բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունն արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:

● Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

● Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները՝ պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստում:**

**Ստուգիչ**

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

• Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների մշակույթի նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Ստուգիչ**

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարչի և քանդակագործի աշխատանք և խոսում դրանց հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

## Դասի ընթացքը

### Ակտիվություն I

**Ակտիվության նպատակ.** Աշակերտի մոտ մշակենք պատմական և մշակութային ավանդույթները գիտակցելու, ամրագրելու, գեղարվեստական ստեղծագործությունը պատմական և մշակութային համատեքստում ըմբռնելու ունակություններ:

**Չափանիշներ.** տեսական և տեսողական նյութի համադրման, ցանկալի թեմայի շուրջ տեղեկություններ ձեռք բերելու, շնորհանդես ներկայացնելու ունակություններ:

## 58. Ցուցասրահ

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք արվեստի ստեղծագործությունն ըմբռնելու, վերլուծելու ունակություն, ամրապնդենք կերպարվեստի հիմնական տարրերը՝ կոմպոզիցիան, գույնը, գիծը և այլն, վերլուծելու և տպավորությունների հետ կապելու հմտություն:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների,

տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

**Արդյունք. Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները՝ պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստում:**

**Ստուգիչ**

- Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական) մասին:
- Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:
- Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք

**Պ.Ի.Հ.** Ցուցասրահներում արված լուսանկարներում պատկերված են գեղարվեստական ստեղծագործությունների հետ աշակերտների հասակակիցների «փոխհարաբերվելու» պահերը:

**Պ.Ի.Հ.** Աշակերտներն անվանում են ամենատպավորիչ ստեղծագործությունները և նկարագրում այդ տպավորությանը բնորոշ նկարչական տարրերը:

**Պ.Ի.Հ.** Մարկ Շագալի նկարի վրա ներկայացրած է կրկեսի հարապարակը: Նկարում օգտագործված են կարմիր, կանաչ, կապույտ գույներ: Նկարի տրամադրությունը համապատասխանում է կրկեսային մթնոլորտին: Բենջամեն Քելիի նկարի վրա անձրևոտ եղանակին անձրևանոցի տակ թաքնված տղամարդ է պատկերված: Անձրևանոցը նրան կիսով չափ ծածկում է և դիտողի մոտ ստեղծվում է տպավորություն, որ նա միայնակ է:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** Վերլուծական մտածողության ունակություն, կերպարվեստի հիմնական տարրերը վերլուծելու և դրանք տպավորությունների հետ կապելու հմտություն:

## 59. Մարդ, գործունեություն, շրջակա միջավայր

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք արվեստի նմուշները դիտարկելու միջոցով տարբեր սոցիալական շերտի ներկայացուցիչներին ճանաչելու ունակություն, ամրապնդենք նկարի վրա պատկերված շրջակա միջավայրը և մանրամասները կերպարների հետ կապելու ունակություններ:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

**Արդյունք. Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

**Ստուգիչ**

- Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

• Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Ստուգիչ**

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** Դասագիրք, Փիրոսմանիի աշխատանքների ռեպրոդուկցիաները (վերարտադրանկարներ) (տես. ստորև):

**Պ.Ի.Հ.** Ֆրանսուա Բուշեի նկարի վրա պատկերված է թանկարժեք զգեստով երիտասարդ կին՝ Մարկիզա դը Պոմպադուրը: Նա կանգնած է պալատի այգում գտնվող վիթխարի արձանի կողքին: Նրբագեղ կինը ազնվականության (արիստոկրատիայի) ներկայացուցիչ է: Ժան Ֆրանսուա Միլլեի մի նկարի վրա պարզունակ զգեստով, գոգնոցով՝ գյուղացի կինը երկարապոչ ավելով սենյակն է ավլում: Նրա տեսքը, հագուստը և գործունեությունը ակնհայտ մատնանշում են, որ ցածր սոցիալական շերտի ներկայացուցիչ է: Միլլեի երկրորդ նկարում դաշտում միմյանց են հանդիպում պարզունակ հագուստով կին և տղամարդ: Նկարը այդպես էլ կոչվում է՝ «Հանդիպում դաշտում»: Նրանց հագուստը, աշխատանքային գործիքները, զամբյուղը, սայլը մատնանշում են այն, որ նկարի վրա գյուղացիներ են պատկերված:

Վան Դեյքի նկարի վրա մեծատոհմիկներին հատուկ թանկարժեք զգեստով Ուիլյամ Օռլեանցին և Մարիա Ստյուարտն են պատկերած: Նրանց հանդերձանքը փայլուն կերպասից և ասեղնագործ փարչայից (ոսկեթել կամ արծաթաթել գործվածք) է պատրաստված: Հագուստը, կոշիկները, ինտերիերի մանրամասները (օրինակ՝ սյունն) մատնանշում են ազնվականության մասին:

**Ցուցում.** ցանկալի է, որ ուսուցիչը նախապատրաստի Փիրոսմանիի երեք նկարի ռեպրոդուկցիա՝ «Փողոց ավլողը», «Վառելափայտ վաճառողը» և «Կով կթող գյուղացի կինը»: Աշակերտները ծանոթանում են նկարներին, նկարագրում և հիմնավորում, թե ինչ տեղեկություն է նրանց հաղորդում տվյալ աշխատանքը:

**Գնահատման ձև.** Ընթացիկ

**Չափանիշներ.** Արվեստի ստեղծագործություններն ուսումնասիրելու և այն վերլուծելու, տարբեր սոցիալական շերտի ներկայացուցիչներին ճանաչելու ունակություններ՝ միջավայրը և ուտիլիտար նշանակության մանրամասները դիտարկելու միջոցով:

## 60. Աշխատում ենք կավով

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք կավով դյուրաթեք ձևեր ստեղծելու կարողություն, խորացնենք դեկորատիվ և կիրառական առարկաներ ստեղծելու ունակություններ, մշակենք տարբեր նյութերով դեկորատիվ աշխատանք ստեղծելու հմտություն:

**Արդյունք. Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

● Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ պլաստիկե նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու համար:

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, կավ, գուաշի ներկեր, վրձին, ջրաման, անձեռոցիկներ:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** կավով աշխատելու հմտություն, փորձարկումներ ծանոթ նյութերով, ստեղծագործական մոտեցում:

## 61. Ակվարիում

**Դասի նպատակ.** Աշակերտի մոտ զարգացնենք թղթե պլաստիկով և ապլիկացիայի միջոցով դեկորատիվ առարկա ստեղծելու ունակություն, ամրապնդենք տարբեր միջոցներով ֆակտուրա ստանալու ունակություն-կարողությունները:

**Արդյունք. Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարը իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

● Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ մանր կերտարվեստի նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու համար:

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Ուս. պլան V.3 Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների համագործակցությամբ (զույգ, թիմ) ծրագրել և իրագործել աշխատանքը՝ ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:**

**Ստուգիչ**

● Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ կայացնում ընդհանուր որոշումներ:

● Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

● Ցուցաբերում է մյուսների հետ համագործակցության նախաձեռնություն, օգնում նրանց լուծել կոնկրետ խնդիրը:

● Վիրտուալ խմբերում կիսվում է իր թվայնացված աշխատանքով:

● Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքները քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Աշխատանքի ձև.** անհատական, զույգերով

**Ռեսուրս.** դասագիրք, ձևաչափ, գունավոր թղթեր, մկրատ, ջրաներկ կամ գուաշ, վրձին, ջրաման, սոսինձ:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** մտահղացմանը համապատասխան գույներն ընտրելու ունակություններ, դեկորատիվ աշխատանք ստեղծելու հմտություն:

## 62. Վրաստանի տեսարանները

**Դասի նպատակ.** աշակերտի մոտ ամրապնդենք արվեստի ստեղծագործությունները դիտարկելու, բնութագրելու և վերլուծելու ունակություններ, զարգացնենք բնանկար նկարելու գործնական հմտություն:

**Արդյունք. Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի համար հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածությունն արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):

● Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

**Ստուգիչ**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

**Ստուգիչ**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

**Ստուգիչ**

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին, և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Ռեսուրս.** դասագիրք, ցանկացած նկարչական նյութ, թուղթ:

**Գնահատման ձև.** ընթացիկ

**Չափանիշներ.** վերլուծական մտածողության, համեմատական բնութագրման, գործնական աշխատանք ստեղծելու ունակություններ՝ տարբեր գեղարվեստական միջոցների, սկզբունքների և տարրերի կիրառմամբ:

## Նախագիծ. դպրոցի բակ

**Նպատակ.** Աշակերտների մոտ մշակենք հիմնախնդիրը որոշելու և միմյանց հետ համագործակցության ճանապարհով այն լուծելու և կատարելիք աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու ունակություն:

**Արդյունք. Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

**Ստուգիչ**

● Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝

օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

● Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ պլաստիկե նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու նպատակով:

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

● Զարգացնում է բազմատեսակ տեխնիկայի կիրառման ուղիներ՝ շրջակայքում առկա առանձնահատուկ ֆակտուրայի նմանակում/պատրանք ստեղծելու համար:

**Նախագծի ընթացքը**

1. Բնական նյութերի (տերև, ծաղիկ, ցախ, քար և այլն) կիրառմամբ ինքներս գեղեցկացնենք մեր դպրոցի բակը (իրավիճակի վերլուծություն և նպատակ), մտածենք, թե ինչպիսի պատկերներով զարդարենք յուրաքանչյուր անկյուն (օրինակ՝ բակի ձախ անկյունում տերևներից ստեղծենք թիթեռ, բակի կենտրոնում՝ քարերից ձուկ և այլն), քանի որ բակի այդ հատվածները շատ մերկ են և տհաճ տպավորություն են ստեղծում:

2. Խնդիրներ՝ կոնկրետ քայլեր (1. նախ ուսումնասիրենք բակը, թե որ հատվածներին է պետք հետևել առաջին հերթին, 2. նկարենք պատկերներ և մտածենք, թե այդ հատվածում ո՞ր պատկերն ենք պատկերելու և՝ ո՞րը՝ մյուս հատվածում, 3. յուրաքանչյուր կոմպոզիցիա ստեղծելու համար ի՞նչ նյութ ենք օգտագործելու):

3. Իրականացման ուղիներ. գործընթաց, որը պատասխանում է հետևյալ հարցերին՝ ինչպե՞ս, ո՞վ (բաշխենք ֆունկցիաները, թե ով ինչ աշխատանք է կատարելու):

4. Բյուջե. այն անհրաժեշտ ռեսուրսների ցանկը, որոնց օգնությամբ պետք է իրագործվի նախագիծը: (Հավաքենք այն նյութերը, որոնք անհրաժեշտ են այս կամ այն պատկերը, կոմպոզիցիան ստեղծելու համար, օրինակ՝ քարեր, ճյուղեր և այլն):

5. Արդյունքներ. յուրաքանչյուր խնդիր լուծելուց հետո կստանանք կոնկրետ արդյունքներ: (Ինչպե՞ս իրականացրեցինք առաջին խնդիրը, երկրորդը, ի՞նչը չենք կարողացել նախատեսել, ի՞նչն է լավ ստացվել):

**Գնահատում.** նախագիծը պետք է գնահատվի այն չափանիշներով, որոնք նախորոք կմշակվեն համատեղ (ուսուցչի և դասընկերների հետ):

## Ամփոփիչ դաս 1

**(Դասն անցկացվում է առաջին գլխի վերջում)**

**Նպատակ.** գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: Ստուգել գործնական հմտությունների մշակման մակարդակը:

**Գնահատում.** 1. Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: 2. Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: 3. Ստուգել գործնական հմտությունների մշակման մակարդակը:

**Գնահատման մեթոդ.** թեստավորում, գործնական աշխատանք:

**Ակտիվություն և ժամանակի կազմակերպում.** 1. Տեսողական և բառային թեստեր՝ 20 րոպե, 2. Գործնական աշխատանք՝ 25 րոպե:

**Ռեսուրս.** աշխատանքային տետր, ձևաչափ, ներկեր, վրձիններ, անձեռոցիկներ:

**Աշխատանքի ձև.** անհատական

**Արդյունք.**

**Ուս. պլան.V.1. Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու համար:**

● Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:

● Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք, մտահղացումը առավել լավ փոխանցելու համար:

● Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:

• Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:

• Տարածությունն արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):

• Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

• Յանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

• Զարգացնում է բազմատեսակ նյութեր և տեխնիկաներ (ավանդական, ոչ ավանդական) կիրառելու հնարքներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

• Զարգացնում է տարբեր նյութեր (բնական, արհեստական) կիրառելու ուղիներ՝ պլաստիկե նմուշներ, պարզ կոմպոզիցիաներ և կառուցվածքներ ստեղծելու նպատակով:

• Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

• Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

• Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

• Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

• Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

• Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետական և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Յայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

• Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշի մասին:

• Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Պատասխաններ.**

**1.** ա) Հին դարաշրջան – 1, 2,

բ) Նոր դարաշրջան – 3, 4.

**2.** Կոմպոզիցիա, սիմետրիա, պրոֆեսիոնալ (արհեստավարժ), ատրիբուտ՝ աշակերտը սեփական բառերով, հստակ պետք է բացատրի այս տերմինները:

**3. I** գլխի ամփոփիչ դասի թեստի պատասխաններ.

1. Կախեթի, 2. Բոդբե, 3. Սիմետրիա, 4. Պենելոպե, 5. Հոմերոս, 6. Ալազանի, 7. Ոդիսական, 8. Տարածություն, 9. Գծանկարչություն 10. Էմբլեմա, 11. Կոմպոզիցիա:

## Ամփոփիչ դաս 2

**(դասն անցկացվում է երկրորդ գլխի վերջում)**

**Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: Ստուգել գործնական հմտությունների մշակման մակարդակը:

**Գնահատում.** 1. Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: 2.Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: 3.Ստուգել գործնական հմտությունների մշակման մակարդակը:

**Գնահատման մեթոդ.** թեստավորում, գործնական աշխատանք:

**Ակտիվություն և ժամանակի կազմակերպում.** 1. Տեսողական և բառային թեստեր՝ 20 րոպե, 2. Գործնական աշխատանք՝ 25 րոպե:

**Ռեսուրսներ.** աշխատանքային տետր, ձևաչափ, ներկեր, վրձիններ, անձեռոցիկներ: Աշխատանքի ձև. անհատական

**Արդյունք.**

**Ուս. պլան. V.2. Աշակերտը պետք է կարողանա նպատակաուղղված ընտրել և կիրառել տարբեր նյութեր և տեխնիկաներ՝ սեփական մտահղացումն ու գաղափարն իրագործելու համար:**

● Հանձնարարությունն առավել լավ կատարելու համար, կիրառում է տարբեր հնարքներ, անցկացնում փորձեր՝ օգտագործելով տարբեր նյութեր և տեխնիկա:

● Զարգացնում է բազմատեսակ նյութեր և տեխնիկաներ (ավանդական, ոչ ավանդական) կիրառելու հնարքներ՝ տարբեր ժանրի աշխատանքներ ստեղծելու համար (դիմանկար, նատյուրմորտ, բնանկար, կենցաղային ժանր):

● Ստեղծում է դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշներ՝ բազմատեսակ նյութեր և տեխնիկա օգտագործելով:

**Ուս. պլան V.3** Աշակերտը պետք է կարողանա համադասարանցիների համագործակցությամբ (զույգ, թիմ) ծրագրել և իրագործել աշխատանքը ստեղծագործական և կազմակերպչական խնդիրը լուծելու նպատակով:

● Համատեղ աշխատելիս (միջոցառման պլանավորում/իրականացում, զույգերով/խմբերում աշխատանքի ստեղծում) կիսվում է համադասարանցիների հետ տարբեր կարծիքներով, գաղափարներով, նրանց հետ միասին կայացնում ընդհանուր որոշումներ:

● Համագործակցում է մյուսների հետ ընդհանուր խնդիրը լուծելիս:

● Դիտարկման արդյունքներով և սեփական փորձով կիսվում է համադասարանցիների հետ:

● Ցուցաբերում է մյուսների հետ համագործակցության նախաձեռնություն, օգնում նրանց լուծել կոնկրետ խնդիր:

● Վիրտուալ խմբերում կիսվում է իր թվայնացված աշխատանքով:

● Յուրաքանչյուր տիպի ակտիվություն կատարելիս պահպանում է սահմանված ժամանակը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետական և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

• Խոսում է, թե ինչպես է արտացոլվում միևնույն իրադարձությունը տարբեր երկրների նմուշներում (օրինակ՝ տոն, պատմական փաստ և այլն):

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին**

● Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշի մասին:

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

2. 3-րդ կոմպոզիցիան բազմապատկեր է:

3. ա) Արևմուտք (Եվրոպա) – 2, 4, 5, 6, բ) Արևելք (Ճապոնիա, Չինաստան) – 1, 3, 7, 8

4. ա) Եգիպտոս – 4, բ)Միջագետք – 2, գ) Չինաստան – 3, դ) Հին Հունաստան – 1

5. **II գլխի ամփոփիչ դասի թեստի պատասխաններ.**

1. Ռոդեն, 2. Ալավերդի, 3. Կվիրիկե, 4. Նիկոլաձե, 5. Արարողակարգ, 6. Դիմախաղ, 7. Ֆակտուրա, 8. Ուտիվա, 9. Լուկիանե, 10. Պատրանք, 11. Կիսանդրի, 12. Դեկորատիվ:

## Ամփոփիչ դաս 3

**(Դասն անցկացվում է երրորդ գլխի վերջում)**

**Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը:

**Գնահատում.** 1. Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: 2.Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: 3. Տեսողական նյութի և տեսական գիտելիքի միջև ամրապնդել ճիշտ, գիտակցված կապը: 4. Ստուգել գործնական հմտությունների մշակման մակարդակը (կոմիքս նկարելու ունակություն):

**Գնահատման մեթոդ.** թեստավորում

**Ակտիվություն և ժամանակի կազմակեր-պում.** 1. Գործնական թեստ՝ 15 րոպե, 2. Տեսողական և բառային թեստեր (1 թեստ՝ 5 րոպե, 2 թեստ՝ 5 րոպե, 3 թեստ՝ 5 րոպե, 4 թեստ՝ 5 րոպե) 2. Ամփոփիչ դասի թեստ՝ 10 րոպե:

**Ռեսուրս.** դասագիրք, ուսուցչի ձեռնարկ

**Աշխատանքի ձև.** անհատական

**Արդյունք. Ուս. պլան.V.1.**
**Աշակերտը, հիմնվելով սեփական հետաքրքրությունների և փորձի վրա, պետք է կարողանա նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերն ու սկզբունքները՝ աշխատանքում մտահղացումը, գաղափարը, տրամադրությունը, հույզերը (էմոցիաները) և տպավորությունները փոխանցելու նպատակով:**

**Ստուգիչ**

- Տարբեր վրձնահարվածներով և էֆեկտներով արտահայտում է իր տրամադրությունը:
- Օգտագործում է տարբեր ձևի և հաստության գծեր, ուրվագծեր և շտրիխներ:
- Կիրառում է հակադիր գույներ և գույնի գրադացիա (աստիճանավորում):
- Լույս-ստվերի, արտացոլանքի և ընկած ստվերի միջոցով փորձում է արտահայտել առարկաների ծավալը:
- Ընտրում է նկարի հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ մտահղացումն առավել լավ փոխանցելու համար:
- Պատկերը գիտակցաբար բաշխում է նկարի հարթության վրա:
- Բացահայտում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիքը՝ կիրառելով առջևի և հետևի տեսարանները:
- Տարածություն արտահայտելու համար օգտագործում է կիսատոներ (առջևի տեսարանը՝ պարզ, հետևի տեսարանը՝ ոչ հստակ):
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ:
- Տարբեր եղանակներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Տարբեր գեղարվեստական եղանակներով աշխատանքում փոխանցում է դինամիկան և ստատիկան (պատկերների շարժում, քամի):
- Փոխանցում է առարկայի ընդհանուր համամասնությունը:

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

- Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:
- Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:
- Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:
- Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

- Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):
- Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետական և այլն):
- Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին

(կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին:**

● Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Թեստային վարժությունների պատասխաններ.**

1. Աշակերտները նկարում են ծաղրաշար գունավոր ֆոների վրա:
2. Աշակերտները բնութագրում են երեք դիմանկարի վրա պատկերված մարդկանց:
3. Իրենց բառերով նկարագրում են հետևյալ տեղանունները՝ 4. 1, 3 – Սամեգրելո, 2, 4 – Կախեթի, 5. – Ֆրանսիա, 2 – Վրաստան, 3 – Անգլիա, 4 – Իտալիա:
7. **III գլխի ամփոփիչ դասի թեստի պատասխաններ.**

1. Ռիթմ, 2. Սենսու, 3. Պիզա, 4.Շուրջառ, 5. Համայնապատկեր, 6. Դինամիկա, 7. Սամուրայ, 8. Մասունք, 9. Ֆունկցիա, 10. Ջափարիձե, 11. Կամպանիլե, 12. Ռեպրոդուքցիա:

**Ցուցում.** Հնարավոր է, ամփոփիչ թեստն աշակերտները կատարեն տանը: Ինքնուրույն կատարելիք առաջադրանքը նրանց հնարավորություն է ընձեռում ինքնագնահատման ճանապարհով անձամբ որոշեն սեփական գիտելիքի աստիճանը և կրկնեն այն տերմինները կամ անծանոթ բառերը, որոնք դժվարացել են հիշել առաջադրանքը կատարելիս: Հաջորդ դասին ուսուցիչը ստուգում է նրանց կողմից կատարած առաջադրանքը:

## Ամփոփիչ դաս 4

**(Դասն անցկացվում է չորրորդ գլխի վերջում)**

**Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը:

**Գնահատում.** 1. Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: 2.Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: 3. Տեսողական նյութի և տեսական գիտելիքի միջև ամրապնդել ճիշտ, գիտակցված կապը:

**Գնահատման մեթոդ.** թեստավորում

**Ակտիվության և ժամանակի կազմակերպում.** 1. Տեսողական և բառային թեստեր՝ 25 րոպե (1 թեստ՝ 15 րոպե, 2 թեստ՝ 5 րոպե, 3 թեստ՝ 5 րոպե) 2. Ամփոփիչ դասի թեստ՝ 20 րոպե, պատասխանների ստուգում՝ 5 րոպե:

**Ռեսուրս.** դասագիրք, Ուսուցչի ձեռնարկ

**Աշխատանքի ձև.** անհատական

**Արդյունք.**

**Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և

բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետական և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին**

● Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին, և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և հայտնում սեփական վերաբերմունքը դրանց մասին:

**Վարժությունների պատասխաններ**

**Նպատակ՝ ս**տուգել աշակերտի կողմից տեսական և գործնական գիտելիքը յուրացնելու աստիճանը:

1. Առաջադրանքները աշակերտները կատարում են ինքնուրույն:

2. 1. Մ. Բերձենիշվիլի, 2. Է.Ամաշուկելի, 3. Ի.Նիկոլաձե

3. 1. Պ.Պիկասո, 2 . Փիրոսմանի, 3. Ա.Մատիս,

4. Վառլա

4. **IV գլխի ամփոփիչ դասի թեստի պատասխաններ**

1. Աբխազիա, 2. Նոստալգիա 3. Ինտերպրետացիա, 4. Վառլա, 5. Դոլմեն, 6. Մոքվի, 7. Բերձենիշվիլի, 8. Ստատիկա, 9. Դիմախաղ, 10. Գառ, 11. Մականուն:

## Ամփոփիչ դաս 5

**(Դասն անցկացվում է հինգերորդ գլխի վերջում)**

**Նպատակ.** Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը:

**Գնահատում.** 1. Գնահատել անցած նյութի յուրացման աստիճանը: 2.Ստուգել նոր տերմինների յուրացման մակարդակը: 3. Տեսողական նյութի և տեսական գիտելիքի միջև հաստատել ճիշտ, գիտակցված կապ:

**Գնահատման մեթոդ.** թեստավորում

**Ակտիվություն և ժամանակի կազմակեր-պում.** 1. Տեսողական և բառային թեստեր՝ 20 րոպե, 2. Ամփոփիչ դասի թեստ՝ 20 րոպե, 3. Պատասխանների ստուգում՝ 5 րոպե:

**Ռեսուրս.** դասագիրք, Ուսուցչի ձեռնարկ

**Աշխատանքի ձև.** անհատական

**Արդյունք. Ուս. պլան. V.4. Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել անհատական և միասնական աշխատանք: Փոխանցել կարծիքը, մտահղացումը, տպավորությունները և ստացած գիտելիքների հիման վրա խոսել սեփական, համադասարանցիների կամ հայտնի արվեստագետների աշխատանքներում օգտագործված մեթոդների մասին՝ գործածելով համապատասխան տերմինաբանություն:**

● Անհատական, միասնական աշխատանք ներկայացնելիս խոսում է մտահղացման, գաղափարի, ինչպես նաև օգտագործած

սկզբունքների, տարրերի, նյութի, տեխնիկայի և այլնի մասին:

● Խոսում է աշխատանքի բովանդակության, ժանրի, բնագավառի, տպավորությունների, տրամադրության (այս կամ այն գիծը, գույնը և ձևը ինչ տրամադրություն է ստեղծում) և արվեստի ստեղծագործության հանդեպ սեփական վերաբերմունքի մասին:

● Աշխատանքը ներկայացնելիս գործածում է համապատասխան տերմիններ:

● Լսում է, թույլ է տալիս ուրիշներին արտահայտել կարծիքներ՝ քննարկման և բանավեճի ընթացքում, հարցեր է հղում և պատասխանում, խորհուրդ է տալիս և ընդունում, օգտագործում է պատշաճ արտահայտություններ:

● Աշխատանքը ներկայացնելիս աջակցում և խրախուսում է համադասարանցիներին:

**Ուս. պլան.V.5. Աշակերտը պետք է կարողանա կապել կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերի նմուշները պատմական, կրոնական, մշակութային և սոցիալական համատեքստի հետ:**

• Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշներն ըստ հիմնական բնութագրիչների (ճարտարապետական հուշարձաններ, մանրամասներ, զարդանախշ և այլն):

• Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառութային նշանակության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետական և այլն):

• Դատողություններ է անում արվեստի տարբեր ճյուղերի (կերպարվեստի, դեկորատիվ) յուրաքանչյուր նմուշի նշանակության մասին (կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

• Հայտնում է իր կարծիքը, թե որ սոցիալական շերտին էր պատկանում կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:

**Ուս. պլան.V.6. Աշակերտը պետք է կարողանա դատողություններ անել վրացական արվեստի և արվեստագետների մասին**

● Խոսում է վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշի մասին:

● Դատողություններ է անում նյութական մշակույթի իր տեսած հուշարձանների մասին և արտահայտում իր դիրքորոշումը:

● Ճանաչում է մի քանի հայտնի վրացի նկարիչների և քանդակագործների աշխատանքներ և խոսում դրանց հանդեպ իր վերաբերմունքի մասին:

Թեստային վարժության պատասխաններ.

1. 1 – գ, 2 – ա, 3 – գ, 4 – ա, 5 – բ:

2. 1 – գ, 2 – ա, 3 – բ, 4 – դ, 5 – դ, 6 – գ:

3. 1 – բ, 2 – գ, 3 – բ, 4 – ա:

4. 1 – դ, 2– ա, 3 – գ, 4 –ա, 5 – բ, 6 – դ, 7 – գ, 8 – ա:

5. **V գլխի ամփոփիչ դասի թեստի պատասխաններ.**

1. Գրադացիա, 2. Ակվարել, 3. Հուշագիր, 4. Ասոցիացիա, 5. Շտրիխ, 6. Բրուտագործություն, 7. Ամաշուկելի, 8. Ռոջևան, 9. Ռամզես, 10. Կիսանդրի, 11. Քարայր, 12. Ընկած, 13. Արիստոկրատիա:

## Տերմիններ

**Ազնվականություն (արիստոկրատիա)** – արտոնյալ խավի ներկայացուցիչներ, ազնվականներ:

**Ասոցիացիա** – մի երևույթից կամ առարկայից ծագած իմաստային կապ՝ մեկ այլ երևույթի կամ առարկայի հետ:

**Ատլետ** – մարզիկ, ըմբիշ Հին Հունաստանում, որը հետևում էր աթլետիկային, ըմբշամարտին:

**Բրուտագործություն** – կավե ամանների արտադրություն:

**Դեկորատիվ** – գեղատեսիլ, նկարագեղ:

**Դետալ** – ամբողջի հատվածը:

**Դինամիկա** – շարժման, փոփոխության, զարգացման ընթացք:

**Էկոլոգիա** – գիտություն, որն ուսումնասիրում է մարդու գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վերափոխումն ու բնապահպանական խնդիրները:

**Էմբլեմա** – առարկա կամ պատկեր, օգտագործված՝որպես որևէ գաղափարի խորհրդանիշ:

**Իլյուզիա (պատրանք)** – որևէ բանի խեղաթյուրված, սխալ ընկալում:

**Ինտերիեր** – շենքի ներքին ճարտարապետությունն ու գեղարվեստական ձևավորումը:

**Ինտերպրետացիա (մեկնաբանություն)** – որևէ գեղարվեստական երկի յուրահատուկ, ստեղծագործական կատարում: Որևէ իրադարձության յուրովի, այլակերպված քննարկում:

**Խճանկար (մոզաիկա)** – ցեմենտի շերտին կողք-կողքի կպցրած ապակու, մանրախճի, արծնապակու և գույնզգույն այլ կտորտանքներով պատրաստած պատկեր, զարդանկար:

**Կամպանիլե** – միջնադարի և Վերածննդի դարաշրջանի Իտալիայի ճարտարապետության մեջ, վանքին կից կառուցված, սովորաբար ուղղանկյունաձև (երբեմն կլոր) զանգակատուն:

**Կիսանդրի կամ կիսարձան** – մարդու դեմքը, ինչպես նաև մինչև կուրծքը կամ գոտկատեղը պատկերող քանդակ:

**Կոլորիտ** – գույների ներդաշնակություն, համադասություն, նկարի մեջ ամբողջականության ստեղծում:

**Կվարթի (շուրջառ)** – ամբողջապես գործած, առանց կարերի երկար հագուստ:

**Կուռք** – մարդակերպ կամ կենդանակերպ արձան, որին հեթանոսները պաշտում էին որպես աստված:

**Համամասնություն** – ստեղծվում է առարկայի հատվածների չափերի հարաբերակցությամբ:

**Հարմոնիա (ներդաշնակություն)** – նկարի հատվածների, գույների համաձայնեցվածություն:

**Մարտանկարչություն** – ճակատամարտի տեսարանները պատկերող նկարչություն:

**Մեմորիալ (հուշարձան, կոթող)** – որևէ մեկի հիշատակին կանգնեցված հուշարձան:

**Մոնոլիթ (միաքար)** – ամբողջական քարի ժայռակտոր, ամբողջական քարից տաշած առարկա:

**Նստավայր** – կառավարության, պետության առաջնորդի կամ այլ բարձրաստիճան այրի կացավայր:

**Շտրիխ** – գիծ, որը ստեղծվում է ձեռքի մի շարժումով և համարվում նկարի հիմնական տարրերից մեկը:

**Պանորամա (համայնապատկեր)** – մերձակա տարածքի փռված, լայն և ընդարձակ տեսարան, սովորաբար վերևից:

**Ռելիկվիա (մասունք)** – կրոնական պաշտամունքի առարկա, որն ունի հրաշագործ ուժ:

**Ռիտուալ** – կրոնական բնույթի ծես-սովորույթների ամբողջություն:

**Սամուրայ** – բառացի թարգմանվում է՝ ծառայել: Ռազմական ֆեոդալական խավ Ճապոնիայում, նույն է, ինչ ասպետը:

**Տերակոտա** – թրծուն գունավոր կավ:

**Տերմին** – բառ, որն օգտագործում են որևէ հատուկ հասկացություն կամ առարկա մատնանշելու համար:

**Տրապեզ** – եկեղեցում, խորանի կենտրոնում տեղադրված քառանկյուն սեղան, սեղանատուն:

**Քարայր** – բնական քարանձավ:

**Ֆունկցիա** – նշանակություն, դեր, պարտականություն:

## I գլխի ամփոփիչ դասի թեստ

1. Վրաստանի անկյուններից մեկը:

2. Վայր, ուր հուղարկավորված է Սուրբ Նինոն:

3. Կոմպոզիցիա կառուցելու մեթոդներից մեկը:

4. Ոդիսևսի հավատարիմ կինը:

5. «Ոդիսականի» հեղինակը:

6. Գետ Կախեթիում:

7. Հոմերոսի ստեղծագործությունը:

8. Այն, ինչ նկարիչները նկարի վրա փոխանցում են մարմինները կրճատելու մեթոդով:

9. Կերպարվեստի ճյուղերից մեկը:

10. Առարկա կամ պատկեր, օգտագործված որպես ինչ-որ գաղափարի խորհրդանիշ:

11. Բառ, որը նշանակում է ստեղծում, կապակցում:

## I գլուխ

գիտելիքների սնդուկ

**Ի՞նչ գիտեի**

**Ի՞նչ սովորեցի**

**Ի՞նչ եմ ուզում իմանալ**

## II գլխի ամփոփիչ դասի թեստ

1. Ֆրանսիացի քանդակագործ, ում փարիզյան արվեստանոցում աշխատում էր Իակոբ Նիկոլաձեն:

2. Միջնադարի ամենաբարձր տաճարը Վրաստանում:

3. Թագավոր, որը XI դարասկզբին կառուցել է այսօրվա Ալավերդիի տաճարը:

4. Վրաց քանդակագործ, Իլիա Ճավճավաձեի շիրմի մահարձանի հեղինակը:

5. Կրոնական բնույթի ադաթ-սովորույթների ամբողջություն:

6. Դեմքին դաջված հույզ, արտահայտություն:

7. Մակերևույթի առանձնահատկություն, դրա մշակման բնույթը:

8. Կլոր կոթով հովհար Չինաստանում:

9. Դավիթ Գարեջիի սանը:

10. Մի բանի սխալ, աղավաղված ըմբռնումը:

11. Դիմաքանդակ, որը պատկերում է մարդու միայն գլուխը և ուսերը:

12. Նույնն է, ինչ նրբագեղ, գեղազարդային:

**II գլուխ**

գիտելիքների սնդուկ

**Ի՞նչ գիտեի**

**Ի՞նչ սովորեցի**

**Ի՞նչ եմ ուզում իմանալ**

գիտելիքների սնդուկ

**Ի՞նչ գիտեի**

**Ի՞նչ սովորեցի**

**Ի՞նչ եմ ուզում իմանալ**

## IV գլխի ամփոփիչ դասի թեստ

1.Վրաստանի հնագույն անկյուն:

2. Թախիծ, որը պայմանավորված է հայրենիք վերադառնալու անկարողությամբ:

3. Որևէ գեղարվեստական ստեղծագործության յուրովի կատարում:

4. Փարիզում գործող վրացի նկարիչ:

5. Հնագույն մարդու կողմից մեծ քարերով կառուցված դամբարան:

6. Վայր Աբխազիայում, որը դարերի ընթացքում ծառայել է որպես վրացական մշակույթի օջախ:

7. Վրացի քանդակագործ:

8. Կայունություն:

9. Դեմքի արտահայտություն, դեմքին դաջված հույզ:

10. Փրկչի զոհաբերության խորհրդանիշ:

11. Հորինած ազգանուն կամ անուն, որը կրում են որոշ գրողներ, լրագրողներ և այլոք:

**IV գլուխ**

գիտելիքների սնդուկ

**Ի՞նչ գիտեի**

**Ի՞նչ սովորեցի**

**Ի՞նչ եմ ուզում իմանալ**

**V գլուխ**

գիտելիքների սնդուկ

**Ի՞նչ գիտեի**

**Ի՞նչ սովորեցի**

**Ի՞նչ եմ ուզում իմանալ**

Այս ձեռնարկը վաճառելու փաստ բացահայտելու դեպքում խնդրում ենք, զանգահարել թեժ գծի հետևյալ հեռախոսահամարին ՝ (+995 32) 2 200 200

Դասագրքի/սերիայի մասին հավելյալ տեղեկությունների ծանոթացեք
https.//www.facebook.com /PublishingHouseklio
կայք-էջում: https://www.facebook.com/PublishingHouseklio

ISBN 978-9941-415-29-6







**Ֆինանսավորվել է «Աշակերտներին դասագրքերով ապահովման ծրագրի» շրջանակներում**